

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Հայաստան) և Սինգապուրի Հանրապետությունը (այսուհետ՝ Սինգապուր) (այսուհետ՝ միասին Կողմեր),

ընդունելով Կողմերի միջև երկարամյա և ամուր բարեկամության ամրապնդման կարևորությունը,

ճանաչելով Կողմերի փոխադարձ ցանկությունը՝ հաստատելու համապարփակ տնտեսական գործընկերություն, որը ներառում է ապրանքների և ծառայությունների առևտուրը, ներդրումները և առևտրին առնչվող ոլորտները,

վերահաստատելով Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից և Սինգապուրի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը՝ ստորագրված Երևանում, Հայաստան, 2019 թվականի հոկտեմբերի մեկին,

ցանկանալով Կողմերի միջև ծառայությունների առևտրի և ներդրումների ոլորտում վերացնել խոչընդոտները, նվազեցնել բիզնես ծախսերը, բարձրացնել տնտեսական արդյունավետությունը և ստեղծել բարենպաստ պայմաններ ավելի լայն տնտեսական համագործակցության և փոխշահավետության համար,

ընդունելով, որ ներդրումների խրախուսումը և փոխադարձ պաշտպանությունը կնպաստեն գործարար նախաձեռնությունների խթանմանը և Կողմերի բարեկեցության բարձրացմանը, և

ցանկանալով ստեղծել բարենպաստ պայմաններ երկկողմ տնտեսական ավելի լայն համագործակցության համար, և մասնավորապես՝ մի պետության ներդրողների կողմից մյուս պետության տարածքում ներդրումների համար՝ հիմնված հավասարության և փոխշահավետության սկզբունքների վրա.

համաձայնեցին հետևյալ մասին.

ԳԼՈՒԽ 1 ՆԱԽՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հոդված 1.1 Ազատ առևտրի գոտու ստեղծումը

Կողմերը սույնով ստեղծում են ազատ առևտրի գոտի՝ ԾԱԳՀ-ի V հոդվածին համապատասխան:

Հոդված 1.2 Նպատակները

Սույն Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և դյուրացնել Կողմերի միջև ծառայությունների առևտուրը և ներդրումները՝ սույն Համաձայնագրի համաձայն:

Հոդված 1.3 Ընդհանուր կիրառություն ունեցող սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով, այլ բան նախատեսված չլինելու դեպքում՝

«**կառավարման կենտրոնական մակարդակ**» նշանակում է կառավարման ազգային մակարդակ.

«**օր**» նշանակում է օրացուցային օր.

«**ձեռնարկություն**» նշանակում է կիրառելի օրենքի շրջանակներում հիմնադրված կամ կազմավորված, շահույթ հետապնդող կամ չհետապնդող և մասնավոր կամ պետական սեփականություն հանդիսացող կամ պետության կողմից վերահսկվող կազմակերպություն՝ ներառյալ կորպորացիան, վստահության վրա հիմնված ընկերակցությունը, գործընկերությունը, անհատ ձեռնարկատիրությունը, համատեղ ձեռնարկությունը, ասոցիացիան կամ համանման կազմակերպությունը, և ներառում է ձեռնարկության մասնաճյուղը.

«**Կողմի ձեռնարկություն**» նշանակում է Կողմի օրենսդրությամբ կազմավորված կամ հիմնադրված ձեռնարկություն կամ Կողմի տարածքում գտնվող և այնտեղ գործարար գործունեություն իրականացնող մասնաճյուղ.

«**ԾԱԳՀ**» նշանակում է ԱՀԿ համաձայնագրի 1 «Բ» հավելվածում նշված՝ *Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիր*.

«**ԱՄՀ**» նշանակում է *Արժույթի միջազգային հիմնադրամ*.

«**միջոց**» նշանակում է Կողմի կողմից իրականացվող ցանկացած միջոց՝ օրենքի, կարգավորման, կանոնի, ընթացակարգի, որոշման, վարչական ակտի կամ ցանկացած այլ ձևով, և ներառում է միջոցներ, որոնք ձեռնարկվել են՝

ա) կենտրոնական կամ տեղական կառավարման մարմինների ու

- իշխանությունների կողմից, և
բ) ոչ պետական մարմինների կողմից՝ կենտրոնական կամ տեղական կառավարման մարմինների կամ իշխանությունների կողմից պատվիրակված լիազորություններն իրականացնելիս.

«քաղաքացի» նշանակում է՝

- ա) Սինգապուրի դեպքում՝ Սինգապուրի քաղաքացի՝ Սինգապուրի Սահմանադրության և ներպետական օրենքների իմաստով, և
բ) Հայաստանի դեպքում՝ Հայաստանի քաղաքացի՝ Հայաստանի Սահմանադրության և ներպետական օրենքների իմաստով.

«անձ» նշանակում է ֆիզիկական անձ կամ ձեռնարկություն.

«Կողմի անձ» նշանակում է Կողմի ֆիզիկական անձ կամ ձեռնարկություն.

«տարածք» նշանակում է՝

- ա) Սինգապուրի դեպքում՝ դրա ցամաքային տարածքը, ներքին ջրերը և տարածքային ծովը, այդ թվում՝ դրանցից վեր բարձրացող օդային տարածքը, ինչպես նաև տարածքային ծովի սահմաններից դուրս գտնվող ցանկացած ծովային տարածք, որը միջազգային իրավունքին համապատասխան՝ իր ազգային օրենքի շրջանակներում սահմանվել է կամ հետագայում կարող է սահմանվել որպես այնպիսի տարածք, որտեղ Սինգապուրը կարող է ծովի, ծովի հատակի, ընդերքի և բնական ռեսուրսների նկատմամբ իրականացնել իրավունքներ, և
բ) Հայաստանի դեպքում՝ դրա ցամաքային տարածքը, ներքին ջրերը, ընդերքը և դրանցից վեր բարձրացող օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ ու իրավազորություն՝ իր ներպետական օրենքներին և միջազգային իրավունքին համապատասխան.

«ԱՀԿ համաձայնագիր» նշանակում է 1994 թվականի ապրիլի 15-ին Մարաքեշում ստորագրված Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին Մարաքեշի համաձայնագիր:

«ԱՀԿ» նշանակում է Առևտրի համաշխարհային կազմակերպություն:

ԳԼՈՒԽ 2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Հոդված 2.1 Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝
«ծառայությունների միջսահմանային առևտուր» կամ **«ծառայության միջսահմանային մատուցում»** նշանակում է ծառայության մատուցում՝
 ա) մի Կողմի տարածքից՝ մյուս Կողմի տարածք.
 բ) մի Կողմի տարածքում այդ Կողմի անձի կողմից՝ մյուս Կողմի անձին, կամ
 գ) մի Կողմի քաղաքացու կողմից՝ մյուս Կողմի տարածքում, սակայն չի ներառում մի Կողմի տարածքում մյուս Կողմի ներդրողի կողմից մատուցված ծառայությունը կամ կատարված ներդրումը, ինչպես սահմանված է 3.1 (Սահմանումները) հոդվածում, և
«ծառայություն մատուցող» նշանակում է Կողմի այնպիսի անձ, որը ցանկանում է մատուցել կամ մատուցում է ծառայություն¹:

Հոդված 2.2 Գործողության ոլորտը և կարգավորման շրջանակը

1. Սույն գլուխը կիրառվում է Կողմի կողմից իրականացվող այն միջոցների նկատմամբ, որոնք ազդեցություն ունեն մյուս Կողմի ծառայություն մատուցողների կողմից ծառայությունների միջսահմանային առևտրի վրա: Այդպիսի միջոցները ներառում են այն միջոցները, որոնք ազդեցություն ունեն՝
 ա) ծառայության արտադրության, բաշխման, շուկայահանման, վաճառքի և առաքման վրա.
 բ) ծառայության գնման կամ օգտագործման կամ դրա դիմաց վճարման վրա.
 գ) ծառայության մատուցման հետ կապված՝ բաշխման, փոխադրման կամ հեռահաղորդակցման ցանցերի և ծառայությունների հասանելիության ու օգտագործման վրա, և

¹ Կողմերը գիտակցում են, որ «ցանկանում է մատուցել կամ մատուցում է ծառայություն» եզրույթն ունի նույն նշանակությունը, ինչ «մատուցում է ծառայություն» եզրույթը, ինչպես գործածված է ԾԱԳՀ-ի XXVIII հոդվածի «է» կետում: Կողմերը գիտակցում են, որ 2.3-րդ հոդվածի (Ազգերի առավել բարենպաստության ուժիմը), 2.4-րդ հոդվածի (Ազգային ուժիմը) եւ 2.5-րդ հոդվածի (Շուկայի հասանելիությունը) նպատակով «ծառայություն մատուցողներ» եզրույթն ունի նույն նշանակությունը, ինչ «ծառայություններ և ծառայություն մատուցողներ» եզրույթը, ինչպես գործածված է ԾԱԳՀ-ի II, XVI և XVII հոդվածներում:

դ) պարտատոմսի կամ ֆինանսական ապահովման այլ ձևի տրամադրման վրա՝ որպես ծառայության մատուցման պայման:

2. 2.5-րդ հոդվածը (Շուկայի հասանելիությունը) և 2.8-րդ հոդվածը (Ներպետական կարգավորումը) նույնպես կիրառվում են մի Կողմի կողմից իրականացվող այն միջոցների նկատմամբ, որոնք ազդեցություն ունեն իր տարածքում մյուս Կողմի ներդրողի կողմից ծառայության մատուցման կամ կատարված ներդրման վրա, ինչպես սահմանված է 3.1-րդ հոդվածում (Սահմանումները)²:

3. Սույն գլուխը չի կիրառվում՝

ա) պետական գնումների նկատմամբ.

բ) օդային ծառայությունների, այդ թվում՝ պլանավորված կամ ոչ պլանավորված ներպետական և միջազգային օդային փոխադրման ծառայությունների, կամ օդային ծառայությունների ապահովման համար նախատեսված հարակից ծառայությունների նկատմամբ.

գ) Կողմի կողմից տրամադրվող սուբսիդիաների կամ դրամաշնորհների, այդ թվում՝ պետության օժանդակությամբ տրամադրվող վարկերի, երաշխիքների և ապահովագրության նկատմամբ. կամ էլ՝ այդպիսի սուբսիդիաների կամ դրամաշնորհների ստացման կամ շարունակական ստացման դեպքում ցանկացած պայմանի նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ սուբսիդիաները կամ դրամաշնորհներն առաջարկվում են բացառապես ներպետական ծառայությունների, ծառայությունները սպառողների կամ ծառայություն մատուցողների համար, թե՛ ոչ, կամ

դ) յուրաքանչյուր Կողմի տարածքում՝ պետական իշխանության լիազորությունների իրականացման համար մատուցված ծառայությունների նկատմամբ:

4. Սույն գլխի նպատակներով՝ պետական իշխանության լիազորությունների իրականացմամբ մատուցվող ծառայություն նշանակում է ցանկացած ծառայություն, որը մատուցվում է ոչ առևտրային հիմունքներով և չգտնվելով մեկ կամ մի քանի ծառայություն մատուցողների հետ մրցակցության մեջ:

5. Սույն գլխով Կողմի նկատմամբ չի սահմանվում որևէ պարտավորություն իր աշխատաշուկա մուտք գործել ցանկացող կամ իր տարածքում մշտական հիմունքներով աշխատող մյուս Կողմի քաղաքացու մասով, և այդ քաղաքացուն չի վերապահվում տվյալ մուտքի կամ աշխատանքի մասով որևէ իրավունք, և ո՛չ էլ այն կիրառվում է քաղաքացիությանը կամ մշտական բնակությանն առնչվող միջոցների նկատմամբ:

6. Սույն գլխում ոչինչ չի արգելում Կողմին միջոցներ կիրառել՝ մյուս Կողմի

² Կողմերը գիտակցում են, որ սույն գլխում, այդ թվում՝ սույն կետում, ոչինչ ենթակա չէ ներդրողների և պետության միջև ծագած վեճերի լուծմանը՝ 3-րդ գլխի (Ներդրումներ) բաժին Բ-ի (Ներդրողների և պետության միջև ծագած վեճերի լուծում) համաձայն:

Ֆիզիկական անձանց մուտքն իր տարածք կամ այնտեղ նրանց ժամանակավորապես գտնվելը կարգավորելու համար, այդ թվում՝ այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են իր սահմանների անխախտելիությունը պահպանելու և իր սահմաններով ֆիզիկական անձանց կանոնավոր տեղաշարժն ապահովելու համար՝ պայմանով, որ այդ միջոցները չկիրառվեն՝ սույն գլխի ուժով մյուս Կողմի կողմից ձեռք բերվող օգուտները զրոյացնելու կամ խաթարելու ձևով³:

7. Սույն գլուխը չի տարածվում ֆինանսական ծառայությունների⁴ և հեռահաղորդակցության⁵ վրա: Կողմերը վերահաստատում են ԾԱԳՀ շրջանակներում ֆինանսական ծառայությունների և հեռահաղորդակցության մասով իրենց պարտավորությունները:

Հոդված 2.3

Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ծառայություն մատուցողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը համանման իրավիճակում տրամադրում է Կողմ չհանդիսացող երկրի ծառայություն մատուցողներին:

Հոդված 2.4

Ազգային ռեժիմը

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ծառայություն մատուցողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը համանման իրավիճակում տրամադրում է իր սեփական ծառայությունը մատուցողներին:

Հոդված 2.5

Շուկայի հասանելիությունը

Կողմը չպետք է, տարածքային բաժանման կամ իր ամբողջ տարածքի հիման վրա, ընդունի կամ իրականացնի այնպիսի միջոցներ, որոնցով՝
ա) սահմանափակվում է ծառայություն մատուցողների թիվը՝

³ Որոշ երկրների ֆիզիկական անձանցից մուտքի արտոնագիր պահանջելու, իսկ այլ երկրների ֆիզիկական անձանցից չպահանջելու զուտ փաստը չի կարող դիտվել որպես օգուտների զրոյացում կամ խաթարում սույն Համաձայնագրի շրջանակներում:

⁴ Սույն կետի նպատակներով՝ «ֆինանսական ծառայություններ»-ը մեկնաբանվում են ինչպես ԾԱԳՀ «ֆինանսական ծառայություններ» հավելվածի 5-րդ կետի «ա» ենթակետում:

⁵ Սույն կետի նպատակներով՝ «հեռահաղորդակցություն»-ը մեկնաբանվում է այնպես, ինչպես ԾԱԳՀ «հեռահաղորդակցություն» հավելվածի 3-րդ կետի «ա» ենթակետում:

քանակական քվոտաների, մենաշնորհների, բացառիկ ծառայություն մատուցողների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով.

- բ) սահմանափակվում են ծառայության մատուցման հետ կապված գործարքների ընդհանուր արժեքը կամ ակտիվները՝ քանակական քվոտաների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով.
- գ) սահմանափակվում է ծառայության հետ կապված գործողությունների ընդհանուր թվի կամ ծառայության արդյունքի՝ հատկորոշված թվային միավորներով արտահայտած ընդհանուր թիվը՝ քվոտաների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով⁶.
- դ) սահմանափակվում է այն ֆիզիկական անձանց ընդհանուր թիվը, որոնք կարող են աշխատանքի անցնել ծառայության որոշակի ոլորտում, կամ որոնց կարող է աշխատանքի վերցնել ծառայություն մատուցողը, և որոնք անհրաժեշտ են կոնկրետ ծառայության մատուցման համար և ուղղակիորեն առնչվում են դրան՝ քանակական քվոտաների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով, կամ
- ե) սահմանափակվում կամ պահանջվում են իրավաբանական անձի կամ համատեղ ձեռնարկության որոշակի տեսակներ, որոնց միջոցով ծառայություն մատուցողն ունի ծառայություն մատուցելու հնարավորություն:

Հոդված 2.6

Տեղական մակարդակում ներկայությունը

Կողմը չպետք է պահանջի, որ մյուս Կողմի ծառայություն մատուցողը հիմնադրի կամ վարի ներկայացուցչական գրասենյակ կամ ձեռնարկության ցանկացած ձև, կամ իր տարածքում լինի ռեզիդենտ՝ որպես միջսահմանային ծառայության մատուցման պայման:

Հոդված 2.7

Չհամապատասխանող միջոցները

1. 2.3-րդ հոդվածը (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), 2.4-րդ հոդվածը (Ազգային ռեժիմը), 2.5-րդ հոդվածը (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածը (Տեղական մակարդակում ներկայությունը) չեն կիրառվում՝

- ա) Կողմի կողմից պահպանվող՝ գործող ցանկացած չհամապատասխանող միջոցի նկատմամբ, ինչպես սահմանված է այդ

⁶ Սույն կետով չեն կարգավորվում Կողմի այն միջոցները, որոնցով սահմանափակվում են ծառայությունների մատուցման ծախսերը:

- Կողմի կողմից՝ 1 հավելվածի իրեն վերաբերող առդիրում.
- բ) «ա» ենթակետով նախատեսված ցանկացած չհամապատասխանող միջոցի շարունակական իրագործման կամ անհապաղ երկարաձգման նկատմամբ, կամ
- գ) «ա» ենթակետով նախատեսված ցանկացած չհամապատասխանող միջոցի փոփոխության նկատմամբ՝ այնքանով, որքանով այդ փոփոխությունը չի նվազեցնում այդ միջոցի համապատասխանությունը 2.3-րդ հոդվածին (Ազգերի առավել բարենպաստության ուժիմը), 2.4-րդ հոդվածին (Ազգային ուժիմը), 2.5-րդ հոդվածին (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածին (Տեղական մակարդակում ներկայությունը) այնպես, ինչպես այն գործել է նախքան փոփոխությունը:
2. 2.3-րդ հոդվածը (Ազգերի առավել բարենպաստության ուժիմը), 2.4-րդ հոդվածը (Ազգային ուժիմը), 2.5-րդ հոդվածը (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածը (Տեղական մակարդակում ներկայությունը) չեն կիրառվում ցանկացած այնպիսի միջոցի նկատմամբ, որը Կողմն ընդունում կամ իրականացնում է՝ 11 հավելվածի իրեն վերաբերող առդիրում սահմանված ոլորտների, ենթաոլորտների կամ գործունեության տեսակների նկատմամբ:

Հոդված 2.8 **Ներքին կարգավորումը**

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ծառայությունների առևտրի վրա ազդող ընդհանուր կիրառության բոլոր միջոցները կառավարվեն ողջամիտ, օբյեկտիվ և անաչառ եղանակով:
2. Եթե Կողմը պահանջում է ծառայության մատուցման թույլտվություն, ապա Կողմի իրավասու մարմինները ներպետական օրենքների ու կարգավորումների համաձայն լրացված դիմումը ներկայացվելուց հետո ողջամիտ ժամկետում դիմումատուին տեղեկացնում են դիմումի վերաբերյալ կայացված որոշման մասին: Դիմումատուի պահանջով Կողմի իրավասու մարմիններն առանց անհարկի ուշացման տրամադրում են դիմումի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ: Այդ պարտավորությունը չի տարածվում թույլտվության այն պահանջների վրա, որոնք կարգավորվում են 2.7-րդ հոդվածի (Չհամապատասխանող միջոցները) 2-րդ կետով:
3. Նպատակ ունենալով ապահովելու, որ որակավորման պահանջներին և ընթացակարգերին առնչվող միջոցները, տեխնիկական ստանդարտները և լիցենզավորման պահանջները ծառայությունների առևտրի համար չստեղծեն անհարկի խոչընդոտներ, յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի ապահովել, որ, առանձին ոլորտներին համապատասխան, այդպիսի միջոցները՝
 - ա) հիմնված լինեն օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչների վրա, ինչպիսիք են օրինակ՝ ծառայություն մատուցելու ունակությունն ու

կարողությունը.

- բ) չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակն ապահովելու համար, և
- գ) լիցենզավորման ընթացակարգերի դեպքում՝ որպես այդպիսին, չսահմանափակեն ծառայության մատուցումը:

4. ԾԱԳՀ-ի VI հոդվածի 4-րդ կետին առնչվող բանակցությունների արդյունքները (կամ երկու Կողմերի մասնակցությամբ այլ բազմակողմանի ներկայացուցչական հարթակում նախաձեռնված ցանկացած համանման բանակցության արդյունքները) ուժի մեջ մտնելու դեպքում սույն հոդվածը երկու Կողմերի միջև խորհրդակցություններից հետո անհրաժեշտության դեպքում փոփոխվում է՝ սույն Համաձայնագրի շրջանակներում այդ արդյունքներն ուժի մեջ մտնելն ապահովելու համար:

Հոդված 2.9 Ճանաչումը

1. Ծառայություն մատուցողներին թույլտվություն տրամադրելու, նրանց լիցենզավորման կամ հավաստագրման ստանդարտների կամ չափորոշիչների ամբողջովին կամ մասնակի կատարման նպատակով և 4-րդ կետով սահմանված պահանջները կատարելու պայմանով, Կողմը կարող է ճանաչել կոնկրետ երկրում, այդ թվում՝ մյուս Կողմի և Կողմ չհանդիսացող երկրների տարածքում ստացած կրթությունն ու փորձը, կատարված պահանջները կամ տրամադրված լիցենզիաները կամ հավաստագրերը: Այդպիսի ճանաչումը, որին կարելի է հասնել ներդաշնակեցման կամ այլ եղանակով, կարող է հիմնված լինել Կողմի կամ Կողմ չհանդիսացող համապատասխան երկրների հետ համաձայնության կամ պայմանավորվածության վրա կամ կարող է տրամադրվել իր հայեցողությամբ:

2. Եթե Կողմը իր հայեցողությամբ կամ համաձայնությամբ կամ պայմանավորվածությամբ ճանաչում է Կողմ չհանդիսացող երկրի տարածքում ստացած կրթությունը կամ փորձը, կատարված պահանջները կամ տրամադրված լիցենզիաները կամ հավաստագրերը, ապա 2.3-րդ հոդվածում (Ազգերի առավել բարենպաստության ուժիմը) ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ Կողմից պահանջվի նույնպես ճանաչել մյուս Կողմի տարածքում ստացած կրթությունը կամ փորձը, կատարված պահանջները կամ տրամադրված լիցենզիաները կամ հավաստագրերը:

3. 1-ին կետում նշված՝ գործող կամ ապագա համաձայնության կամ պայմանավորվածության մասնակից Կողմը համարժեք հնարավորություններ է ապահովում մյուս Կողմի համար, եթե մյուս Կողմը հետաքրքրված է՝ այդպիսի համաձայնությանը կամ պայմանավորվածությանն իր միանալու շուրջ բանակցելու կամ դրա հետ համեմատելի համաձայնությունների կամ պայմանավորվածությունների շուրջ բանակցելու համար: Եթե Կողմն իր

հայեցողությամբ է ճանաչում, ապա նա համարժեք հնարավորություն է ապահովում մյուս Կողմի համար՝ ցույց տալու, որ այդ մյուս Կողմի տարածքում ստացած կրթությունը, փորձը, լիցենզիաները կամ հավաստագրերը կամ կատարված պահանջները պետք է ճանաչվեն:

4. Կողմը չպետք է տրամադրի ճանաչում այնպիսի եղանակով, որը կհամարվի երկրների միջև՝ ծառայություն մատուցողներին թույլտվություն տրամադրելու, նրանց լիցենզավորման կամ հավաստագրման ստանդարտների կամ չափորոշիչների կիրառման հարցում խտրական միջոց կամ ծառայությունների առևտրի թաքնված սահմանափակում:

Հոդված 2.10

Մենաշնորհները և բացառիկ ծառայություն մատուցողները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր տարածքում ցանկացած մենաշնորհային ծառայություն մատուցող համապատասխան շուկայում մենաշնորհային ծառայություն մատուցելիս չգործի 2.3-րդ հոդվածով (Ազգերի առավել բարենպաստության ուժիմը), 2.4-րդ հոդվածով (Ազգային ուժիմը), 2.5-րդ հոդվածով (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածով (Տեղական մակարդակում ներկայությունը) սահմանված՝ Կողմի պարտավորություններին չհամապատասխանող ձևով:

2. Եթե Կողմի մենաշնորհային ծառայություն մատուցողն ուղղակիորեն կամ փոխկապակցված ընկերության միջոցով մրցակցում է այնպիսի ծառայության մատուցման հարցում, որն իր մենաշնորհային իրավունքների շրջանակից դուրս է, և որի վրա տարածվում են 2.3-րդ հոդվածով (Ազգերի առավել բարենպաստության ուժիմը), 2.4-րդ հոդվածով (Ազգային ուժիմը), 2.5-րդ հոդվածով (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածով (Տեղական մակարդակում ներկայությունը) սահմանված՝ Կողմի պարտականությունները, ապա Կողմն ապահովում է, որ այդ ծառայություն մատուցողը չչարաշահի իր մենաշնորհային դիրքը՝ իր տարածքում այդ հանձնառություններին չհամապատասխանող ձևով գործելու եղանակով:

3. Եթե Կողմը հիմքեր ունի ենթադրելու, որ մյուս Կողմի մենաշնորհային ծառայություն մատուցողը գործում է 1-ին կամ 2-րդ կետերին չհամապատասխանող ձևով, ապա նա կարող է պահանջել, որ այդ ծառայություն մատուցողին հիմնադրող, դրա գործունեությունը վարող կամ դրան թույլտվություն տրամադրող մյուս Կողմը տրամադրի համապատասխան գործառնությունների վերաբերյալ որոշակի տեղեկություններ:

4. Սույն հոդվածը կիրառվում է նաև բացառիկ ծառայություն մատուցողների դեպքերի նկատմամբ, եթե Կողմը ֆորմալ ձևով կամ փաստացի՝

- ա) թույլտվություն է տրամադրում կամ հիմնադրում է սակավաթիվ ծառայություն մատուցողներ, և
- բ) զգալիորեն կանխում է իր տարածքում այդ ծառայություն

մատուցողների միջև մրցակցությունը:

Հոդված 2.11 Երաշխիքային միջոցները

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո Կողմերից ոչ մեկը մյուս Կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ չի ձեռնարկում երաշխիքային ապահովման գործողություններ: Կողմերից ոչ մեկը չի նախաձեռնում կամ շարունակում մյուս Կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ որևէ երաշխիքային ապահովման գծով քննություն:

Հոդված 2.12 Փոխանցումները և վճարումները

1. Յուրաքանչյուր Կողմ թույլատրում է, որ միջսահմանային ծառայությունների մատուցման հետ կապված՝ դեպի իր տարածք կամ դրանից դուրս փոխանցումներն ու վճարումները կատարվեն ազատորեն և առանց ուշացման:
2. Յուրաքանչյուր Կողմ թույլատրում է, որ միջսահմանային ծառայությունների մատուցման հետ կապված այդ փոխանցումներն ու վճարումները կատարվեն ազատ փոխարկելի արժույթի՝ փոխանցման օրվա դրությամբ գործող՝ տարադրամի փոխանակման հիմնական շուկայական փոխարժեքով:
3. Չնայած 1-ին և 2-րդ կետերին՝ Կողմը կարող է կանխել կամ հետաձգել փոխանցումը կամ վճարումը՝ իր այն օրենքների արդարացի, ոչ խտրական և բարեխիղճ կիրառմամբ, որոնք առնչվում են՝
 - ա) սնանկությանը, անվճարունակությանը կամ պարտատերերի իրավունքների պաշտպանությանը.
 - բ) արժեթղթերի, ֆյուչերսների, օպցիոնների կամ այլ ածանցյալ գործիքների թողարկմանը, առքուվաճառքին կամ դրանցով գործառնությունների կատարմանը.
 - գ) փոխանցումների վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների կամ հաշիվների վարմանը՝ իրավապահ կամ ֆինանսական կարգավորման մարմիններին աջակցելու անհրաժեշտության դեպքում.
 - դ) քրեական կամ քրեորեն պատժելի իրավախախտումներին.
 - ե) դատական կամ վարչական վարույթներով որոշումների կամ վճիռների կատարման ապահովմանը կամ
 - զ) սոցիալական ապահովությանը, հասարակության կենսաթոշակային ապահովմանը կամ պարտադիր խնայողությունների համակարգերին:

4. Սույն գլխի շրջանակներում ոչինչ չի ազդում ԱՄՀ անդամների՝ Հիմնադրամի մասին համաձայնագրի հոդվածներով սահմանված իրավունքների և պարտավորությունների վրա՝ ներառյալ Համաձայնագրի նշված հոդվածներին համապատասխանող արժույթի փոխանակման գործողությունները՝ պայմանով, որ Կողմը կապիտալի վերաբերյալ որևէ գործարքի նկատմամբ չսահմանի այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն համապատասխանում այդպիսի գործարքների մասով՝ սույն գլխով սահմանված իր պարտավորություններին, բացառությամբ՝ 6.7-րդ հոդվածի (Վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով սահմանափակումներ) ներքո կամ ԱՄՀ պահանջով սահմանված պարտավորությունների:

Հոդված 2.13 Օգուտների մերժումը

Կողմը կարող է մերժել սույն գլխով սահմանված օգուտների տրամադրումը մյուս Կողմի ծառայություն մատուցողին, եթե ծառայությունը մատուցվում է այնպիսի ձեռնարկության կողմից, որը մյուս Կողմի տարածքում չի զբաղվում նշանակալի գործարար գործունեությամբ և պատկանում կամ վերահսկվում է Կողմ չհանդիսացող երկրի կամ մերժող Կողմի անձանց կողմից:

Հոդված 2.14 Ընդհանուր բացառությունները

Հետևելով այն պահանջին, համաձայն որի նշված միջոցները չպետք է կիրառվեն այնպես, որ դիտարկվեն որպես կամայական միջոց կամ չարդարացված խտրականություն մյուս Կողմի նկատմամբ կամ՝ ծառայությունների առևտրին առնչվող թաքնված սահմանափակում, սույն գլխում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ Կողմին արգելի ընդունել կամ իրականացնել հետևյալ միջոցները, որոնք՝

- ա) անհրաժեշտ են հանրային բարքերը պաշտպանելու կամ հասարակական կարգը պահպանելու համար;⁷
- բ) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար.
- գ) անհրաժեշտ են՝ ապահովելու համապատասխանությունը սույն գլխի դրույթներին չհակասող օրենքներին կամ կանոնակարգերին, այդ թվում՝ համապատասխանությունն այն դրույթներին, որոնք վերաբերում են՝

⁷ Հասարակական կարգի մասով բացառությունը կարող է վկայակոչվել միայն այն դեպքում, երբ հասարակության հիմնարար շահերից որևէ մեկի սպառնում է իրական և բավականաչափ լուրջ վտանգ:

- i) խաբեությամբ դրսևորվող և խարդախ գործելակերպերը կանխելուն կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի չկատարումից բխող հետևանքների հետ առնչվելուն.
 - ii) անհատների մասնավոր կյանքի պաշտպանությանը՝ կապված անձնական տվյալների մշակման ու տարածման, ինչպես նաև անհատական գրառումների ու հաշիվների գաղտնիության պաշտպանության հետ.
 - iii) անվտանգությանը.
- դ) չեն համապատասխանում 2.4-րդ հոդվածին (Ազգային ռեժիմը)⁶ պայմանով, որ ռեժիմների տարբերությունն ուղղված լինի մյուս Կողմի ծառայությունների կամ ծառայություն մատուցողների նկատմամբ արդարացի կամ արդյունավետ⁶ կերպով ուղղակի հարկերի սահմանումը կամ հավաքագրումն ապահովելուն:

⁶ Ուղղակի հարկերի արդարացի կամ արդյունավետ սահմանումն ու հավաքագրումն ապահովելուն ուղղված միջոցները ներառում են Կողմի՝ իր հարկային համակարգի շրջանակներում ձեռնարկված միջոցները, որոնք՝

- (i) կիրառվում են ոչ ռեզիդենտ ծառայություն մատուցողների նկատմամբ՝ ընդունելով այն փաստը, որ ոչ ռեզիդենտի համար հարկային պարտավորությունը սահմանվում է՝ Կողմի տարածքում աղբյուր հանդիսացող կամ այնտեղ տեղակայված հարկման օբյեկտների առկայությամբ, կամ
- (ii) կիրառվում են ոչ ռեզիդենտների նկատմամբ՝ ապահովելու համար Կողմի տարածքում հարկերի սահմանումն ու հավաքագրումը, կամ
- (iii) կիրառվում են ոչ ռեզիդենտների կամ ռեզիդենտների նկատմամբ՝ կանխելու համար հարկերից, այդ թվում՝ համապատասխանության միջոցներից խուսափելը կամ դրանք շրջանցելը, կամ
- (iv) կիրառվում են մյուս Կողմի տարածքում կամ դրանից դուրս մատուցվող ծառայությունները սպառողների նկատմամբ՝ Կողմի տարածքում ստացված աղբյուրներից այդպիսի սպառողների նկատմամբ հարկերի սահմանումն ու հավաքագրումն ապահովելու համար, կամ
- (v) տարբերակում են՝ համաշխարհային մասշտաբով հարկման օբյեկտների մասով հարկման ենթակա ծառայություն մատուցողներին այլ ծառայություն մատուցողներից՝ ընդունելով նրանց միջև առկա հարկման բազաների տարբերությունը, կամ
- (vi) սահմանում, հատկացնում կամ բաշխում են ռեզիդենտ անձանց կամ մասնաճյուղերի կամ փոխկապակցված անձանց կամ էլ միևնույն անձի կողմից ղեկավարվող մասնաճյուղերի միջև եկամուտը, շահույթը, հավելածը, կորուստները, մասհանումներն ու պարտավորությունները՝ Կողմի հարկման բազան պահպանելու նպատակով:

2.14-րդ հոդվածի «դ» կետի և սույն ծանոթագրության մեջ նշված հարկային եզրույթներն ու հասկացությունները սահմանվում են տվյալ միջոցը նախաձեռնող Կողմի ներպետական օրենսդրությամբ նախատեսված հարկային եզրույթներին և հասկացություններին կամ էլ համարժեք կամ համանման քնորոշումներին ու հասկացություններին համապատասխան:

ԳԼՈՒԽ 3 ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Հոդված 3.1 Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

«**հայցվոր**» նշանակում է Կողմի այն ներդրողը, որը մյուս Կողմի հետ ներդրումային վեճի կողմ է.

«**կատարված ներդրում**» նշանակում է մի Կողմի տարածքում մյուս Կողմի ներդրողի՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գոյություն ունեցող կամ դրանից հետո ստեղծված, ձեռք բերված կամ ընդլայնված ներդրում.

«**վեճի կողմեր**» նշանակում է հայցվոր և պատասխանող.

«**վեճի կողմ**» նշանակում է կա՛մ հայցվոր, կա՛մ պատասխանող.

«**ազատ փոխարկելի արժույթ**» նշանակում է ԱՄՀ կողմից ԱՄՀ համաձայնագրի հոդվածներին և դրանցում կատարված փոփոխություններին համապատասխան որոշված ազատ փոխարկելի արժույթ.

«**ՆՎԿՄԿ լրացուցիչ ընթացակարգի կանոններ**» նշանակում է *Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի քարտուղարության կողմից վարույթի իրականացման համար լրացուցիչ ընթացակարգի վերաբերյալ կանոններ*.

«**ՆՎԿՄԿ արբիտրաժային կանոններ**» նշանակում է *Արբիտրաժային վարույթի կանոնակարգ (Արբիտրաժային կանոններ)*՝ դրա մեջ արված փոփոխություններով, որն ուժի մեջ է մտել 2006 թվականի ապրիլի 10-ին.

«**ՆՎԿՄԿ կոնվենցիա**» նշանակում է «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին» կոնվենցիան՝ կատարված 1965 թվականի մարտի 18-ին Վաշինգտոնում.

«**ներդրում**» նշանակում է ցանկացած տեսակի ակտիվ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է ներդրողին կամ վերահսկվում է նրա կողմից և ունի ներդրմանը վերագրվող հատկանիշներ⁹: Որպես ներդրում կարող են դիտարկվել մասնավորապես¹⁰

ա) ձեռնարկությունը.

բ) բաժնեմասերը, բաժնետոմսերը և ձեռնարկությունում բաժնային

⁹ Եթե ակտիվը չունի ներդրման հատկանիշներ, ապա այդ ակտիվը չի համարվում ներդրում՝ անկախ դրա ձևից: Ներդրման հատկանիշները ներառում են կապիտալի ներգրավում, շահույթի կամ եկամտի ակնկալիք կամ ռիսկ:

¹⁰ «Ներդրում» եզրույթը չի ներառում դատական կամ վարչական վարույթի շրջանակներում ընդունված որոշումը կամ վճիռը:

- մասնակցության այլ ձևեր, այդ թվում՝ դրանցից բխող իրավունքները.
- գ) պարտատոմսերը, պարտագրերը, փոխառությունները և այլ պարտքային գործիքներ¹¹, այդ թվում՝ դրանցից բխող իրավունքները.
 - դ) ֆյուչերսները, օպցիոնները և այլ ածանցյալ գործիքներ.
 - ե) շինարարական կապալի (turnkey) պայմանագիրը, շինարարական պայմանագիրը, կառավարման, արտադրության, կոնցեսիայի, եկամուտների բաշխման և այլ համանման պայմանագրեր.
 - զ) բիզնեսին առնչվող և տնտեսական արժեք ներկայացնող դրամական պահանջները կամ պայմանագրի կատարման պահանջները.
 - է) մտավոր սեփականության իրավունքները և գործարար համբավը (գուդվիլ).
 - ը) լիցենզիաները, թույլատրությունները, թույլտվությունները և կիրառելի ներպետական օրենսդրությանը համաձայն տրվող նմանատիպ իրավունքները, այդ թվում՝ բնական պաշարներ փնտրելու, դրանք մշակելու, արդյունահանելու կամ օգտագործելու կոնցեսիան. և
 - թ) այլ նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ գույքը, ինչպես նաև դրա հետ կապված գույքային իրավունքները, ինչպես օրինակ՝ վարձակալության, հիփոթեքային վարկավորման, կալանք կիրառելու և գրավադրման իրավունքը.

«**Կողմի ներդրող**» նշանակում է Կողմի քաղաքացի կամ ձեռնարկություն, որը փորձում է կատարել, կատարում է կամ կատարել է ներդրումներ մյուս Կողմի տարածքում.

«**Նյու Յորքի կոնվենցիա**» նշանակում է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» կոնվենցիան, որն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպությունում 1958 թվականի հունիսի 10-ին Նյու Յորքում.

«**պատասխանող**» նշանակում է ներդրումային վեճի կողմ հանդիսացող Կողմ.

«**եկամուտ**» նշանակում է ներդրման արդյունքում առաջացած կամ ստացված գումար, այդ թվում՝ շահույթը, շահաբաժինները, տոկոսը, ակտիվի արժեքի հավելածը, ոռոյալթիները, մտավոր սեփականության իրավունքի հետ կապված վճարումները և բոլոր մյուս օրինական եկամուտները: «Ներդրում» եզրույթի նպատակով՝ ներդրված եկամուտները դիտարկվում են որպես ներդրումներ, և ակտիվների ներդրման կամ վերաներդրման ձևի որևէ փոփոխություն չպետք է ազդեցություն ունենա որպես ներդրումներ դրանց հատկանիշների վրա. և

¹¹ Սույն Համաձայնագրի նպատակով սույն հոդվածի «գ» կետում նշված «փոխառություններ և այլ պարտքային գործիքներ» և «զ» կետում նշված «դրամական պահանջներ կամ պայմանագրի կատարման պահանջներ» եզրույթները վերաբերում են բիզնես գործունեությանն առնչվող ակտիվներին և չեն վերաբերում անձնական բնույթի, բիզնես գործունեության հետ առնչություն չունեցող ակտիվներին:

«ՄԱԿՄԱԻՇ արբիտրաժային կանոններ» նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության՝ Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի արբիտրաժային կանոններ՝ ընդունված 1976 թվականի դեկտեմբերի 15-ին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից:

ԲԱԺԻՆ Ա. Ներդրումներ

Հոդված 3.2

Գործողության շրջանակը¹²

1. Սույն գլուխը կիրառվում է Կողմի կողմից ընդունված կամ իրականացված այնպիսի միջոցների նկատմամբ, որոնք առնչվում են՝
 - ա) մյուս Կողմի ներդրողներին,
 - բ) կատարված ներդրումներին, և
 - գ) 3.8-րդ հոդվածի (Գործողություններին ներկայացվող պահանջները) մասով՝ Կողմի տարածքում կատարվող բոլոր ներդրումներին:
2. Սույն գլուխը չի կիրառվում՝
 - ա) որևէ հարկման միջոցի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ.
 - բ) այնպիսի ծառայությունների նկատմամբ, որոնք մատուցվում են համապատասխան Կողմի տարածքում պետական իշխանության լիազորությունների իրականացման նպատակով: Սույն գլխի նպատակով՝ պետական իշխանության լիազորությունների իրականացման նպատակով մատուցվող ծառայություն նշանակում է ցանկացած ծառայություն, որը մատուցվում է ոչ առևտրային հիմունքներով և առանց մրցակցության մեջ մտնելու մեկ կամ մի քանի ծառայություն մատուցողների հետ, կամ
 - գ) Կողմի կողմից տրամադրվող սուբսիդիաների կամ դրամաշնորհների, այդ թվում՝ պետության օժանդակությամբ տրամադրվող վարկերի, երաշխիքների և ապահովագրության նկատմամբ. կամ այդպիսի սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստանալու կամ դրանք շարունակաբար ստանալու դեպքում ցանկացած պայմանի նկատմամբ՝ անկախ նրանից, թե այդ սուբսիդիաները կամ դրամաշնորհներն առաջարկվում են բացառապես Կողմի ներդրողներին կամ վերաբերում են Կողմի ներդրողների

¹² Առավել հստակության համար, սույն գլուխը չի կիրառվում Կողմերից մեկի աշխատաշուկա մուտք գործելու փորձ կատարող ֆիզիկական անձանց վերաբերող միջոցների, ինչպես նաև քաղաքացիությանը, բնակությանը կամ մշտական հիմունքներով զբաղվածությանը վերաբերող միջոցների նկատմամբ: Սույն գլխով Կողմերից որևէ մեկի չի արգելվում կիրառել միջոցներ՝ ֆիզիկական անձանց մուտքն իր տարածք կամ այնտեղ նրանց ժամանակավորապես գտնվելը կարգավորելու համար:

ներդրումներին, այդ թվում՝ պետության օժանդակությամբ տրամադրվող վարկերին, երաշխիքներին և ապահովագրությանը:

3. Սույն գլխի և այլ գլխի միջև անհամապատասխանության դեպքում մյուս գլուխը գերակայում է սույն գլխի նկատմամբ՝ անհամապատասխանության մասով:
4. Կողմերից մեկի կողմից ներկայացվող պահանջն այն մասին, որ մյուս Կողմի ծառայություն տրամադրող երաշխիք կամ ֆինանսական ապահովման այլ միջոց պետք է տրամադրի որպես իր տարածքում ծառայություն մատուցելու պայման, որպես այդպիսին սույն գլուխը կիրառելի չի դարձնում այդ միջսահմանային ծառայության տրամադրման նկատմամբ: Սույն գլուխը տարածվում է այդ Կողմի՝ տրամադրած երաշխիքի կամ ֆինանսական ապահովման նկատմամբ կիրառվող ռեժիմի վրա այնքանով, որքանով այդ երաշխիքը կամ ֆինանսական ապահովումը համարվում է կատարված ներդրում:
5. Առավել հստակության համար, սույն գլխով որևէ Կողմի համար չի սահմանվում որևէ պարտավորություն տեղի ունեցած որևէ գործողության կամ փաստի, կամ այնպիսի իրավիճակի մասով, որը դադարել է գոյություն ունենալ՝ մինչև սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը:

Հոդված 3.3

Ֆինանսական ծառայություններ¹³ և հեռահաղորդակցություն¹⁴

1. Սույն գլուխը չի տարածվում այն միջոցների վրա, որոնք Կողմն ընդունում կամ իրականացնում է.
 - ա) մյուս Կողմի ներդրողների և նախկին Կողմի ֆինանսական հաստատություններում¹⁵ այդպիսի ներդրողների կողմից կատարված ներդրումների նկատմամբ, և
 - բ) մյուս Կողմի ներդրողների և այդպիսի ներդրողների կողմից հեռահաղորդակցության հետ կապված կատարված ներդրումների նկատմամբ,
 բացառությամբ հետևյալ դրույթների.

Հոդված 3.7 (Վնասների փոխհատուցումը).

Հոդված 3.9 (Բարձրաստիճան ղեկավարությունը և տնօրենների խորհուրդը).

¹³ Սույն գլխի նպատակներով՝ «Ֆինանսական ծառայություններ»-ը մեկնաբանվում են այնպես, ինչպես ԾԱԳՀ «Ֆինանսական ծառայություններ» հավելվածի 5-րդ կետի «ա» ենթակետում:

¹⁴ Սույն գլխի նպատակներով՝ «Հեռահաղորդակցություն»-ը մեկնաբանվում է այնպես, ինչպես ԾԱԳՀ «Հեռահաղորդակցություն» հավելվածի 3-րդ կետի «ա» ենթակետում:

¹⁵ «Ֆինանսական հաստատություն»-ը նշանակում է ցանկացած ֆինանսական միջնորդ կամ այլ ձեռնարկություն, որը իրավասու է բիզնեսով զբաղվելու և կարգավորվում կամ վերահսկվում է որպես ֆինանսական հաստատություն այն Կողմի օրենքով, որի տարածքում գտնվում է:

Հողված 3.11 (Օտարումը).

Հողված 3.12 (Փոխանցումները).

Բաժին Բ (Ներդրողների և պետության միջև ծագած վեճերի կարգավորում), և

Հողված 3.24 (Արտոնությունների մերժումը):

2. Կողմերը վերահաստատում են ԾԱԳՀ շրջանակներում ֆինանսական ծառայությունների և հեռահաղորդակցության մասով իրենց հանձնառությունները:

3. 1-ին կետի նպատակներով Բաժին Բ-ն (Ներդրողների և պետության միջև ծագած վեճերի կարգավորում) կիրառվում է բացառապես այն պահանջների համար, երբ Կողմը խախտել է 3.11-րդ հոդվածը (Օտարումը), 3.12-րդ հոդվածը (Փոխանցումները) և 3.24-րդ հոդվածը (Արտոնությունների մերժումը):

4. Սույն գլուխը չի տարածվում այն միջոցների վրա, որոնք Կողմն ընդունել կամ իրականացրել է՝ կապված

ա) պետական կենսաթոշակային ծրագրի կամ սոցիալական ապահովության պետական համակարգի մաս կազմող գործողությունների կամ ծառայությունների հետ,

բ) Կողմի, ներառյալ դրա հանրային կառույցները, ֆինանսական միջոցներն օգտագործելու, երաշխիքի հիման վրա կամ հաշվի կառավարումից թխող գործողությունների կամ ծառայությունների հետ, կամ

գ) Կենտրոնական բանկի կամ դրամավարկային մարմնի կամ դրամավարկային կամ արժույթային քաղաքականություն վարող որևէ այլ հանրային կառույցի կողմից իրականացվող գործողությունների հետ՝

բացառությամբ 1-ին կետում նշված դրույթների, որոնք կիրառվում են, եթե Կողմը թույլ է տալիս (ա) կամ (բ) ենթակետերում նշված որևէ գործողություն կամ ծառայություն իրականացնել իր ֆինանսական հաստատությունների կողմից՝ մրցակցելով հանրային կառույցի կամ ֆինանսական հաստատության հետ:

5. Չհակասելով սույն գլխի ցանկացած այլ դրույթի՝ յուրաքանչյուր Կողմ կարող է ընդունել կամ իրականացնել միջոցներ ողջամիտ պատճառներով, ինչպիսիք են՝ ներդրողների, ավանդատուների, քաղաքականություն մշակողների կամ այն անձանց պաշտպանությունը, որոնց նկատմամբ ֆինանսական հաստատությունը կամ ֆինանսական ծառայություններ մատուցողն ունի ֆիդուցիար պարտականություն, ֆինանսական ծառայություններ մատուցողների անվտանգության, կայունության, ամբողջականության կամ ֆինանսական պատասխանատվության պահպանումը, և Կողմի ֆինանսական համակարգի ամբողջականության և կայունության ապահովումը: Նման միջոցները չեն օգտագործվում որպես Կողմի՝

1-ին կետում նշված դրույթներով նախատեսված պարտականություններից խուսափելու միջոց:

6. Չհակասելով 3.12-րդ հոդվածին (Փոխանցումներ)՝ Կողմը կարող է արգելել կամ սահմանափակել ֆինանսական հաստատության կամ ֆինանսական ծառայություններ մատուցողի կողմից փոխանցումների իրականացումն այդ հաստատության կամ ծառայություն մատուցողի հետ փոխկապակցված անձին կամ դուստր ձեռնարկությանը կամ դրանց օգտին՝ արդարացիորեն, ոչ խտրական և բարեխղճորեն կիրառելով ֆինանսական հաստատությունների կամ ֆինանսական ծառայություններ մատուցողների անվտանգության, կայունության, ամբողջականության կամ ֆինանսական պատասխանատվության ապահովման հետ կապված միջոցները: Այս կետը չի հակասում սույն Համաձայնագրի որևէ այլ դրույթի, որը Կողմին թույլ է տալիս սահմանափակել փոխանցումները:

7. Սույն գլխում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ Կողմի կողմից այնպիսի միջոցներ ընդունելու կամ կիրառելու արգելք, որոնք անհրաժեշտ են սույն գլխին չհակասող օրենքների կամ կանոնակարգերի պահպանումն ապահովելու համար՝ ներառյալ այնպիսիք, որոնք վերաբերում են կեղծ և խարդախ գործելակերպերի կանխարգելմանը կամ ֆինանսական ծառայությունների մատուցման պայմանագրերում պարտավորությունները չկատարելու հետևանքները դիտարկելու համար՝ պայմանով, որ այդպիսի միջոցները չեն կիրառվում այնպիսի եղանակով, որը կարող է կամայական կամ անարդարացի խտրականության միջոց լինել այն երկրների միջև, որտեղ նույնանման պայմանները գերակայում են, կամ որը հանդիսանում է ֆինանսական հաստատություններում ներդրումների քողարկված սահմանափակում:

8. Սույն գլխում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես պահանջ՝ Կողմի կողմից հրապարակելու առանձին սպառողների գործերին և հաշիվներին վերաբերող տեղեկատվություն կամ հանրային կառույցների տնօրինության ներքո գտնվող ցանկացած գաղտնի կամ գույքային տեղեկատվություն:

Հոդված 3.4

Ռեժիմի նվազագույն չափանիշը

1. Յուրաքանչյուր Կողմ կատարված ներդրումներին տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը միջազգային իրավունքի նվազագույն չափանիշի¹⁶

¹⁶ Սույն հոդվածի նպատակներով՝ միջազգային իրավունքը նշանակում է այն իրավունքը, որն արդյունք է պետությունների համընդհանուր և հետետղական իրավական գործելակերպի, որին նրանք հետետում են՝ իրավական պարտավորության իմաստից ելնելով: Սույն հոդվածի առնչությամբ՝ համաձայն սահմանված՝ օտարերկրացիներին տրամադրվող միջազգային իրավունքի նվազագույն չափանիշի ռեժիմը նշանակում է միջազգային իրավունքի բոլոր այն

համաձայն տրամադրում է օտարերկրացիներին, այդ թվում՝ արդարացի և անաչառ վերաբերմունք և լիարժեք պաշտպանություն ու անվտանգություն:

2. Առավել հստակության համար, 1-ին կետով օտարերկրացիներին տրամադրվող միջազգային իրավունքի նվազագույն չափանիշի ուժի մը սահմանվում է որպես ուժի մը նվազագույն չափանիշ, որը պետք է կիրառվի կատարված ներդրումների նկատմամբ: «Արդարացի և անաչառ վերաբերմունք» և «լիարժեք պաշտպանություն ու անվտանգություն» հասկացությունները չեն ենթադրում այդ չափանիշով պահանջվող ուժի մը ավելին կամ առավելը և չեն առաջացնում լրացուցիչ նյութական իրավունքներ:

ա) «Արդարացի և անաչառ վերաբերմունք» ապահովելու պարտավորությունը ներառում է քրեական, քաղաքացիական կամ վարչական գործերով դատական կարգով արդարադատության իրականացումը չմերժելու պարտավորություն՝ աշխարհի երկրների հիմնական իրավական համակարգերում ընդունված պատշաճ գործընթացի սկզբունքին համապատասխան:

բ) «Լիարժեք պաշտպանություն ու անվտանգություն» ապահովելու պարտավորությունը յուրաքանչյուր Կողմից պահանջում է տրամադրել միջազգային իրավունքով նախատեսված՝ ոստիկանական պաշտպանության մակարդակ:

3. Սույն Համաձայնագրի մեկ այլ դրույթի կամ առանձին միջազգային համաձայնագրի խախտման բացահայտումը չի նշանակում, որ տեղի է ունեցել սույն հոդվածի խախտում:

Հոդված 3.5 Ազգային ուժի մը

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ուժի մը, քան այն, որը տրամադրում է իր սեփական ներդրողներին՝ իր տարածքում ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման և վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով:

2. Յուրաքանչյուր Կողմ կատարված ներդրումներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ուժի մը, քան այն, որը համանման հանգամանքներում տրամադրում է իր սեփական ներդրողների կողմից իր տարածքում իրականացված ներդրումներին՝ դրանց ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման, ինչպես նաև վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով:

սկզբունքները, որոնցով պաշտպանվում են օտարերկրացիների տնտեսական իրավունքներն ու շահերը:

Հոդված 3.6 Ազգերի առավել բարենպաստության ուժի մը

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ուժի մը, քան այն, որը համանման հանգամանքներում տրամադրում է Կողմ չհանդիսացող որևէ երկրի ներդրողներին՝ իր տարածքում ներդրման ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման, ինչպես նաև վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով:
2. Յուրաքանչյուր Կողմ կատարված ներդրումներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ուժի մը, քան այն, որը համանման հանգամանքներում տրամադրում է Կողմ չհանդիսացող որևէ երկրի ներդրողների կողմից իր տարածքում իրականացված ներդրումներին՝ դրանց ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման, ինչպես նաև վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով:
3. Առավել հստակության համար, 1-ին և 2-րդ կետերը չեն մեկնաբանվում որպես վեճերի լուծման համար ներդրողներին Բաժին Բ-ում (Ներդրողների և պետության միջև ծագած վեճերի լուծումը) նշվածներից բացի այլ տարբերակներ կամ ընթացակարգեր տրամադրող:

Հոդված 3.7 Վնասների փոխհատուցումը

1. Մի Կողմի ներդրողներին, որոնք մյուս Կողմի տարածքում իրենց կողմից կատարված ներդրումների հետ կապված վնասներ են կրել այդ մյուս Կողմի տարածքում պատերազմի կամ այլ զինված հակամարտության, հեղափոխության, արտակարգ իրավիճակի, խռովության, քաղաքացիական անկարգությունների կամ որևէ այլ նմանատիպ իրադարձությունների պատճառով, այդ մյուս Կողմը առաջին Կողմի ներդրողի կատարված ներդրումներին տրամադրում է վնասների վերականգնման, հատուցման, փոխհատուցման կամ որևէ այլ ձևով կարգավորման այնպիսի ուժի մը, որը ոչ պակաս բարենպաստ է, քան այն ուժի մը, որն այդ մյուս Կողմը կտրամադրեր իր ներդրողների ներդրումների կամ Կողմ չհանդիսացող որևէ այլ երկրի ներդրողների ներդրումների համար՝ նայած դրանցից որն է առավել բարենպաստ: Առաջացող բոլոր վճարումները համարվում են ազատ փոխանցելի:
2. Չնայած 1-ին կետին՝ եթե մի Կողմի ներդրողը 1-ին կետում նշված իրավիճակներում մյուս Կողմի տարածքում կրում է վնաս, որն առաջանում է՝
 - ա) վերջինիս ուժային կառույցների կամ իշխանությունների կողմից իր կատարած ներդրումների կամ դրանց մի մասի բռնագրավման հետևանքով, կամ

բ) վերոնշյալ Կողմի ուժային կառույցների կամ իշխանությունների կողմից իր կատարած ներդրումների ոչնչացման հետևանքով, ինչը չի պահանջվել տվյալ իրավիճակի անհրաժեշտությունից, ապա այդ մյուս Կողմը ներդրողին տրամադրում է այդ վնասի վերականգնում, փոխհատուցում կամ, անհրաժեշտության դեպքում, երկուսը միասին:

Հոդված 3.8

Գործողություններին ներկայացվող պահանջները

1. Որևէ Կողմ չի կարող իր տարածքում Կողմի կամ Կողմ չհանդիսացող երկրի ներդրողի ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման կամ վաճառքի կամ այլ ձևով տնօրինման հետ կապված սահմանել կամ կիրառել որևէ պահանջ կամ պահանջել կատարելու որևէ հանձնառություն կամ պարտավորություն¹⁷, որպեսզի՝

- ա) ապահովի ապրանքների կամ ծառայությունների որոշակի չափաքանակով կամ տոկոսային հարաբերակցությամբ արտահանում.
- բ) ապահովի հայրենական կապիտալի որոշակի մակարդակ կամ տոկոսային հարաբերակցություն.
- գ) գնի, օգտագործի կամ նախապատվություն տա իր տարածքում արտադրված ապրանքներին կամ գնի ապրանքներ իր տարածքում գտնվող անձանցից.
- դ) որևէ կերպ կապակցի ներմուծումների ծավալը կամ արժեքը արտահանումների ծավալի կամ արժեքի կամ այդ ներդրման հետ կապված արտարժույթի ներհոսքի հետ.
- ե) իր տարածքում սահմանափակի այդպիսի ներդրումների միջոցով արտադրվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների վաճառքը՝ այդ վաճառքը որևէ կերպ կապակցելով իր արտահանման ծավալի կամ արժեքի կամ արտարժույթի մուտքերի հետ.
- զ) փոխանցի որոշակի տեխնոլոգիա, արտադրական գործընթաց կամ սեփականություն համարվող այլ գիտելիք իր տարածքում գտնվող անձանց, կամ
- է) մատակարարի բացառապես Կողմի տարածքից այդ ներդրման միջոցով արտադրվող ապրանքները կամ մատուցվող ծառայությունները որոշակի տարածաշրջանային շուկա կամ համաշխարհային շուկա:

¹⁷ Առավել հստակության համար, 2-րդ կետում նշված առավելության ստացումը կամ դրա շարունակական ստացումը 1-ին կետի նպատակով չի համարվում «պահանջ» կամ «հանձնառություն կամ պարտավորություն»:

2. Որևէ Կողմ չի կարող իր տարածքում Կողմի կամ Կողմ չհանդիսացող երկրի ներդրողի ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման կամ վաճառքի կամ այլ ձևով տնօրինման հետ կապված առավելությունների ստացումը կամ դրանց շարունակական ստացումը պայմանավորել որևէ պահանջի կատարմամբ, որպեսզի՝

- ա) ապահովի հայրենական կապիտալի որոշակի մակարդակ կամ տոկոսային հարաբերակցություն.
 - բ) գնի, օգտագործի կամ նախապատվություն տա իր տարածքում արտադրված ապրանքներին կամ գնի ապրանքներ իր տարածքում գտնվող անձանցից.
 - գ) որևէ կերպ կապակցի ներմուծումների ծավալը կամ արժեքը արտահանումների ծավալի կամ արժեքի կամ այդ ներդրման հետ կապված արտարժույթի ներհոսքի հետ, կամ
 - դ) իր տարածքում սահմանափակի այդպիսի ներդրումների միջոցով արտադրվող ապրանքների կամ մատակարարվող ծառայությունների վաճառքը՝ այդ վաճառքը որևէ կերպ պայմանավորելով արտահանման ծավալով կամ արժեքով կամ արտարժույթի մուտքերով:
3. ա) Առավել հստակության համար, 1-ին կետում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես մեկ Կողմին խոչընդոտող, որպեսզի նա իր տարածքում Կողմի կամ Կողմ չհանդիսացող երկրի ներդրողի ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման կամ վաճառքիկամ այլ կերպ տնօրինման հետ կապված սահմանի կամ կիրառի որևէ պահանջ կամ պարտադրի կատարել որևէ հանձնառություն կամ պարտավորություն՝ իր տարածքում աշխատողներ վարձելու կամ վերապատրաստելու մասով՝ պայմանով, որ նման աշխատանքի վերցնելը կամ վերապատրաստելը չպետք է պահանջի իր տարածքում հատուկ տեխնոլոգիայի, արտադրական գործընթացի կամ սեփականություն հանդիսացող այլ գիտելիքների փոխանցում որևէ անձի:
- բ) Առավել հստակության համար, 2-րդ կետում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես մեկ Կողմին խոչընդոտող, որպեսզի նա իր տարածքում Կողմի կամ Կողմ չհանդիսացող երկրի ներդրողի ներդրումների հետ կապված առավելությունների ստացումը կամ դրանց շարունակական ստացումը պայմանավորի արտադրության տեղակայման, ծառայության մատուցման, աշխատողներ վարձելու կամ վերապատրաստելու, որոշակի շինություններ կառուցելու կամ ընդարձակելու կամ հետազոտություններ և մշակման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ պահանջի կատարմամբ:

- գ) 1(գ) ենթակետի դրույթները չեն կիրառվում, եթե՝
- i) Կողմը թույլատրում է մտավոր սեփականության իրավունքի օգտագործումը ԱՀԿ համաձայնագրի 14 հավելվածում ներկայացված «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ ՄՍԻԱՀ համաձայնագիր) 31-րդ հոդվածի¹⁸ համաձայն կամ այն միջոցների նկատմամբ, որոնցով պահանջվում է ՄՍԻԱՀ համաձայնագրի 39-րդ հոդվածով կարգավորվող և այդ հոդվածին համապատասխանող՝ սեփականություն հանդիսացող տեղեկությունների բացահայտում, կամ
 - ii) պահանջը սահմանվել է կամ հանձնառությունը կամ պարտավորությունը կատարման են ներկայացվել դատարանի, վարչական տրիբունալի կողմից կամ մրցակցային մարմնի կողմից ապահովելու համար իրավական պաշտպանության միջոցներ այն իրավիճակում, որը դատական կամ վարչական գործընթացներից հետո, Կողմի մրցակցության ոլորտի օրենսդրության համաձայն¹⁹, սահմանվել է որպես ոչ մրցակցային:
- դ) 1(ա), 1(բ) և 1(գ), 2(ա) և 2(բ) ենթակետերը չեն կիրառվում ապրանքների կամ ծառայությունների որակին ներկայացվող պահանջների նկատմամբ՝ արտահանման խթանման և օտարերկրյա օժանդակության ծրագրերի առնչությամբ:
- ե) 1(բ), 1(գ), 1(դ), 1(է), 2(ա) և 2(բ) ենթակետերը չեն կիրառվում պետական գնումների նկատմամբ:
- զ) 2(ա) և 2(բ) ենթակետերը չեն կիրառվում ներկրող Կողմի կողմից ներկայացված այն պահանջների նկատմամբ, որոնք վերաբերում են ապրանքների պարունակությանը, որն անհրաժեշտ է առանձնաշնորհային սակագներից կամ արտոնյալ քվոտաներից օգտվելու համար:

4. Առավել հստակության համար, 1-ին և 2-րդ պարբերությունները չեն կիրառվում որևէ հանձնառության, պարտավորության կամ պահանջի նկատմամբ՝ բացի վերոնշյալ պարբերություններում նշված հանձնառություններից, պարտավորություններից կամ պահանջներից:

5. Սույն հոդվածով չի արգելվում մասնավոր կողմերի միջև որևէ հանձնառության, պարտավորության կամ պահանջի պարտադիր կատարում այն դեպքերում, երբ Կողմը չի սահմանել կամ պահանջել հանձնառություն, պարտավորություն կամ պահանջ:

¹⁸ «31-րդ հոդվածին» արված հղումը պարունակում է 31-րդ հոդվածի ծանոթագրություն:

¹⁹ Կողմերը նշում են, որ արտոնագիրը միշտ չէ, որ շուկայում գերակշիռ դիրք է ապահովում:

Հոդված 3.9

Բարձրաստիճան ղեկավարություն և տնօրենների խորհուրդը

1. Կողմերից որևէ մեկը չի կարող պահանջել, որ կատարված ներդրում համարվող այդ Կողմի ձեռնարկությունում ղեկավար բարձր պաշտոնների նշանակվեն որևէ կոնկրետ քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձինք:
2. Կողմը կարող է պահանջել, որ կատարված ներդրում համարվող Կողմի ձեռնարկության տնօրենների խորհրդի կամ դրա որևէ կոմիտեի անդամների մեծամասնությունն ունենա կոնկրետ երկրի քաղաքացիություն կամ լինի տվյալ Կողմի տարածքում ռեզիդենտ՝ պայմանով, որ այդ պահանջն էականորեն չպետք է խոչընդոտի մյուս Կողմի ներդրողի՝ իր ներդրումները վերահսկելու հնարավորությունը:

Հոդված 3.10

Չհամապատասխանող միջոցները

1. 3.5-րդ հոդվածը (Ազգային ռեժիմը), 3.6-րդ հոդվածը (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), 3.8-րդ հոդվածը (Գործողություններին ներկայացվող պահանջները) և 3.9-րդ հոդվածը (Բարձրաստիճան ղեկավարությունը և տնօրենների խորհուրդը) չեն կիրառվում՝
 - ա) Կողմի կողմից իրականացվող՝ գոյություն ունեցող որևէ չհամապատասխանող միջոցի նկատմամբ, ինչպես սահմանված է I հավելվածի իրեն առնչվող առդիրում.
 - բ) «ա» ենթակետում նշված՝ որևէ չհամապատասխանող միջոցի շարունակման կամ շտապ թարմացման նկատմամբ, կամ
 - գ) «ա» ենթակետում նշված՝ որևէ չհամապատասխանող միջոցի փոփոխության նկատմամբ՝ այնքանով, որքանով այդ փոփոխությունը չի նվազեցնում այդ միջոցի (այնպես, ինչպես այն եղել է մինչև փոփոխությունը) 3.5-րդ հոդվածին (Ազգային ռեժիմը), 3.6-րդ հոդվածին (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), 3.8-րդ հոդվածին (Գործողություններին ներկայացվող պահանջները) և 3.9-րդ հոդվածին (Բարձրաստիճան ղեկավարությունը և տնօրենների խորհուրդը) համապատասխանությունը:
2. 3.5-րդ հոդվածը (Ազգային ռեժիմը), 3.6-րդ հոդվածը (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), 3.8-րդ հոդվածը (Գործողություններին ներկայացվող պահանջները) և 3.9-րդ հոդվածը (Բարձրաստիճան ղեկավարությունը և տնօրենների խորհուրդը) չեն կիրառվում որևէ այնպիսի միջոցի նկատմամբ, որը Կողմի կողմից ընդունվում կամ իրականացվում է ոլորտների, ենթաոլորտների կամ գործունեության մասով՝ II հավելվածի իրեն առնչվող առդիրին համապատասխան:

3. Կողմերից որևէ մեկը չի կարող սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ընդունված և II հավելվածի իրեն առնչվող առդիրում նշված միջոցի շրջանակներում մյուս Կողմի ներդրողից, նրա քաղաքացիության պատճառով, պահանջել վաճառել կամ այլ ձևով տնօրինել այն ներդրումը, որը գոյություն է ունեցել այն ժամանակ, երբ միջոցն ուժի մեջ է մտել:
4. 3.5-րդ հոդվածը (Ազգային ռեժիմը) և 3.6-րդ հոդվածը (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը) չեն կիրառվում այնպիսի միջոցի նկատմամբ, որը համարվում է Կողմի՝ ՄՍԻԱՀ համաձայնագրով ստանձնած պարտականություններից բացառություն կամ վերապահում, ինչպես հատուկ նախատեսված է այդ համաձայնագրով:
5. 3.5-րդ հոդվածը (Ազգային ռեժիմը), 3.6-րդ հոդվածը (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), և 3.9-րդ հոդվածը (Բարձրաստիճան ղեկավարությունը և տնօրենների խորհուրդը) չեն կիրառվում պետական գնումների նկատմամբ:

Հոդված 3.11 Օտարումը²⁰

1. Որևէ Կողմ չպետք է ազգայնացնի, պետականացնի կատարված ներդրումը կամ այն ենթարկի ազգայնացմանը կամ պետականացմանը համարժեք ազդեցություն ունեցող միջոցներին (այսուհետ՝ օտարում), բացառությամբ եթե այդ միջոցը ձեռնարկվել է ոչ խտրական հիմունքներով, հանրային նպատակներով՝ պատշաճ իրավական ընթացակարգին համապատասխան և սույն հոդվածի համաձայն սահմանված փոխհատուցման վճարմամբ:
2. Օտարումը պետք է ուղեկցվի, Սինգապուրի դեպքում՝ արագ, իսկ Հայաստանի դեպքում՝ նախապես, ինչպես նաև համարժեք և արդյունավետ փոխհատուցման վճարմամբ: Փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրման՝ օտարման կամ մոտ ապագայում սպասվող օտարման մասին հանրությանը հայտնի դառնալուց անմիջապես առաջ գործող իրական շուկայական արժեքին: Այդ փոխհատուցումը պետք է լինի արդյունավետորեն իրագործելի, ազատ փոխանցելի՝ 3.12-րդ հոդվածին (Փոխանցումները) համապատասխան, ինչպես նաև կատարվի առանց ուշացման: Փոխհատուցումը պետք է ներառի տվյալ արժույթի համար սահմանված առևտրային խելամիտ տոկոսադրույքը, որը հաշվարկվում է օտարման օրվանից մինչև փաստացի վճարումը:
3. Սինգապուրի դեպքում, չնայած 1-ին և 2-րդ կետերին, հողի հետ կապված օտարման ցանկացած միջոց, որը սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու

²⁰ 3.11-րդ հոդվածը (Օտարումը) պետք է մեկնարանվի 3-Ա հավելվածին (Օտարում) համապատասխան:

օրվա դրությամբ սահմանված է գործող ներպետական օրենսդրությամբ, պետք է ձեռնարկվի վերոնշյալ օրենսդրությամբ սահմանված նպատակին համապատասխան և փոխհատուցումը վճարելուց հետո:

4. Սույն հոդվածը չի կիրառվում մտավոր սեփականության իրավունքների հետ կապված պարտադիր լիցենզիաների տրամադրման նկատմամբ՝ համաձայն ՄՄԻԱՀ համաձայնագրի կամ մտավոր սեփականության իրավունքը չեղյալ հայտարարելու, սահմանափակելու կամ առաջացնելու նկատմամբ այնքանով, որքանով այն տրամադրելը, չեղյալ հայտարարելը, սահմանափակելը կամ առաջացնելը համապատասխանում են ՄՄԻԱՀ համաձայնագրին²¹:

Հոդված 3.12 Փոխանցումները

1. Յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս, որ կատարված ներդրումների հետ կապված՝ դեպի իր տարածք կամ իր տարածքից դուրս փոխանցումները կատարվեն ազատ և առանց ուշացման: Այդ փոխանցումները ներառում են՝

- ա) ներդրումները կապիտալում՝ ներառյալ սկզբնական ներդրումը.
- բ) շահույթը, շահաբաժինները, ակտիվի արժեքի հավելանքը և ամբողջ ներդրման կամ դրա որևէ մասի վաճառքից կամ ներդրման մասնակի կամ ամբողջական լիկվիդացիայից ստացված եկամուտները.
- գ) տոկոսները, ոռյալթիները, կառավարման վճարները, ինչպես նաև տեխնիկական աջակցությունը և այլ վճարները.
- դ) ներդրողի պայմանագրին համապատասխան կատարված կամ նրա ներդրումների հետ կապված վճարումները՝ ներառյալ վարկային պայմանագրով կատարվող վճարումները.
- ե) 3.7-րդ հոդվածի (Վնասների փոխհատուցումը) և 3.11-րդ հոդվածի (Օտարումը) համաձայն կատարված վճարումները, և
- զ) Բ բաժնում (Ներդրողների և պետության միջև ծագած վեճերի կարգավորումը) սահմանված վճարումները:

2. Յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս, որ այդ փոխանցումները կատարվեն ազատ փոխարկելի արժույթով՝ փոխանցման դրությամբ տարադրամի փոխանակման հիմնական շուկայական փոխարժեքով:

3. Յուրաքանչյուր Կողմ թույլ է տալիս, որ կատարված ներդրման հետ կապված բնաիրային եկամուտները կատարվեն Կողմի և կատարված ներդրման կամ մյուս Կողմի ներդրողի միջև գրավոր համաձայնությամբ լիազորված կամ նշված ձևով:

²¹ Առավել հստակության համար, Կողմերը գիտակցում են, որ սույն հոդվածի նպատակով, մտավոր սեփականության իրավունքը «չեղյալ հայտարարել» եզրույթը ներառում է այդ իրավունքների դադարեցումը կամ անվավեր ճանաչումը, իսկ մտավոր սեփականության իրավունքների «սահմանափակում» եզրույթը ներառում է այդ իրավունքների բացառությունները:

4. Չնայած 1-ին, 2-րդ և 3-րդ կետերին՝ Կողմը կարող է հետաձգել կամ կանխել փոխանցումը՝ իր այն օրենքների համարժեք, ոչ խտրական և բարեխիղճ կիրառմամբ, որոնք առնչվում են՝

- ա) սնանկությանը, անվճարունակությանը կամ պարտատերերի իրավունքների պաշտպանությանը.
- բ) արժեթղթերի, օպցիոնների, ֆյուչերսների կամ այլ ածանցյալ գործիքների թողարկմանը, առքուվաճառքին կամ դիլինգին.
- գ) փոխանցումների վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների կամ հաշիվների վարմանը, երբ անհրաժեշտ է աջակցել իրավապահ կամ ֆինանսական համակարգը կարգավորող մարմիններին.
- դ) քրեական կամ քրեորեն պատժելի հանցանքներին.
- ե) դատական կամ վարչական վարույթներով որոշումների կամ վճիռների կատարման ապահովմանը.
- զ) սոցիալական անվտանգությանը, պետական կենսաթոշակային ապահովմանը կամ պարտադիր խնայողությունների համակարգերին:

5. Սույն գլխում ոչինչ չի ազդում ԱՄՀ անդամների այն իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք սահմանված են ԱՄՀ *համաձայնագրի հոդվածներով* ներառյալ արժուպային գործառնություններից օգտվելը, որոնք համապատասխանում են Համաձայնագրի նշված հոդվածներին, եթե Կողմը կապիտալի շարժի հետ կապված գործարքների նկատմամբ չի կիրառում այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն համապատասխանում այդ գործարքներին վերաբերող՝ սույն գլխի դրույթներով ստանձնած իր հատուկ պարտավորություններին՝ բացառությամբ 6.7-րդ հոդվածի (վճարային հաշվեկշռի ապահովման նպատակով արվող սահմանափակումները) կամ ԱՄՀ պահանջի համաձայն կիրառվող սահմանափակումների:

Հոդված 3.13 **Սուբրոգացիա**

1. Եթե Կողմը (կամ դրա կողմից նշանակված որևէ գործակալություն, հաստատություն, կանոնադրական մարմին կամ կորպորացիա) կատարված ներդրման մասով իր կողմից տրամադրված երաշխիքի, ապահովագրության պայմանագրի հիման վրա կամ այլ կերպ արված փոխհատուցմամբ վճարել է իր ներդրողին, ապա մյուս Կողմը պետք է ճանաչի սուբրոգացիան կամ այդ ներդրման հետ կապված՝ ներդրողի ցանկացած իրավունքի կամ սեփականության իրավունքի փոխանցումը: Ձիջված կամ փոխանցված իրավունքը կամ պահանջը չպետք է լինի ավելի ընդգրկուն, քան ներդրողի սկզբնական իրավունքը կամ պահանջը:

2. Եթե Կողմը (կամ դրա կողմից նշանակված որևէ գործակալություն,

հաստատություն, կանոնադրական մարմին կամ կորպորացիա) վճարել է այդ Կողմի ներդրողին, և նրան են փոխանցվել այդ ներդրողի իրավունքներն ու պահանջները, ապա տվյալ ներդրողը, բացառությամբ այն դեպքի, երբ նա լիազորված է գործելու Կողմի կամ այդ վճարող Կողմի նշանակած գործակալության անունից, չպետք է մյուս Կողմին ներկայացնի այդ իրավունքներն ու պահանջները:

ԲԱԺԻՆ Բ

Ներդրողների և պետության միջև ծագած վեճերի կարգավորում

Հոդված 3.14

Գործողության շրջանակը

1. Սույն բաժինը կիրառվում է Կողմերից մեկի և մյուս Կողմի ներդրողի միջև այն ներդրումային վեճերի դեպքում, որոնք վերաբերում են սույն գլխի համաձայն՝ առաջին Կողմի կողմից պարտավորության ենթադրյալ խախտմանը, ինչը ներդրողի համար կամ նրա ներդրումների հետ կապված՝ առաջացրել է կորուստ կամ վնաս:
2. Սույն բաժինը չի կիրառվում ծխախոտի կամ ծխախոտային արտադրատեսակների հետ կապված՝ Կողմի կողմից ընդունված կամ իրականացված որևէ միջոցի կամ ներդրողներին կամ ներդրումների մասով տրամադրված որևէ ռեժիմի առնչվող վեճի նկատմամբ²²:

Հոդված 3.15

Արբիտրաժային վարույթ հարուցելը

1. Վեճի կողմերը նախ և առաջ պետք է ձգտեն վեճը լուծել խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:
2. Եթե վեճը չի կարող լուծվել 1-ին կետում սահմանված կարգով՝ խորհրդակցությունների և բանակցությունների համար գրավոր պահանջը ներկայացնելու օրվանից 6 ամսվա ընթացքում, ապա հայցվորը կարող է արբիտրաժին ներկայացնել հետևյալը՝
 - ա) իր անունից հայց այն մասին, որ պատասխանողը խախտել է սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունը, և հայցվորն այդ խախտման հետևանքով կամ դրա արդյունքում կրել է կորուստ կամ վնաս, կամ

²² Սույն գլխի նպատակով «ծխախոտ կամ ծխախոտային արտադրատեսակներ» նշանակում է Ներդաշնակեցված համակարգի 24-րդ գլխում (Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ) ընդգրկված արտադրատեսակներ և Ներդաշնակեցված համակարգի 24-րդ գլխի (Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ) մեջ չընդգրկված ծխախոտային արտադրատեսակներ:

- բ) հայցվորին պատկանող կամ նրա կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվող²³ պատասխանողի ձեռնարկության անունից հայց այն մասին, որ պատասխանողը խախտել է սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունը, և այդ խախտման հետևանքով կամ դրա արդյունքում ձեռնարկությունը կրել է կորուստ կամ վնաս:
3. Հայցվորը կարող է հայց ներկայացնել արբիտրաժ՝
- ա) համաձայն ՆՎԿՄԿ կոնվենցիայի և ՆՎԿՄԿ արբիտրաժային կանոնների՝ պայմանով, որ երկու Կողմերն էլ ՆՎԿՄԿ կոնվենցիայի կողմ են.
 - բ) համաձայն ՆՎԿՄԿ լրացուցիչ ընթացակարգի կանոնների՝ պայմանով, որ Կողմերից մեկը, սակայն ոչ երկուսը, ՆՎԿՄԿ Կոնվենցիայի կողմ է.
 - գ) համաձայն ՄԱԿՄԱԻՀ արբիտրաժային կանոնների, կամ
 - դ) որևէ այլ արբիտրաժային հաստատություններ կամ համաձայն ցանկացած այլ արբիտրաժային կանոնների, եթե վեճի կողմերը գալիս են այդպիսի համաձայնության:
4. Կողմերից յուրաքանչյուրը սույնով համաձայնում է, 3-րդ կետի համաձայն, վեճը ներկայացնել արբիտրաժի կարգավորմանը՝ սույն բաժնի դրույթներին համապատասխան՝ պայմանով, որ՝
- ա) վեճն այդ արբիտրաժի կարգավորմանը ներկայացնելու գործընթացը տեղի ունենա երեք տարվա ընթացքում, ինչը հաշվարկվում է այն պահից, երբ հայցվորը տեղեկացել է կամ ողջամտորեն պետք է տեղյակ լիներ սույն Համաձայնագրով սահմանված պարտավորության խախտման մասին, ինչի հետևանքով էլ կորուստ կամ վնաս է պատճառվել հայցվորին կամ նրա ներդրմանը.
 - բ) հայցվորը չլինի պատասխանողի ձեռնարկությունը՝ մինչև այն պահը, երբ 3-րդ կետի համաձայն, հայցվորի կողմից վեճն արբիտրաժի կարգավորմանն է ներկայացվել.
 - գ) հայցվորը տրամադրի արբիտրաժի վերաբերյալ գրավոր համաձայնությունը՝ սույն բաժնում սահմանված դրույթներին համապատասխան. և
 - դ) հայցվորը պատասխանողին տրամադրի՝ վեճն արբիտրաժի

²³ Համարվում է, որ ձեռնարկությունը՝

- ա) պատկանում է մյուս Կողմի ֆիզիկական անձանց կամ ձեռնարկություններին, եթե դրա մասնաբաժինների 50 տոկոսից ավելին փաստացի պատկանում է այդ Կողմի ֆիզիկական անձանց կամ ձեռնարկություններին.
- բ) վերահսկվում է մյուս Կողմի ֆիզիկական անձանց կամ ձեռնարկությունների կողմից, եթե այդ ֆիզիկական անձինք և ձեռնարկություններն իրավասու են նշանակելու դրա տնօրենների մեծամասնությանը կամ այլ կերպ օրինական կարգով ուղղորդելու դրա գործողությունները:

կարգավորմանը ներկայացնելու իր մտադրության մասին գրավոր ծանուցում, որը պետք է առաքվի հայրը ներկայացնելուց առաջ առնվազն իննսուն (90) օրվա ընթացքում. և

- i) որի մեջ նշվում է հայցվորի անունն ու հասցեն, իսկ վեճը ձեռնարկության անունից ներկայացվելու դեպքում՝ այդ ձեռնարկության անվանումը, հասցեն և հիմնադրման վայրը.
- ii) որի մեջ առաջարկվում է 3-րդ կետում նշված՝ վեճի լուծման տրիբունալներից մեկը.
- iii) որն ուղեկցվում է՝
 - Ա) հայցվորի գրավոր հրաժարմամբ՝ 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն արբիտրաժ ներկայացված հայցերի դեպքում. և
 - Բ) հայցվորի և ձեռնարկության գրավոր հրաժարմամբ՝ 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն արբիտրաժ ներկայացված հայցերի դեպքում.

վիճարկվող հարցի առնչությամբ 3-րդ կետում նշված վեճերի լուծման մյուս տրիբունալներից որևէ մեկում որևէ այլ վարույթ (բացառությամբ 3.20-րդ հոդվածի 1-ին կետում նշված պաշտպանության ժամանակավոր միջոցների) հարուցելու կամ շարունակելու իրավունքից. և

- iv) որի մեջ հակիրճ ամփոփվում է սույն Համաձայնագրի համաձայն՝ պատասխանողի ենթադրյալ խախտումը (այդ թվում՝ ենթադրաբար խախտված դրույթները), վեճի իրավական և փաստական հիմքերը, և այդ խախտման հետևանքով հայցվորին կամ նրա ներդրմանը ենթադրաբար պատճառված կորուստը կամ վնասը:

5. Պատասխանողի պահանջով տրիբունալը հրաժարվում է քննել հայրը, եթե հայցվորը չի կատարում 4-րդ կետում նշված պահանջներից որևէ մեկը:

6. 4-րդ կետով նախատեսված համաձայնությունը և սույն բաժնի համաձայն՝ արբիտրաժ հայց ներկայացնելը պետք է բավարարեն՝

- ա) ՆՎԿՄԿ կոնվենցիայի II գլխի (Կենտրոնի իրավագործությունը) և ՆՎԿՄԿ լրացուցիչ ընթացակարգի կանոններով սահմանված պահանջները, որոնք ներկայացվում են վեճի կողմերի գրավոր համաձայնությանը, և
- բ) Նյու Յորքի կոնվենցիայի II հոդվածի պահանջները, որոնք ներկայացվում են «գրավոր համաձայնությանը»:

7. Նյու Յորքի կոնվենցիայի I-ին հոդվածի նպատակներով, սույն բաժնի համաձայն՝ արբիտրաժի կարգավորմանը ներկայացված հայրը համարվում է առևտրային հարաբերություններից կամ գործարքից ծագած պահանջ:

Հողված 3.16 **Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը**

1. Վեճի կողմերի կողմից այլ համաձայնության չգալու դեպքում արբիտրաժային տրիբունալը կազմավորվում է երեք արբիտրների կազմով, որոնք չպետք է լինեն որևէ Կողմի քաղաքացի կամ մշտական ռեզիդենտ: Վեճի կողմերից յուրաքանչյուրը նշանակում է մեկ արբիտր, և վեճի կողմերը համաձայնության են գալիս երրորդ արբիտրի շուրջ, որը պետք է լինի արբիտրաժային տրիբունալի նախագահ: Եթե հայցն արբիտրաժ ներկայացնելու օրվանից իննսուն (90) օրվա ընթացքում չի կազմավորվում արբիտրաժային տրիբունալ այն պատճառով, որ վեճի կողմը չի նշանակել արբիտր կամ վեճի կողմերը համաձայնության չեն եկել նախագահի նշանակման հարցում, ապա, վեճի որևէ կողմի պահանջով, ՆՎԿՄԿ-ի գլխավոր քարտուղարն իր հայեցողությամբ նշանակում է մինչ այդ պահը չնշանակված արբիտր կամ արբիտրներ:

2. 1-ին կետի նպատակով, եթե ՆՎԿՄԿ-ի գլխավոր քարտուղարը որևէ Կողմի քաղաքացի է կամ մշտական ռեզիդենտ կամ որևէ այլ հիմքով իրավասու չէ որոշում ընդունելու, ապա՝ ՆՎԿՄԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալը կամ ըստ պաշտոնի ավագության հաջորդ պաշտոնյան, որոնք չեն հանդիսանում որևէ Կողմի քաղաքացի կամ մշտական ռեզիդենտ իրականացնում են անհրաժեշտ նշանակումը կամ նշանակումները:

3. Արբիտրները պետք է՝

- ա) միջազգային հանրային իրավունքի կամ միջազգային ներդրումային իրավունքի ոլորտում ունենան փորձ կամ փորձառություն, և
- բ) լինեն անկախ՝ Կողմերից և վեճի կողմ ներդրողից, ինչպես նաև չլինեն նրանցից մեկի հետ փոխկապակցված անձ կամ չստանան նրանցից ցուցումներ:

Հողված 3.17 **Մեկնաբանման կանոնները**

Կողմերը կարող են ընդունել սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանությունները: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանության վերաբերյալ Կողմերի համատեղ որոշումը պարտադիր է տրիբունալի համար, իսկ տրիբունալի կողմից կայացված ցանկացած որոշում կամ վճիռ պետք է համապատասխանի այդ համատեղ որոշմանը:

Հողված 3.18 **Արբիտրաժի վայրը**

Եթե վեճի կողմերն այլ համաձայնության չեն գալիս, ապա տրիբունալը

որոշում է արքիտրաժի վայրը՝ արքիտրաժային կիրառելի կանոններին համապատասխան՝ պայմանով, որ այն լինի Նյու Յորքի կոնվենցիայի կողմ հանդիսացող որևէ պետության տարածքում:

Հոդված 3.19 **Արքիտրաժի իրականացումը**

1. Սույն բաժնի համաձայն ստեղծված տրիբունալը վեճի առարկա հանդիսացող հարցերով որոշում է կայացնում սույն Համաձայնագրին, ինչպես նաև միջազգային իրավունքի կիրառելի կանոններին և սկզբունքներին համապատասխան:

2. Չսահմանափակելով տրիբունալի՝ որպես նախնական քննարկման ենթակա հարց այլ առարկություններ դիտարկելու լիազորությունը, ինչպիսիք են օրինակ՝ առարկությունն այն մասին, որ վեճը ենթակա չէ տրիբունալի իրավասությանը, այդ թվում՝ տրիբունալի իրավազորության հետ կապված առարկությունը, տրիբունալը՝ որպես նախնական քննարկման ենթակա հարց, դիտարկում է պատասխանողի կողմից ներկայացված ցանկացած առարկություն այն մասին, որ ներկայացված հայցն իրավական տեսանկյունից չի համարվում այնպիսի պահանջ, որի առնչությամբ կարող է, 3.21-րդ հոդվածի (Վճիռը) համաձայն՝ կայացվել վճիռ հայցվորի օգտին, ինչպես նաև որոշում է կայացնում դրա վերաբերյալ:

- ա) Այդպիսի առարկությունը ներկայացվում է տրիբունալ այն ձևավորվելուց հետո հնարավորինս շուտ և ոչ ավելի ուշ, քան տրիբունալի կողմից պատասխանող կողմին պատասխան ներկայացնելու համար սահմանված օրը (կամ արքիտրաժի վերաբերյալ ծանուցման մեջ փոփոխություն կատարելու դեպքում՝ տրիբունալի կողմից պատասխանողի համար այդ փոփոխության առնչությամբ պատասխան ներկայացնելու համար սահմանված օրը):
- բ) Սույն կետով նախատեսված առարկությունն ստանալու դեպքում տրիբունալը կասեցնում է գործի ըստ էության քննության ցանկացած վարույթ, սահմանում առարկության քննության համար ժամանակացույց՝ այլ նախնական հարց քննելու համար իր կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան, և առարկության վերաբերյալ կայացնում է որոշում կամ վճիռ՝ ներկայացնելով դրա հիմքերը:
- գ) Սույն կետով նախատեսված առարկության վերաբերյալ որոշում կայացնելիս տրիբունալը ճշմարիտ է համարում արքիտրաժի վերաբերյալ ծանուցման (կամ դրա ցանկացած փոփոխության) մեջ առկա ցանկացած պահանջ հիմնավորող՝ հայցվորի փաստական պնդումները, և ՄԱԿՄԱԻՀ արքիտրաժային կանոնների համաձայն ներկայացված վեճերի դեպքում՝ ՄԱԿՄԱԻՀ արքիտրաժային

կանոնների համապատասխան հողվածում նշված հայցապահանջը: Տրիբունալը կարող է նաև ուսումնասիրել չվիճարկվող ցանկացած վերաբերելի փաստ:

- դ) Պատասխանողը չի հրաժարվում իրավասության վերաբերյալ որևէ առարկությունից կամ գործի էության վերաբերյալ որևէ փաստարկից միայն այն պատճառով, որ պատասխանողը հայտնել է կամ չի հայտնել առարկություն սույն կետի համաձայն, կամ էլ օգտվել է կամ չի օգտվել 3-րդ կետով սահմանված արագացված ընթացակարգից:

3. Տրիբունալը կազմավորվելուց հետո քառասունհինգ (45) օրվա ընթացքում պատասխանողի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում տրիբունալն արագացված կարգով որոշում է կայացնում 2-րդ կետի համաձայն ներկայացված առարկության կամ վեճը տրիբունալի իրավասությանը ենթակա չլինելու հետ կապված առարկության վերաբերյալ՝ ներառյալ այն առարկությունը, որ վեճը չի գտնվում տրիբունալի իրավագործության ներքո: Տրիբունալը, պահանջը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան հարյուր հիսուն (150) օր հետո, կասեցնում է գործի ըստ էության քննության վարույթը և առարկության (առարկությունների) վերաբերյալ կայացնում է որոշում կամ վճիռ՝ դրա համար ներկայացնելով հիմնավորում: Այնուամենայնիվ, եթե վեճի կողմը պահանջում է լսում, ապա տրիբունալը կարող է վերցնել լրացուցիչ երեսուն (30) օր՝ որոշում կամ վճիռ կայացնելու համար: Անկախ այն բանից՝ պահանջվում է լսում, թե՛ ոչ, տրիբունալը կարող է, բացառիկ դեպքերում, իր կողմից որոշում կամ վճիռ կայացնելու գործընթացը հետաձգել լրացուցիչ կարճ ժամկետով, որը չի կարող գերազանցել երեսուն (30) օրը:

4. 2-րդ կամ 3-րդ կետերի համաձայն՝ պատասխանողի առարկության վերաբերյալ որոշում կայացնելիս տրիբունալը, հիմնավորված լինելու դեպքում, կարող է վեճը հաղթող կողմին փոխհատուցել այն ողջամիտ ծախսերն ու փաստաբանի ծառայությունների հետ կապված վճարները, որոնք վերջինս կրել է առարկություն ներկայացնելիս կամ դրա հետ չհամաձայնելիս: Այդպիսի փոխհատուցման հիմնավորված լինելու հարցը որոշելիս տրիբունալը հաշվի է առնում այն, թե արդյոք հայցվորի կողմից ներկայացված պահանջը կամ պատասխանողի առարկությունը հիմնավորված է, և մեկնաբանություններ կատարելու ողջամիտ հնարավորություն է տալիս վեճի կողմերին:

Հոդված 3.20

Պաշտպանության ժամանակավոր միջոցները և դիվանագիտական պաշտպանությունը

1. 3.15-րդ հոդվածի (Արբիտրաժային վարույթ հարուցելը) 4-րդ կետի «դ»-«iii» ենթակետով չի արգելվում, որ հայցվորը, իր իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով, նախքան 3.15-րդ հոդվածի (Արբիտրաժային վարույթ հարուցելը) 3-րդ կետով նշված վեճերի լուծման տրիբունալներում

վարույթ հարուցելը, հայցի պաշտպանության այնպիսի ժամանակավոր միջոցներ, որոնք չեն ենթադրում վնասի հատուցում կամ վեճի առարկա համարվող հարցի լուծում պատասխանողի տարածքում գտնվող դատարաններում կամ վարչական տրիբունալներում:

2. Որևէ Կողմ չի տրամադրում դիվանագիտական պաշտպանություն կամ միջազգային ատյաններում չի ներկայացնում բողոք այն վեճի առնչությամբ, որն իր ներդրողը և մյուս Կողմը համաձայնել են ներկայացնել արբիտրաժ կամ արդեն իսկ ներկայացրել են արբիտրաժ՝ համաձայն սույն բաժնի, բացառությամբ եթե այդ մյուս Կողմը չի ենթարկվում այդ վեճի վերաբերյալ կայացրած վճռին և չի կատարում այն: Սույն կետի նպատակներով՝ դիվանագիտական պաշտպանությունը չի ներառում ոչ պաշտոնական դիվանագիտական փոխանակումներ՝ բացառապես վեճի կարգավորումը հեշտացնելու նպատակով:

Հոդված 3.21 Վճիռը

1. Եթե տրիբունալը պատասխանողի դեմ կայացնում է վերջնական վճիռ, ապա այն կարող է առանձին կամ միևնույն փաստաթղթով վճիռ կայացնել միայն՝

- ա) դրամական վնասի և կիրառելի տոկոսի վերաբերյալ, և
- բ) գույքի վերադարձի վերաբերյալ, որի դեպքում վճռով պետք է ապահովվի, որ, որպես ռեստիտուցիա, պատասխանողը կարող է կատարել դրամական վնասի փոխհատուցում և վճարել կիրառելի տոկոսները:

Տրիբունալը կարող է նաև վճիռ կայացնել ծախսերի և փաստաբանի ծառայությունների դիմաց վճարների վերաբերյալ՝ սույն բաժնին և կիրառելի արբիտրաժային կանոններին համապատասխան:

2. Արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված վճիռը վերջնական է և պարտադիր ուժ ունի վեճի կողմերի համար: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է վճռի ճանաչումը և կատարումը՝ համաձայն իր համապատասխան օրենքների և կանոնակարգերի:

3. Եթե պահանջը ներկայացվում է պատասխանողի ձեռնարկության անունից, ապա արբիտրաժի կողմից վճիռը կայացվում է ձեռնարկության նկատմամբ:

4. Սույն բաժնի համաձայն իրականացված արբիտրաժի դեպքում, վեճի կողմի պահանջով, տրիբունալը պատասխանատվության վերաբերյալ որոշում կամ վճիռ կայացնելուց առաջ իր կողմից առաջարկվող որոշումը կամ վճիռը փոխանցում է վեճի կողմերին: Տրիբունալի կողմից առաջարկվող որոշումը կամ վճիռը փոխանցելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում վեճի կողմերը կարող են առաջարկվող որոշման կամ վճռի ցանկացած հայեցակետի վերաբերյալ

գրավոր մեկնաբանությունները ներկայացնել տրիբունալ: Տրիբունալն ուսումնասիրում է բոլոր այդ մեկնաբանությունները և իր որոշումը կամ վճիռը կայացնում է ոչ ուշ, քան մեկնաբանություններ կատարելու համար նախատեսված վաթսուօրյա (60) ժամանակահատվածը լրանալուց հետո քառասուն հինգ (45) օրվա ընթացքում:

Հոդված 3.22 Ծախսերը

1. Տրիբունալը որոշում է կայացնում այն մասին, որ վարույթի հետ կապված ծախսերը պետք է կրի պարտվող կողմը: Բացառիկ հանգամանքներում տրիբունալը կարող է ծախսերը բաշխել վեճի կողմերի միջև, եթե հանգում է այն եզրակացության, որ ծախսերի բաշխումը հիմնավորվում է գործի հանգամանքներով:
2. Այլ ողջամիտ ծախսեր, այդ թվում՝ իրավական ներկայացուցչության և օգնության հետ կապված ծախսերը կրում է վեճի պարտվող կողմը, եթե տրիբունալը չի սահմանում, որ այդպիսի բաշխումը ողջամիտ չէ տվյալ գործի հանգամանքներում:
3. Այն դեպքում, երբ բավարարվում են հայցի միայն որոշ մասերը, ծախսերը համամասնորեն համապատասխանեցվում են հայցերի բավարարված մասերին ու չափին:
4. Համապատասխան պահանջ ներկայացնելու դեպքում տրիբունալը կարող է որոշում ընդունել այն մասին, որ հայցվորը պետք է տրամադրի հայցի ապահովման միջոցներ բոլոր ծախսերի կամ դրանց մի մասի վճարման մասով, եթե առկա են ողջամիտ հիմքեր՝ ենթադրելու համար, որ հայցվորը ենթակա է ծախսերի վերաբերյալ իր դեմ կայացված հնարավոր որոշումը կատարելու հնարավորություն չունենալու վտանգին:
5. Եթե տրիբունալի կողմից որոշում ընդունելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում կամ տրիբունալի կողմից սահմանված ցանկացած այլ ժամկետում ամբողջությամբ չի տրամադրվում ծախսերի վճարման մասով հայցի ապահովման միջոց, ապա տրիբունալն այդ մասին տեղեկացնում է վեճի կողմերին: Տրիբունալը կարող է վարույթը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշում ընդունել:

Հոդված 3.23 Պահանջների միավորումը

1. Եթե սույն բաժնի համաձայն՝ երկու կամ ավելի առանձին հայցեր են ներկայացվել արբիտրաժ և այդ հայցերը պարունակում են իրավունքի կամ փաստի հետ կապված ընդհանուր հարցեր և բխում են միևնույն իրավիճակից կամ հանգամանքներից, ապա կողմերից որևէ մեկը կարող է պահանջների

միավորման մասին միջնորդություն ներկայացնել՝ այդ մասին համաձայնության գալով վեճի այն բոլոր կողմերի միջև, որոնց պետք է վերաբերի տվյալ որոշումը կամ որոնց վերաբերում են սույն հոդվածի դրույթները:

2. Սույն հոդվածի համաձայն՝ պահանջների միավորման մասին միջնորդություն ներկայացնող կողմը գրավոր պահանջ է ուղարկում ՆՎԿՄԿ-ի գլխավոր քարտուղարին և վեճի այն բոլոր կողմերին, որոնց վերաբերելու է տվյալ որոշումը՝ նշելով վեճի այն բոլոր կողմերի անուններն ու հասցեները, որոնց վերաբերելու է այդ որոշումը, ինչպես նաև նշելով միջնորդության հիմքերը:

3. Եթե 2-րդ կետին համապատասխան միջնորդությունն ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում ՆՎԿՄԿ-ի գլխավոր քարտուղարը չի համարում, որ այդ միջնորդությունն ակնհայտ անհիմն է, ապա տրիբունալը ձևավորվում է սույն Համաձայնագրի համաձայն:

4. Եթե վեճի այն բոլոր կողմերը, որոնց վերաբերելու է պահանջների միավորման մասին որոշումը, այլ համաձայնության չեն գալիս, ապա սույն Համաձայնագրին համապատասխան ձևավորված տրիբունալը պետք է կազմված լինի երեք արբիտրներից՝

- ա) մեկ արբիտրը նշանակվում է վեճի կողմ հանդիսացող ներդրողների կողմից.
- բ) մեկ արբիտրը նշանակվում է պատասխանողի կողմից, և
- գ) արբիտրաժային տրիբունալի նախագահը նշանակվում է ՆՎԿՄԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից:

5. Եթե 2-րդ կետի համաձայն՝ ներկայացված միջնորդությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում պատասխանողը կամ վեճի կողմ հանդիսացող ներդրողները, 4-րդ կետին համապատասխան, չեն նշանակում արբիտրներ, ապա Գլխավոր քարտուղարը վեճի կողմերից որևէ մեկի միջնորդությամբ, որին վերաբերելու է որոշումը, նշանակում է մինչ այդ պահը չնշանակված արբիտր կամ արբիտրներ:

6. Եթե սույն հոդվածի համաձայն՝ ստեղծված տրիբունալին բավարարում է այն հանգամանքը, որ 3.15-րդ հոդվածի (Արբիտրաժային վարույթ հարուցելը) համաձայն՝ արբիտրաժ ներկայացված երկու կամ ավելի հայցերն ունեն իրավունքի կամ փաստի հետ կապված ընդհանուր հարց և բխում են միևնույն իրավիճակներից կամ հանգամանքներից, ապա, հայցերի արդար և արդյունավետ լուծման նպատակով և վեճի կողմերին լսելուց հետո, տրիբունալը կարող է որոշում ընդունելու միջոցով՝

- ա) բոլոր հայցերը կամ դրանց մի մասը վերցնել իր իրավազորության ներքո, ինչպես նաև դրանց մասով իրականացնել լուծումներ և որոշում ընդունել,
- բ) մեկ կամ մեկից ավելի հայցերը վերցնել իր իրավազորության ներքո, ինչպես նաև իրականացնել լուծումներ և որոշում ընդունել մեկ կամ մեկից ավելի հայցերի մասով, ինչը, ըստ տրիբունալի, կարող է

- աջակցել մյուս հայցերի լուծման գործին, կամ
- գ) ցուցումներ տալ 3.16-րդ հոդվածի (Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը) համաձայն նախկինում ստեղծված տրիբունալին՝ բոլոր հայցերը կամ դրանց մի մասն իր իրավազորության ներքո վերցնելու, ինչպես նաև դրանց մասով համատեղ լուծումներ անցկացնելու և որոշում ընդունելու համար՝ պայմանով, որ՝
- i) այդ տրիբունալը, դրանում նախկինում վեճի կողմ չհամարվող վեճի կողմ ներդրողներից որևէ մեկի պահանջով վերակազմավորվի իր սկզբնական անդամներով՝ այն բացառությամբ, որ վեճի կողմ հանդիսացող ներդրողների կողմից արբիտրները նշանակվում են 4-րդ կետի «ա» ենթակետի և 5-րդ կետի համաձայն, և
 - ii) այդ տրիբունալը որոշի, թե արդյոք նախկինում տեղի ունեցած որևէ լուծում պետք է կրկնվի, թե՛ ոչ:

7. Եթե տրիբունալը ստեղծվել է սույն հոդվածի համաձայն, ապա 3.15-րդ հոդվածի (Արբիտրաժային վարույթ հարուցելը) համաձայն արբիտրաժ հայց ներկայացրած և 2-րդ կետի համաձայն ներկայացված միջնորդությունում չնշված վեճի կողմ հանդիսացող ներդրողը կարող է տրիբունալ ներկայացնել գրավոր պահանջ այն մասին, որ ինքը պետք է ընդգրկվի 6-րդ կետի համաձայն ընդունված որոշման մեջ՝ նշելով հետևյալը՝

- ա) վեճի կողմ հանդիսացող ներդրողի անունը և հասցեն.
- բ) միջնորդությամբ հայցվող որոշման բնույթը, և
- գ) այն հիմնավորումները, որոնց հիման վրա որոշում ընդունելու միջնորդություն է ներկայացվում:

Հայցվորը Գլխավոր քարտուղարին տրամադրում է իր միջնորդության օրինակը:

8. Սույն հոդվածի համաձայն ստեղծված տրիբունալը վարույթն իրականացնում է ՄԱԿՄԱԻՀ արբիտրաժային կանոններին համապատասխան՝ բացառությամբ սույն բաժնի համաձայն փոփոխվածների:

9. 3.16-րդ հոդվածի (Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը) համաձայն ստեղծված տրիբունալը չունի այն հայցի կամ հայցի մի մասի վերաբերյալ որոշում կայացնելու իրավազորություն, որի նկատմամբ իրավազորություն է ստանձնել սույն հոդվածի համաձայն ստեղծված տրիբունալը:

10. Վեճի կողմ հանդիսացող ներդրողի դիմումի հիման վրա, սույն հոդվածի համաձայն ստեղծված տրիբունալը կարող է, հետաձգելով 6-րդ կետի համաձայն իր որոշման կայացումը, կարգադրել, որ 3.16-րդ հոդվածի (Արբիտրաժային տրիբունալի կազմավորումը) համաձայն ստեղծված տրիբունալի վարույթը ժամանակավոր դադարեցվի, եթե այդ տրիբունալն արդեն իսկ չի հետաձգել իր վարույթը:

ԲԱԺԻՆ Գ Եզրափակիչ դրույթներ

Հոդված 3.24 Արտոնությունների մերժումը

Կողմը կարող է մերժել սույն գլխով սահմանված արտոնությունների տրամադրումը մյուս Կողմի ներդրողին կամ ներդրումներին, եթե ներդրողը համարվում է Կողմ չհանդիսացող երկրի կամ արտոնություններ չտրամադրող Կողմի անձանց պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող ձեռնարկություն, և այդ ձեռնարկությունը մյուս Կողմի տարածքում չի ծավալում որևէ էական ձեռնարկատիրական գործունեություն:

Հոդված 3.25 Միջազգային համաձայնագրերի հրապարակումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ներդրումներին կամ ներդրումային գործունեությանն առնչվող կամ դրանց վրա ազդող այն միջազգային համաձայնագրերը, որոնց կողմ է հանդիսանում տվյալ Կողմը, անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի դառնան այնպես, որ շահագրգիռ անձինք կամ Կողմերը կարողանան դրանց ծանոթանալ:
2. Հնարավորության սահմաններում, յուրաքանչյուր Կողմ ապահովում է 1-ին կետում նշված միջազգային համաձայնագրերի հասանելիությունը համացանցում: Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի պահանջով անհապաղ պատասխանում է այդ Կողմի կոնկրետ հարցերին և տրամադրում է 1-ին կետում նշված միջազգային համաձայնագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Հոդված 3.26 Ընդհանուր բացառությունները²⁴

1. Այն պահանջին համապատասխան, համաձայն որի նշված միջոցները չեն կարող կիրառվել այնպես, որ դիտարկվեն որպես կամայական միջոց կամ չարդարացված խտրականություն մյուս Կողմի կամ դրա ներդրողների նկատմամբ՝ համանման պայմանների գերակայության դեպքում, կամ մի Կողմի տարածքում մյուս Կողմի ներդրողների ներդրումների հետ կապված թաքնված

²⁴ Առավել հստակության համար, սույն դրույթների նկատմամբ ընդհանուր բացառությունների կիրառումը չի մեկնարանվում այնպես, որ սահմանափակի պետական իշխանությունների՝ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունն այն դեպքերում, երբ ներդրողները չեն հայտնվել համանման հանգամանքներում՝ կարգավորման իրավաչափ նպատակների շնորհիվ:

սահմանափակում, սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ որևէ Կողմի խոչընդոտի ընդունել կամ իրականացնել հետևյալ միջոցները, որոնք՝

- ա) անհրաժեշտ են հանրության բարքերը պաշտպանելու կամ հանրային կարգը պահպանելու համար²⁵,
- բ) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար²⁶,
- գ) անհրաժեշտ են՝ ապահովելու համար համապատասխանությունը սույն գլխի դրույթներին չհակասող օրենքների կամ կանոնակարգերի հետ՝ ներառյալ այն դրույթների, որոնք վերաբերում են՝
 - i) ապօրինի և խարդախ գործելակերպը կամ պայմանագրերը չկատարելու արդյունքում առաջացող հետևանքները կանխարգելելուն,
 - ii) անհատների անձնական կյանքի պաշտպանությանը՝ կապված անձնական տվյալների մշակման ու տարածման և անհատական բնույթի գրառումների և հաշիվների գաղտնիության պաշտպանության հետ.
 - iii) անվտանգությանը.
- դ) առնչվում են սպառվող բնական ռեսուրսներին, եթե այդպիսի միջոցները կիրառվում են Կողմի ձեռնարկատերերին ներկայացվող կամ ծառայությունների ներպետական մատուցման կամ սպառման հետ կապված սահմանափակումների հետ համատեղ:

Հոդված 3.27

Վերապահում նախատեսող դրույթ

1. Սույն Համաձայնագիրը դադարեցնելուց հետո տասը (10) տարվա ընթացքում հետևյալ դրույթները (այդ թվում՝ համապատասխան հավելվածները) շարունակվում են կիրառվել դադարեցման օրվա դրությամբ գոյություն ունեցող կատարված ներդրումների նկատմամբ՝ դրանից հետո չսահմանափակելով ընդհանուր միջազգային իրավունքի կանոնների կիրառումը.

- ա) սույն գլխի դրույթները, և
- բ) հավելվածի այնպիսի դրույթները, որոնք կարող են անհրաժեշտ լինել կամ էական նշանակություն ունենալ սույն գլխի կիրառման կամ մեկնաբանման համար:

²⁵ Հասարակական կարգից բացառություն կարող է վկայակոչվել միայն այն դեպքում, երբ հասարակության հիմնարար շահերը ենթարկվում են իրական և բավականաչափ լուրջ սպառնալիքի:

²⁶ Կողմերը հասկանում են, որ սույն հոդվածի 1-ին կետ «բ» ենթակետում նշված միջոցները ներառում են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար անհրաժեշտ շրջակա միջավայրի պահպանման միջոցներ:

2. Կասկածներից խուսափելու նպատակով՝ դադարեցման օրվանից հետո 1-ին կետը չի կիրառվում ներդրումների ստեղծման, ձեռքբերման կամ ընդլայնման նկատմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3-Ա ՕՏԱՐՈՒՄ

Կողմերը հաստատում են իրենց ընդհանուր ընկալումը, որ՝

1. Կողմի գործողությունը կամ գործողությունները չեն դիտարկվում որպես օտարում, եթե դրանք չեն խոչընդոտում ներդրման հետ կապված՝ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների կամ գույքային շահերի իրագործմանը:

2. 3.11-րդ հոդվածի (Օտարումը) 1-ին կետն առնչվում է երկու իրավիճակների: Առաջինն ուղղակի օտարումն է, երբ ներդրումն ազգայնացվում կամ այլ կերպ ուղղակիորեն օտարվում է՝ սեփականության իրավունքի փոխանցմամբ կամ ուղղակի թոնազանձմամբ:

3. 3.11-րդ հոդվածի (Օտարումը) 1-ին կետում դիտարկվող երկրորդ իրավիճակը վերաբերում է անուղղակի օտարմանը, երբ Կողմի գործողությունը կամ գործողություններն ունեն ուղղակի օտարմանը համարժեք հետևանքներ՝ առանց սեփականության իրավունքի պաշտոնական փոխանցման կամ ուղղակի թոնազանձման:

- ա) Որոշելու համար, թե արդյոք Կողմի գործողությունը կամ գործողությունները որոշակի փաստական իրավիճակում հանդիսանում են անուղղակի օտարում, պահանջում է յուրաքանչյուր դեպքի համար առանձին, փաստերի վրա հիմնված մոտեցում, որի դեպքում, ի թիվս այլ գործոնների, դիտարկվում են՝
 - i) պետական իշխանության գործողության տնտեսական ազդեցությունը՝ չնայած Կողմի գործողության կամ գործողությունների՝ ներդրման տնտեսական արժեքի վրա բացասական ազդեցություն ունենալու փաստը, առանձին վերցրած, չի ապացուցում, որ տեղի է ունեցել անուղղակի օտարում.
 - ii) պետական իշխանության գործողության՝ ներդրումներին առնչվող հստակ, խելամիտ ակնկալիքներին միջամտության աստիճանը, և
 - iii) պետական իշխանության գործողության բնույթը:
- բ) Բացառությամբ հազվադեպ դեպքերի՝ Կողմի կողմից ձեռնարկվող կարգավորման ոչ խտրական այն գործողությունները, որոնք նախատեսված են և կիրառվում են հանրային բարօրության իրավաչափ նպատակների պաշտպանության համար, ինչպիսիք են հանրային առողջությունը, անվտանգությունը, շրջակա միջավայրը, չեն համարվում անուղղակի օտարում:

ԳԼՈՒԽ 4 ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4.1 Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

«շահագրգիռ անձ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի վրա կարող են տարածվել ցանկացած իրավունքներ կամ պարտականություններ ընդհանուր կիրառման միջոցի շրջանակներում. և

«ընդհանուր կիրառման միջոցը» չի ներառում՝

- ա) վարչական կամ քվազի-դատական վարույթում ընդունված այնպիսի կարգադրություն կամ կայացված որոշում, որը, առանձին դեպքում, տարածվում է կոնկրետ անձի, ապրանքի կամ ծառայության վրա, կամ
- բ) այնպիսի որոշում, որը կայացվում է կոնկրետ գործողության կամ գործելակերպի վերաբերյալ:

Հոդված 4.2 Հրապարակումը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի վերաբերյալ իր ընդհանուր կիրառման միջոցներն անհապաղ հրապարակվեն կամ այլ կերպ հասանելի դարձվեն այնպես, որ մյուս Կողմը և շահագրգիռ անձինք կարողանան ծանոթանալ դրանց:

2. Յուրաքանչյուր Կողմ հնարավորության սահմաններում՝

- ա) նախապես հրապարակում է ընդհանուր կիրառման ցանկացած այնպիսի միջոց, որն ինքն առաջարկում է ընդունել, և
- բ) շահագրգիռ անձանց ու մյուս Կողմին ընձեռում է այդպիսի միջոցների վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու պատշաճ հնարավորություն:

Հոդված 4.3 Ծանուցումը և տեղեկությունների տրամադրումը

1. Յուրաքանչյուր Կողմ, առավելագույն հնարավորության սահմաններում, մյուս Կողմին ծանուցում է ցանկացած այնպիսի միջոցի մասին, որն համարում է, որ կարող է նյութապես ազդեցություն թողնել սույն Համաձայնագրի գործողության վրա կամ այլ կերպ նշանակալի ազդեցություն ունենալ մյուս Կողմի շահերի վրա՝ սույն Համաձայնագրի ներքո:

2. Մի Կողմի պահանջով մյուս Կողմը ցանկացած միջոցի առնչությամբ

անհապաղ տրամադրում է տեղեկություններ և պատասխանում հարցերին՝ անկախ այն հանգամանքից՝ պահանջով դիմած Կողմը նախապես ծանուցվել է այդ միջոցի մասին, թե՛ ոչ:

3. Սույն հոդվածի ներքո ներկայացված ցանկացած ծանուցում կամ տեղեկատվություն չպետք է հակասի՝ համապատասխան միջոցը սույն Համաձայնագրին համապատասխանելու հանգամանքին:

4. Սույն հոդվածի ներքո ցանկացած ծանուցում, պահանջ կամ տեղեկատվություն ներկայացվում է մյուս Կողմին կապի ապահովման համապատասխան կենտրոնների միջոցով:

5. Տեղեկատվության փոխանակումը համարվում է իրականացված այն ժամանակ, երբ տեղեկատվությունը, 1-ին կետի համաձայն, ծանուցման միջոցով հասանելի է դարձվում ԱՀԿ-ին՝ դրա համապատասխան կանոններին ու ընթացակարգերին համապատասխան, կամ երբ նշված տեղեկատվությունը հանրամատչելի է դարձվում Կողմերի պաշտոնական, հանրամատչելի և անվճար կայքէջերի միջոցով:

Հոդված 4.4 **Վարչական վարույթը**

Յուրաքանչյուր Կողմ սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի մասով սահմանված ընդհանուր կիրառման բոլոր միջոցների միատեսակ, անաչառ և ողջամիտ կիրարկման նպատակով, առանձին դեպքերում, մյուս Կողմի կոնկրետ անձանց, ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ կիրառվող իր վարչական վարույթի շրջանակներում պետք է՝

- ա) ձգտի ապահովել, որ մյուսի Կողմի այն անձինք, որոնց վարույթն անմիջականորեն առնչվում է, ընթացակարգերին համապատասխան ու պատշաճորեն ծանուցվեն ցանկացած վարույթի հարուցման՝ ներառյալ վարույթի էության նկարագրի, իրավաբանական մարմնի այն հայտարարության մասին, որի հիման վրա վարույթ է հարուցվում, ինչպես նաև հակասության մեջ գտնվող ցանկացած հարցի ընդհանուր նկարագրության մասին.
- բ) նախքան որևէ վերջնական վարչական ակտ ընդունելը՝ նման անձանց ողջամիտ հնարավորություն ընձեռի ներկայացնելու, ի հիմնավորումն իրենց դիրքորոշումների՝ փաստեր և փաստարկներ այնքանով, որքանով վարույթի ժամանակը, բնույթը և հանրային շահը թույլատրում են դա, և
- գ) ապահովի ընթացակարգերի համապատասխանությունն իր օրենքներին և կարգավորումներին:

Հողված 4.5 Վարչական ակտերի վերանայումը

1. Յուրաքանչյուր Կողմ ստեղծում կամ պահպանում է դատական, քվազի-դատական կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, *inter alia*, սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերի վերաբերյալ վարչական ակտերն²⁷ անհապաղ վերանայելու և դրանք շտկելու նպատակով: Նման տրիբունալները կամ ընթացակարգերը պետք է լինեն անաչառ և անկախ այն գերատեսչությունից կամ մարմնից, որն օժտված է վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու լիազորությամբ, և չպետք է հարցի ելքի մասով որևէ զգալի շահ հետապնդեն:
2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ ցանկացած այդպիսի տրիբունալներում կամ ընթացակարգերի կիրառման ժամանակ դատավարության կողմերն ապահովվեն՝
 - ա) իրենց համապատասխան դիրքորոշումները հիմնավորելու կամ պաշտպանելու ողջամիտ հնարավորությամբ, և
 - բ) ներկայացված ապացույցների և պնդումների վերաբերյալ արձանագրության կամ, եթե պահանջվում է դրա համապատասխան օրենքներով և կարգավորումներով՝ վարչական մարմնի կողմից կազմված արձանագրության հիման վրա ընդունված որոշմամբ:
3. Յուրաքանչյուր Կողմ, իր օրենքներով և կարգավորումներով նախատեսված բողոքարկման կամ լրացուցիչ վերանայման դեպքում պետք է ապահովի, որ այդպիսի որոշումը կիրարկվի համապատասխան գերատեսչության կամ մարմնի կողմից, և կարգավորի դրա պրակտիկան՝ քննարկվող վարչական ակտի առնչությամբ:

Հողված 4.6 Հատուկ կանոնները

Սույն Համաձայնագրի այլ գլուխներում սահմանված՝ սույն գլխի կարգավորման առարկային վերաբերող հատուկ դրույթները գերակայում են այնքանով, որքանով դրանք տարբերվում են սույն գլխից:

²⁷ Առավել հստակության համար, վարչական ակտերի վերանայումը կարող է իրականացվել ընդհանուր իրավունքի շրջանակներում տարածված դատական վերանայման ձևով, մինչդեռ վարչական ակտերի շտկման դեպքում այն կարող է հետ ուղարկվել շտկման գործողությունը նախաձեռնած մարմին՝ այն շտկելու նպատակով:

ԳԼՈՒԽ 5 ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 5.1 Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

«**արբիտր**» նշանակում է 5.8-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) սահմանված կարգով ստեղծված արբիտրաժային կոլեգիայի անդամ.

«**արբիտրաժային կոլեգիա**» նշանակում է 5.8-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) սահմանված կարգով ստեղծված կոլեգիա.

«**բողոք ներկայացնող Կողմ**» նշանակում է ցանկացած Կողմ, որը պահանջ է ներկայացնում 5.7-րդ հոդվածով (Արբիտրաժային ընթացակարգ նախաձեռնելը) սահմանված կարգով արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին.

«**ՎԿՓ**» նշանակում է ԱՀԿ համաձայնագրի 2-րդ հավելվածում նշված՝ *Վեճերի կարգավորումը կանոնակարգող կանոնների ու ընթացակարգերի մասին փոխհամաձայնություն*.

«**Կողմ, որի դեմ ներկայացվել է բողոք**» նշանակում է այն Կողմը, որի կողմից ենթադրվում է, որ տեղի է ունեցել սույն Համաձայնագրի դրույթների խախտում.

«**վարույթ**», եթե այլ բան սահմանված չէ, նշանակում է սույն գլխով սահմանված արբիտրաժային կոլեգիայի վարույթ:

Հոդված 5.2 Նպատակը

Սույն գլխի նպատակն է խուսափել Կողմերի միջև վեճերից և կարգավորել դրանք՝ հնարավորության դեպքում երկկողմ ընդունելի լուծման հանգելու նպատակով:

Հոդված 5.3 Գործողության շրջանակը

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Համաձայնագրով այլ բան է նախատեսված, սույն գլուխը կիրառվում է Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված բոլոր վեճերից խուսափելու կամ դրանց կարգավորման համար՝ ցանկացած պահի, երբ Կողմը համարում է, որ՝

- ա) մյուս Կողմի միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրով սահմանված պարտավորություններին, կամ
- բ) մյուս Կողմն այլ կերպ չի իրականացրել սույն Համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները:

2. Առավել հստակության համար, այն վեճերը, որոնք առաջացել են ցանկացած օգուտի չեղյալ հայտարարման կամ սահմանափակման հետևանքով, որը Կողմը ողջամտորեն ակնկալում էր ստանալ սույն Համաձայնագրով սահմանված կարգով մյուս Կողմի կողմից սույն Համաձայնագրին համապատասխանող որևէ միջոցի կիրառության արդյունքում, չեն կարգավորվում սույն գլխի դրույթներով:

Հոդված 5.4

Վեճի կարգավորման մեխանիզմի ընտրությունը

1. Սույն գլխի՝ վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթների օգտագործումը կատարվում է առանց ԱՀԿ-ի շրջանակներում գտնվող որևէ գործողություն, այդ թվում՝ վեճերի կարգավորման վարույթը խախտելու:

2. Եթե բողոք ներկայացնող Կողմը կոնկրետ միջոցի առնչությամբ սույն գլխով կամ ԱՀԿ համաձայնագրով սահմանված կարգով նախաձեռնել է վեճերի կարգավորման վարույթ, ապա այն նույն միջոցի առնչությամբ վեճերի կարգավորման վարույթ չի հարուցում վեճերի կարգավորման մյուս մեխանիզմի միջոցով՝ մինչև առաջին վարույթը չավարտվի: Ավելին, բողոք ներկայացնող Կողմը չպետք է սույն գլխով կամ ԱՀԿ համաձայնագրով սահմանված կարգով նախաձեռնի վեճերի կարգավորման վարույթ, եթե չեն վիճարկվում էականորեն տարբերվող պարտավորություններ կամ, եթե վեճերի կարգավորման ընտրված մեխանիզմը ընթացակարգային կամ իրավագործության հետ կապված պատճառներով չի գալիս պահանջի վերաբերյալ եզրահանգման՝ հայցելով այդ պարտավորության դիմաց հատուցում՝ պայմանով, որ վեճերի կարգավորման մեխանիզմի կողմից դա չանելը Կողմի պատշաճ կերպով չգործելու հետևանքը չէ:

3. 2-րդ կետի նպատակներով՝

- ա) ԱՀԿ համաձայնագրով սահմանված կարգով վեճերի կարգավորման վարույթը համարվում է հարուցված Կողմի՝ ՎԿՓ-ի ճրդ հողվածով սահմանված կոլեգիայի ստեղծման մասին պահանջով և համարվում է ավարտված, երբ ՎԿՓ-ի 2-րդ հողվածի 1-ին կետով սահմանված՝ Վեճերի կարգավորման մարմինն (այսուհետ՝ ՎԿՄ) ընդունում է ՎԿՓ-ի 16-րդ հողվածով և 17-րդ հողվածի 1-ին կետով սահմանված՝ կոլեգիայի զեկույցը և, անհրաժեշտության դեպքում, բողոքարկման մարմնի զեկույցը, և
- բ) սույն գլխով սահմանված կարգով վեճերի կարգավորման վարույթը համարվում է հարուցված Կողմի՝ 5.7-րդ հողվածով (Արբիտրաժային

ընթացակարգ նախաձեռնելը) սահմանված կարգով արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին պահանջով և համարվում է ավարտված, երբ արբիտրաժային կոլեգիան իր վերջնական զեկույցը 5.11-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի միջանկյալ և վերջնական զեկույցները) սահմանված կարգով ներկայացնում է Կողմերին կամ, երբ արբիտրաժային ընթացակարգերն ավարտվում են 5.15-րդ հոդվածով (Արբիտրաժային ընթացակարգերի կասեցումը և դադարեցումը) սահմանված կարգով:

4. Սույն գլխում սահմանված ոչինչ չի բացառում, որ Կողմն իրականացնի ՎԿՄ-ի կողմից թույլատրված՝ պարտավորությունների կասեցումը: ԱՀԿ համաձայնագիրը չի վկայակոչվում՝ բացառելու համար, որ Կողմը սույն գլխով սահմանված կարգով կասեցնի պարտավորությունները:

Հոդված 5.5 Խորհրդակցությունները

1. Կողմերը ցանկացած պահի փորձում են համաձայնության գալ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ու կիրառման վերաբերյալ և լուծել իրենց ցանկացած վեճ՝ բարեխղճորեն սկսելով խորհրդակցություններ՝ փոխադարձ համաձայնեցված լուծման հանգելու նպատակով:
2. Կողմը ձգտում է սկսել խորհրդակցություններ մյուս Կողմի կապի ապահովման կենտրոնին գրավոր պահանջ ներկայացնելու միջոցով և ներկայացնում է պահանջի պատճառները, այդ թվում՝ նշելով խնդրո առարկա միջոցները, Համաձայնագրի կիրառելի դրույթները և այդ դրույթների կիրառելիության պատճառները:
3. Խորհրդակցություններն անցկացվում են ոչ ուշ, քան պահանջն ստանալու օրվանից երեսուն (30) օր հետո, և համարվում են ավարտված պահանջն ստանալու օրվանից վաթսուն (60) օր հետո, եթե Կողմերն այլ բան չեն համաձայնվում: Հրատապ հարցերին, այդ թվում՝ արագ փչացող ապրանքներին առնչվող հարցերի վերաբերյալ խորհրդակցություններն անցկացվում են ոչ ուշ, քան պահանջն ստանալու օրվանից տասնհինգ (15) օր հետո, և համարվում են ավարտված պահանջն ստանալու օրվանից երեսուն (30) օր հետո, եթե Կողմերն այլ բան չեն համաձայնվում:
4. Խորհրդակցությունները կարող են անցկացվել անձամբ կամ Կողմերին հասանելի որևէ տեխնոլոգիական միջոցով: Եթե խորհրդակցություններն անցկացվում են անձամբ, ապա դրանք պետք է անցկացվեն այն Կողմի տարածքում, որին ներկայացվել է պահանջը, եթե Կողմերն այլ բան չեն համաձայնում: Խորհրդակցությունները գաղտնի են և չեն խախտում Կողմերից ոչ մեկի իրավունքները ցանկացած հետագա վարույթի ժամանակ:
5. Եթե այն Կողմը, որին ներկայացվել է պահանջը, չի պատասխանում խորհրդակցություններ անցկացնելու մասին պահանջին այն ստանալուց հետո

տասն (10) օրվա ընթացքում կամ, եթե խորհրդակցությունները չեն անցկացվում 3-րդ կետով սահմանված ժամկետներում կամ, եթե խորհրդակցություններն ավարտվել են և փոխադարձ համաձայնեցված լուծման չեն հանգել, ապա բողոք ներկայացնող Կողմը կարող է պահանջել ստեղծել արբիտրաժային կոլեգիա՝ 5.7-րդ հոդվածով (Արբիտրաժային ընթացակարգ նախաձեռնելը) սահմանված կարգով:

Հոդված 5.6

Բարի ծառայությունները, հաշտեցումը կամ միջնորդությունը

1. Կողմերը կարող են ցանկացած պահի համաձայնության գալ բարի ծառայությունների, հաշտեցման կամ միջնորդության վերաբերյալ: Բարի ծառայությունների, հաշտեցման կամ միջնորդության ընթացակարգերը կարող են սկսվել ցանկացած պահի: Դրանք կարող են ավարտվել ցանկացած պահի՝ բողոք ներկայացնող Կողմի կամ այն Կողմի պահանջով, որի դեմ բողոք է ներկայացվել:
2. Եթե Կողմերը համաձայնում են այդ մասին, ապա բարի ծառայությունների, հաշտեցման կամ միջնորդության ընթացակարգերը կարող են շարունակվել սույն գլխով նախատեսված արբիտրաժային կոլեգիայի կողմից վարույթն ընթացքի մեջ եղած ժամանակ:
3. Բարի ծառայություններ, հաշտեցում ու միջնորդություն ներառող վարույթը և մասնավորապես՝ այդ վարույթի ընթացքում Կողմերի արտահայտած դիրքորոշումները գաղտնի են և չեն խախտում Կողմերից ոչ մեկի իրավունքները որևէ այլ վարույթի ժամանակ:

Հոդված 5.7

Արբիտրաժային ընթացակարգ նախաձեռնելը

Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու պահանջը գրավոր ներկայացվում է այն Կողմի կապի ապահովման կենտրոնին, որի դեմ բողոք է ներկայացվել: Բողոք ներկայացնող Կողմն իր պահանջում նշում է խնդրո առարկա հատուկ միջոցը կամ այլ հարց, թե արդյոք անցկացվել են խորհրդակցություններ, և բողոքի իրավական հիմքի ամփոփ շարադրանքն այնպես, որ բավարար լինի խնդիրը հստակորեն ներկայացնելու համար:

Հոդված 5.8

Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը

1. Արբիտրաժային կոլեգիան կազմված է երեք արբիտրից: Յուրաքանչյուր

Կողմ նշանակում է արբիտր՝ ոչ ուշ, քան 5.7-րդ հոդվածում (Արբիտրաժային ընթացակարգ նախաձեռնելը) նշված պահանջն ստանալուց երեսուն (30) օր հետո, և երկու արբիտրները ոչ ուշ, քան նրանցից երկրորդին նշանակելու օրվանից երեսուն (30) օր հետո համաձայնությամբ նշանակում են երրորդ արբիտրին:

2. Կողմերը ոչ ուշ, քան երրորդ արբիտրին նշանակելուց յոթ (7) օր հետո հաստատում են կամ չեն հաստատում երրորդ արբիտրի նշանակումը, որը հաստատվելու դեպքում գործում է որպես արբիտրաժային կոլեգիայի նախագահող:

3. Եթե 1-ին կետով նախատեսված կարգով երրորդ արբիտր չի նշանակվում կամ Կողմերից որևէ մեկը չի հաստատում երրորդ արբիտրի նշանակումը, ապա ԱՀԿ գլխավոր տնօրենը որևէ Կողմի պահանջով հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում նշանակում է երրորդ արբիտրին, որը գործում է որպես արբիտրաժային կոլեգիայի նախագահող:

4. Եթե Կողմն 1-ին կետով նախատեսված կարգով արբիտր չի նշանակում, ապա մյուս Կողմը կարող է տեղեկացնել ԱՀԿ գլխավոր տնօրենին, որը հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում նշանակում է արբիտրաժային կոլեգիայի նախագահողի: Նշանակվելուց հետո նախագահողն արբիտր չնշանակած Կողմից պահանջում է տասնչորս (14) օրվա ընթացքում դա անել: Եթե այդ ժամկետից հետո Կողմը դեռևս արբիտր չի նշանակել, ապա նախագահողը տեղեկացնում է ԱՀԿ գլխավոր տնօրենին, որը հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում կատարում է այդ նշանակումը:

5. 3-րդ և 4-րդ կետերի նպատակներով՝ այն դեպքում, երբ ԱՀԿ գլխավոր տնօրենը Հայաստանի կամ Մինգապուրի քաղաքացի է, ԱՀԿ գլխավոր տնօրենի տեղակալից կամ ըստ պաշտոնի ավագության հաջորդ պաշտոնյայից, որն այդ երկրների քաղաքացի չէ, պահանջվում է կատարել անհրաժեշտ նշանակումները:

6. Արբիտրաժային կոլեգիայի ստեղծման ամսաթիվ համարվում է այն ամսաթիվը, որի դրությամբ նշանակվել է երեք արբիտրներից վերջինը:

7. Արբիտրաժային կոլեգիայի արբիտր նշանակված ցանկացած անձ պետք է փորձառություն կամ փորձ ունենա իրավագիտության, միջազգային առևտրի, սույն Համաձայնագրով կարգավորվող մյուս հարցերի կամ առևտրի միջազգային համաձայնագրերի շրջանակներում ծագող վեճերի կարգավորման ոլորտում: Արբիտրն ընտրվում է խստորեն օբյեկտիվության, հուսալիության, առողջ դատողության և անկախության հիման վրա և արբիտրաժային վարույթի ընթացքում իրեն դրսևորում է դրանց հիման վրա և 5-2-րդ հավելվածին (Արբիտրների վարքագծի կանոնակարգը) համապատասխան: Ի հավելումն դրա՝ նախագահողը չպետք է լինի Հայաստանի կամ Մինգապուրի քաղաքացի, նրա բնակության վայրը չպետք է գտնվի դրանց տարածքում, կամ նա չպետք է աշխատի դրանցից որևէ մեկի համար: Նախագահողը պետք է լինի այնպիսի պետության քաղաքացի, որը դիվանագիտական կապեր ունի Հայաստանի և

Սինգապուրի հետ: Եթե Կողմը համարում է, որ արբիտրաժային կոլեգիայի որևէ արբիտր խախտում է այդ պահանջները, ապա Կողմերը խորհրդակցում են և, եթե համաձայնության են գալիս, արբիտրը հեռացվում է, և նշանակվում է նոր արբիտր՝ սույն հոդվածին համապատասխան:

8. Եթե արբիտրաժային կոլեգիայի՝ սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված որևէ արբիտր հրաժարական է տալիս կամ չի կարողանում մասնակցել վարույթին կամ հեռացվում է 8-րդ կետին համապատասխան, ապա նրա հաջորդը նշանակվում է նույն կարգով, որը սահմանված է առաջին արբիտրի նշանակման համար: Այդ դեպքում արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը կասեցվում է այն ժամկետով, որն սկսվում է առաջին արբիտրի հրաժարական տալու, վարույթին մասնակցել չկարողանալու կամ 8-րդ կետին համապատասխան հեռացվելու օրը, և արբիտրաժային կոլեգիայի վարույթի նկատմամբ կիրառելի բոլոր ժամկետները երկարաձգվում են այնքան ժամանակով, որքանով կասեցվում է արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը: Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը վերսկսվում է այն օրը, երբ նշանակվում է հաջորդող արբիտրը: Հաջորդող արբիտրն ունի առաջին արբիտրի բոլոր լիազորությունները և պարտականությունները:

Հոդված 5.9 Խնդիրները

Եթե արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին պահանջն ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան (20) օր հետո Կողմերն այլ համաձայնության չեն գալիս, ապա արբիտրաժային կոլեգիայի խնդիրներն են՝

««Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի համապատասխան դրույթների լույսի ներքո ուսումնասիրել 5.7-րդ հոդվածի համաձայն (Արբիտրաժային ընթացակարգ նախաձեռնելը) արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին պահանջում ներկայացված հարցը և վեճի լուծման նպատակով գալ եզրահանգումների, որոշումների և ներկայացնել որևէ առաջարկ, ինչպես նաև ներկայացնել գրավոր զեկույց՝ 5.11-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի միջանկյալ և վերջնական զեկույցները) նախատեսված կարգով:»:

Հողված 5.10 Արբիտրաժային կոլեգիայի վարույթները

1. Արբիտրաժային կոլեգիայի հանդիպումները տեղի են ունենում փակ նիստերի միջոցով, եթե Կողմերն այլ բան չեն որոշում:
2. Յուրաքանչյուր Կողմի տրվում է առնվազն մեկ գրավոր պնդում ներկայացնելու և վարույթի ընթացքում ցանկացած ներկայացման, հայտարարության կամ հակափաստարկի ներկայացմանը մասնակցելու հնարավորություն: Արբիտրաժային կոլեգիային Կողմի ներկայացրած ցանկացած տեղեկություն կամ գրավոր պնդում, այդ թվում՝ միջանկյալ զեկույցի վերաբերյալ ցանկացած մեկնաբանություն և արբիտրաժային կոլեգիայի առաջադրած հարցերին պատասխան, պետք է հասանելի դառնա մյուս Կողմի համար:
3. Այն Կողմը, որը հավաստիացնում է, որ մյուս Կողմի միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրին, կրում է այդ անհամապատասխանությունը հաստատելու բեռը: Այն Կողմը, որը հավաստիացնում է, որ միջոցը ենթակա է սույն Համաձայնագրով սահմանված բացառության, կրում է այդ բացառությունը կիրառելի լինելը հաստատելու բեռը:
4. Արբիտրաժային կոլեգիան պետք է անհրաժեշտության դեպքում խորհրդակցի Կողմերի հետ և պատշաճ հնարավորություններ տրամադրի փոխադարձ բավարար լուծման կամ փոխադարձ համաձայնեցված լուծման մշակման համար:
5. Արբիտրաժային կոլեգիան գործադրում է հնարավոր բոլոր ջանքերը՝ ցանկացած որոշում կոնսենսուսի հիման վրա կայացնելու համար: Այն դեպքում, երբ հնարավոր չէ որոշումը կայացնել կոնսենսուսի հիման վրա, խնդրո առարկայի վերաբերյալ որոշումը կայացվում է ձայների մեծամասնությամբ:
6. Արբիտրաժային կոլեգիան կարող է Կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ տեղեկություններ ձեռք բերել ցանկացած աղբյուրից, որը պատշաճ է համարում արբիտրաժային կոլեգիայի վարույթի համար: Արբիտրաժային կոլեգիան, երբ անհրաժեշտ է համարում, իրավունք ունի նաև դիմելու փորձագետներին՝ կարծիք ստանալու համար: Արբիտրաժային կոլեգիան, այդպիսի փորձագետներ ընտրելուց առաջ, խորհրդակցում է Կողմերի հետ: Այդ եղանակով ձեռք բերված ցանկացած տեղեկություն պետք է բացահայտվի յուրաքանչյուր Կողմի և ներկայացվի նրանց՝ մեկնաբանությունների համար: Եթե արբիտրաժային կոլեգիան իր զեկույցը պատրաստելիս հաշվի է առնում այդ տեղեկությունները, ապա այն պետք է հաշվի առնի նաև այդ տեղեկությունների վերաբերյալ Կողմերի ներկայացրած ցանկացած մեկնաբանություն:
7. Արբիտրաժային կոլեգիայի խորհրդակցությունները և դրան ներկայացված փաստաթղթերը գաղտնի են պահվում:
8. Չնայած 7-րդ կետին՝ Կողմերից յուրաքանչյուրը կարող է հրապարակային

հայտարարություններ անել վեճի վերաբերյալ իր տեսակետների առնչությամբ, սակայն գաղտնի ռեժիմ է ապահովում արբիտրաժային կոլեգիային մյուս Կողմի ներկայացրած ցանկացած տեղեկության և գրավոր պնդման համար, որն այդ Կողմը նշել է որպես գաղտնի: Եթե Կողմը տեղեկություններ կամ գրավոր պնդումներ է տրամադրել, որոնք նշված են որպես գաղտնի, ապա այդ Կողմը ոչ ուշ, քան մյուս Կողմի ներկայացրած պահանջից երեսուն (30) օր հետո, տրամադրում է այդ տեղեկությունների կամ գրավոր պնդումների ոչ գաղտնի ամփոփ շարադրանքը, որը կարող է հրապարակայնորեն բացահայտվել:

Հոդված 5.11

Արբիտրաժային կոլեգիայի միջանկյալ և վերջնական զեկույցը

1. Արբիտրաժային կոլեգիան Կողմերին տրամադրում է միջանկյալ զեկույց՝ նշելով՝

- ա) Կողմերի պնդումների և փաստարկների ամփոփ շարադրանքը.
- բ) բացահայտված փաստերը՝ պատճառների հետ միասին.
- գ) սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման մասով իր որոշումը. և թե արդյոք
 - i) խնդրո առարկա միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրի պարտավորություններին. կամ
 - ii) այն Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, այլ կերպ չի իրականացրել սույն Համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները.
- դ) ցանկացած այլ որոշում, որը պահանջվել է առաջադրված խնդիրներով. և
- ե) եթե որոշվել է, որ առկա է անհամապատասխանություն, իր առաջարկությունը, որ այն Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, միջոցը համապատասխանեցնի սույն համաձայնագրով սահմանված պարտավորություններին և, եթե Կողմերը համաձայնվում են, վեճը լուծելու միջոցների վերաբերյալ՝

արբիտրաժային կոլեգիան ստեղծելու օրվանից ոչ ուշ, քան իննսուն (90) օր կամ հրատապ լինելու դեպքում՝ վաթսուն (60) օր հետո: Եթե արբիտրաժային կոլեգիան համարում է, որ այս վերջնաժամկետը հնարավոր չէ պահպանել, ապա արբիտրաժային կոլեգիայի նախագահողը պետք է Կողմերին գրավոր ծանուցի այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն օրը, երբ արբիտրաժային կոլեգիան պլանավորում է ներկայացնել իր միջանկյալ զեկույցը: Արբիտրաժային կոլեգիան ոչ մի հանգամանքում իր միջանկյալ զեկույցը չի տրամադրում իր ստեղծումից ավելի, քան հարյուր քսան (120) օր հետո:

2. Ցանկացած Կողմ արբիտրաժային կոլեգիա կարող է ներկայացնել միջանկյալ զեկույցի որոշակի ասպեկտները վերանայելու գրավոր պահանջ՝ այն տրամադրելու օրվանից երեսուն (30) օրվա ընթացքում: Արբիտրաժային

կոլեգիան քննարկում է միջանկյալ զեկույցի վերաբերյալ Կողմերի ցանկացած գրավոր մեկնաբանություն՝ այն ստանալու օրվանից տասնհինգ (15) օրվա ընթացքում: Քննարկելով Կողմերի ներկայացրած ցանկացած այդպիսի գրավոր մեկնաբանություն, արբիտրաժային կոլեգիան կարող է փոփոխել իր զեկույցը և անհրաժեշտ համարելու դեպքում կատարել ցանկացած լրացուցիչ ուսումնասիրություն:

3. Արբիտրաժային կոլեգիան իր վերջնական զեկույցը Կողմերին է տրամադրում ոչ ուշ, քան միջանկյալ զեկույցը տրամադրելուց քառասունհինգ (45) օր կամ, հրատապ դեպքում, երեսուն (30) օր հետո: Եթե արբիտրաժային կոլեգիան համարում է, որ այս վերջնաժամկետը հնարավոր չէ պահպանել, ապա արբիտրաժային կոլեգիայի նախագահողը պետք է Կողմերին գրավոր ծանուցի այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն օրը, երբ արբիտրաժային կոլեգիան պլանավորում է ներկայացնել իր վերջնական զեկույցը: Արբիտրաժային կոլեգիան ոչ մի հանգամանքում իր վերջնական զեկույցը չի տրամադրում իր ստեղծումից ավելի, քան հարյուր ութսուն (180) օր հետո: Վերջնական զեկույցով սահմանվում են 1-ին կետում թվարկված հարցերը, այն ներառում է միջանկյալ վերանայման փուլում ներկայացված փաստարկների բավարար քննարկում և հստակորեն անդրադառնում է Կողմերի գրավոր մեկնաբանություններին:

4. Կողմերն անվերապահորեն ընդունում են կոնկրետ վեճի առնչությամբ արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցը: Արբիտրաժային կոլեգիան իր եզրահանգումներում և առաջարկություններում չի կարող ավելացնել կամ կրճատել սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքները և պարտավորությունները:

Հոդված 5.12

Արբիտրաժային կոլեգիայի զեկույցի պահանջների կատարումը

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցի պահանջները բարեխղճորեն կատարելու համար անհրաժեշտ ցանկացած միջոց: Եթե իր վերջնական զեկույցում արբիտրաժային կոլեգիան որոշում է, որ քննարկման առարկա միջոցը հակասում է սույն Համաձայնագրով սահմանված պարտավորություններին կամ որ այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, որևէ այլ ձևով չի կատարել սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները, ապա այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, առաջին իսկ հնարավորության դեպքում, վերացնում է սույն Համաձայնագրին անհամապատասխանությունը:

2. Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցի հրապարակումից ոչ ուշ, քան երեսուն (30) օր հետո, այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, տեղեկացնում է բողոք ներկայացնող Կողմին վերջնական զեկույցին համապատասխանության ապահովման համար պահանջվող ժամկետի մասին

(այսուհետ՝ ողջամիտ ժամկետ), այն դեպքում, երբ համապատասխանության անհապաղ ապահովումը գործնականում անհնար է: Կողմերը փորձում են ողջամիտ ժամկետի հետ կապված համաձայնություն ձեռք բերել:

3. Եթե Կողմերը արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցի հրապարակումից հետո քառասունհինգ (45) օրվա ընթացքում ողջամիտ ժամկետի հետ կապված համաձայնություն ձեռք չեն բերում, ապա բողոք ներկայացնող Կողմը կարող է, վերջնական զեկույցի հրապարակումից ոչ ուշ, քան հիսուն (50) օր հետո, գրավոր պահանջ ներկայացնել սկզբնական արբիտրաժային կոլեգիային, որպեսզի վերջինս որոշի ողջամիտ ժամկետի տևողությունը: Պահանջի մասին միաժամանակ ծանուցվում է մյուս Կողմը: Սկզբնական արբիտրաժային կոլեգիան պահանջը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան քսան (20) օր հետո Կողմերին է հայտնում ողջամիտ ժամկետի տևողության վերաբերյալ իր որոշման մասին:

4. Սկզբնական արբիտրաժային կոլեգիայի անդամներից որևէ մեկի անհասանելիության դեպքում կիրառվում են 5.8-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) սահմանված ընթացակարգերը: Ողջամիտ ժամկետի տևողության վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը չի կարող գերազանցել երեսունհինգ (35) օրը²⁸, որը հաշվարկվում է 3-րդ կետում նշված պահանջը ներկայացնելու օրվանից:

5. Մինչև ողջամիտ ժամկետի ավարտն այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, ծանուցում է բողոք ներկայացնող Կողմին արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցին համապատասխանություն ապահովելու նպատակով իր կողմից ձեռնարկված ցանկացած միջոցի մասին: Ողջամիտ ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ցանկացած ժամանակ՝ նախքան այդ ժամկետի ավարտը:

6. 5-րդ կետի համաձայն ծանուցված որևէ միջոցի առկայության կամ սույն Համաձայնագրի դրույթներին այդ միջոցի չհակասելու վերաբերյալ Կողմերի միջև տարաձայնություն առաջանալու դեպքում բողոք ներկայացնող Կողմը սկզբնական արբիտրաժային կոլեգիային կարող է ներկայացնել հարցի վերաբերյալ որոշում ընդունելու գրավոր պահանջ: Այդ պահանջի մասին միաժամանակ ծանուցվում է մյուս Կողմը, դրանում, բողոքի իրավական հիմքը հստակ ներկայացնելու համար բավարար ձևով մատնանշվում են քննարկման առարկա կոնկրետ միջոցը և 5.3-րդ հոդվածով (Կիրառման ոլորտը) սահմանված այն դրույթները, որոնց, բողոք ներկայացնող Կողմի կարծիքով, հակասում է տվյալ միջոցը: Սկզբնական արբիտրաժային կոլեգիան ոչ ուշ, քան պահանջը ներկայացնելու օրվանից քառասունհինգ (45) օր հետո Կողմերին է ներկայացնում իր որոշումը:

²⁸ Առավել հստակության համար, երեսունհինգօրյա (35-օրյա) ժամկետը չի ներառում 5.8-րդ հոդվածի (Արբիտրաժային խմբի կազմը և ստեղծումը) 9-րդ կետի համաձայն կասեցված որևէ օր:

7. Սկզբնական արբիտրաժային կոլեգիայի անդամներից որևէ մեկի անհասանելիության դեպքում կիրառվում են 5.8-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) սահմանված ընթացակարգերը: Որոշում ընդունելու ժամկետը չի կարող գերազանցել 6-րդ կետում նշված պահանջը ներկայացնելու օրվանից հետո հաշվարկվող վաթսուն (60) օրը²⁹:

Հոդված 5.13

Հատուցումը, արտոնությունների կամ այլ պարտավորությունների կասեցումը

1. Եթե այն Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, չի ծանուցել 5.12-րդ հոդվածի (Արբիտրաժային կոլեգիայի զեկույցի պահանջների կատարումը) համաձայն արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցին համապատասխանություն ապահովելու նպատակով ձեռնարկված ցանկացած միջոցի մասին, կամ եթե արբիտրաժային կոլեգիան որոշել է, որ 5.12-րդ հոդվածին (Արբիտրաժային կոլեգիայի զեկույցի պահանջների կատարումը) համապատասխան ծանուցված որևէ միջոց գոյություն չունի կամ հակասում է սույն Համաձայնագրի որևէ դրույթի, ապա այն Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, բանակցություններ է սկսում բողոք ներկայացնող Կողմի հետ՝ հատուցման վերաբերյալ փոխադարձաբար ընդունելի համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

2. Եթե Կողմերը հատուցման վերաբերյալ համաձայնություն ձեռք չեն բերում երեսուն (30) օրվա ընթացքում՝

ա) ողջամիտ ժամկետի ավարտից հետո, կամ

բ) այն բանից հետո, երբ արբիտրաժային կոլեգիան որոշում է կայացրել, որ 5.12-րդ հոդվածին (Արբիտրաժային կոլեգիայի զեկույցի պահանջների կատարումը) համապատասխան ծանուցված որևէ միջոց գոյություն չունի, կամ որ այն հակասում է սույն Համաձայնագրի որևէ դրույթի,

ըստ իրադրության, բողոք ներկայացնող Կողմն իրավասու է՝ ծանուցելով այն Կողմին, որի դեմ բողոք է ներկայացվել, կասեցնել արտոնությունները կամ սույն Համաձայնագրից բխող այլ պարտավորություններ այն արտոնություններին համարժեք չափով, որոնց վրա ազդեցություն է ունեցել արբիտրաժային կոլեգիայի կողմից սույն Համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցը: Ծանուցման մեջ սահմանվում է այն արտոնությունների կամ այլ պարտավորությունների չափը, որ բողոք ներկայացնող Կողմը մտադիր է կասեցնել և նշվում են կասեցման համար որպես հիմք ծառայող պատճառները:

²⁹ Առավել հստակության համար, վաթսուներկու (60-օրյա) ժամկետը չի ներառում 5.8-րդ հոդվածի (Արբիտրաժային խմբի կազմը և ստեղծումը) 9-րդ կետի համաձայն կասեցված որևէ օր:

Բողոք ներկայացնող Կողմը կարող է, 4-րդ կետի համաձայն, սկսել կասեցման իրագործումը այն Կողմին ծանուցում ներկայացնելուց քսան (20) օր հետո, որի դեմ բողոք է ներկայացվել:

3. Այն հարցը դիտարկելիս, թե որ արտոնությունները կամ այլ պարտավորություններ է հարկավոր կասեցնել 2-րդ կետի համաձայն՝

- ա) բողոք ներկայացնող Կողմը պետք է նախ և առաջ փորձի կասեցնել այն նույն ոլորտի հետ կապված արտոնությունները կամ այլ պարտավորություններ, որում արբիտրաժային կոլեգիայի՝ 5.11-րդ հոդվածում (Արբիտրաժային կոլեգիայի միջանկյալ և վերջնական զեկույց) նշված վերջնական զեկույցով հակասություն է հայտնաբերվել սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների հետ.
- բ) եթե բողոք ներկայացնող Կողմն անիրագործելի կամ աննպատակահարմար է համարում նույն ոլորտի հետ կապված արտոնությունների կամ այլ պարտավորությունների կասեցումը, այն կարող է կասեցնել այլ ոլորտների հետ կապված արտոնությունները կամ այլ պարտավորություններ, և
- գ) բողոք ներկայացնող Կողմը հաշվի կառնի այն արտոնությունները կամ այլ պարտավորություններ, որոնց կասեցումը նվազագույն չափով կխաթարի սույն Համաձայնագրի գործողությունը:

4. Այն Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, կարող է սկզբնական արբիտրաժային կոլեգիային որոշում ընդունելու գրավոր պահանջ ներկայացնել այն մասին, թե արդյոք այն արտոնությունների կամ այլ պարտավորությունների չափը, որոնք բողոք ներկայացնող Կողմը մտադիր է կասեցնել, համարժեք է այն արտոնություններին կամ այլ պարտավորություններին, որոնց վրա ազդեցություն է ունեցել արբիտրաժային կոլեգիայի կողմից սույն Համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցը: Բողոք ներկայացնող Կողմը ծանուցվում է նման պահանջի մասին մինչև 2-րդ կետում նշված քսանօրյա (20-օրյա) ժամկետը լրանալը: Սկզբնական արբիտրաժային կոլեգիան, որը հարկ եղած դեպքում կարող է դիմել փորձագետների՝ նրանց եզրակացությունն ստանալու խնդրանքով, Կողմերին է հայտնում իր որոշման մասին ոչ ուշ, քան պահանջը ներկայացնելու օրվանից երեսուն (30) օր հետո: Արտոնությունները կամ այլ պարտավորություններ չեն կասեցվի, քանի դեռ արբիտրաժային կոլեգիան չի հայտնել իր որոշման մասին, և ցանկացած կասեցում պետք է իրականացվի արբիտրաժային կոլեգիայի որոշմանը համապատասխան:

5. Սկզբնական արբիտրաժային կոլեգիայի անդամներից որևէ մեկի անհասանելիության դեպքում կիրառվում են 5.8-րդ հոդվածում (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) շարադրված ընթացակարգերը: Որոշում ընդունելու ժամկետը չի կարող գերազանցել 4-րդ կետում նշված պահանջը

ներկայացնելու օրվանից հետո հաշվարկվող քառասունհինգ (45) օրը³⁰:

6. 1-ին կետում նշված հատուցումը և 2-րդ կետում նշված կասեցումը ժամանակավոր միջոցներ են: Ո՛չ հատուցմանը, ո՛չ էլ կասեցմանը չի կարելի գերակայություն տալ արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցում սահմանված անհամապատասխանության իսպառ վերացման նկատմամբ: Որևէ կասեցում կկիրառվի միայն մինչև անհամապատասխանության իսպառ վերացումը, կամ մինչև այն պահը, երբ 5.14-րդ հոդվածի (Համապատասխանության ստուգում) համաձայն՝ անհամապատասխանությունը համարվել է վերացված, կամ Կողմերը երկուստեք բավարարող այլ լուծում են գտել:

Հոդված 5.14

Համապատասխանության ստուգում

1. Եթե Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, համարում է, որ վերացրել է արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցում սկզբնապես ճանաչված անհամապատասխանությունը սույն Համաձայնագրին, ապա այն կարող է գրավոր պահանջել սկզբնական արբիտրաժային կոլեգիայից այդ հարցի մասով որոշում ընդունել: Պահանջի մասին միաժամանակ ծանուցվում է մյուս Կողմը: Սկզբնական արբիտրաժային կոլեգիան իր որոշման մասին հայտնում է Կողմերին ոչ ուշ, քան պահանջը ներկայացնելու օրվանից քառասունհինգ (45) օր հետո: Եթե արբիտրաժային կոլեգիան որոշում է, որ այն Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, վերացրել է սույն Համաձայնագրի դրույթներին անհամապատասխանությունը, ապա բողոք ներկայացնող Կողմը դադարում է կիրառել իր կողմից իրականացվող՝ արտոնությունների կամ այլ պարտավորությունների որևէ կասեցում:

2. Սկզբնական արբիտրաժային կոլեգիայի անդամներից որևէ մեկի անհասանելիության դեպքում կիրառվում են 5.8-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) սահմանված ընթացակարգերը: Որոշում ընդունելու ժամկետը չի կարող գերազանցել 1-ին կետում նշված պահանջը ներկայացնելու օրվանից հետո հաշվարկվող վաթսուն (60) օրը³¹:

Հոդված 5.15

Արբիտրաժային ընթացակարգերի կասեցումը և դադարեցումը

1. Կողմերի գրավոր պահանջով՝ արբիտրաժային կոլեգիան ցանկացած

³⁰ Առավել հստակության համար, քառասունհինգօրյա (45-օրյա) ժամկետը չի ներառում 5.8-րդ հոդվածի (Արբիտրաժային խմբի կազմը և ստեղծումը) 9-րդ կետի համաձայն կասեցված որևէ օր:

³¹ Առավել հստակության համար, վաթսունօրյա (60-օրյա) ժամկետը չի ներառում 5.8-րդ հոդվածի (Արբիտրաժային խմբի կազմը և ստեղծումը) 9-րդ կետի համաձայն կասեցված որևէ օր:

պահի կասեցնում է իր աշխատանքը Կողմերի կողմից համաձայնեցված՝ տասներկու (12) ամիսը չգերազանցող ժամկետով, և վերսկսում է իր աշխատանքն այս համաձայնեցված ժամկետը լրանալուն պես՝ բողոք ներկայացնող Կողմի գրավոր պահանջով, կամ նախքան այս համաձայնեցված ժամկետը լրանալը՝ երկու Կողմերի գրավոր պահանջով: Եթե բողոք ներկայացնող Կողմը չի պահանջում վերսկսել արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը՝ նախքան կասեցման համաձայնեցված ժամկետը լրանալը, ապա սույն գլխի համաձայն նախաձեռնված՝ վեճերի լուծման ընթացակարգերը համարվում են դադարեցված: 5.4-րդ հոդվածին (Մեխանիզմի ընտրությունը) համապատասխան՝ արբիտրաժային կոլեգիայի աշխատանքի կասեցմամբ կամ դադարեցմամբ չեն սահմանափակվում Կողմերից որևէ մեկի՝ այլ վարույթով վերապահված իրավունքները:

2. Կողմերը կարող են, ցանկացած պահի, գրավոր համաձայնությամբ դադարեցնել սույն գլխի համաձայն նախաձեռնված՝ վեճերի լուծման ընթացակարգերը:

Հոդված 5.16 Կանոնակարգը

Սույն գլխի համաձայն՝ վեճերի լուծման ընթացակարգերը կարգավորվում են 5-1-ին հավելվածով (Արբիտրաժի կանոնակարգ):

Հոդված 5.17 Մեկնաբանությունը

Արբիտրաժային կոլեգիան սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանում է միջազգային հանրային իրավունքի մեկնաբանության սովորույթային նորմերին համապատասխան:

Հոդված 5.18 Ծախսերը

Յուրաքանչյուր Կողմ ինքն է կրում իր նշանակած արբիտրի ծախսերը, սեփական ծախսերը և դատական ծախսերը. Արբիտրաժային կոլեգիայի նախագահողի և արբիտրաժային վարույթն իրականացնելու հետ կապված մյուս ծախսերը կրում են Կողմերը՝ համամասնորեն:

Հոդված 5.19 Ժամկետները

1. Սույն գլխով սահմանված բոլոր ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով, որոնց առաջին օրը համարվում է այն գործողությանը կամ

փաստին հաջորդող օրը, որին վերաբերում են դրանք, եթե այլ բան սահմանված չէ:

2. Սույն գլխում նշված ցանկացած ժամկետ կարող է փոփոխվել Կողմերի փոխհամաձայնությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5-1 ԱՐՔԻՏՐԱԺԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

Ընդհանուր դրույթներ

1. 5-րդ գլխի (Վեճերի կարգավորումը) սահմանումները կիրառվում են սույն հավելվածում: Ի լրումն, սույն հավելվածի և 5-2-րդ հավելվածի (Արքիտրների վարքագծի կանոնակարգը) նպատակներով՝

«**խորհրդատու**» նշանակում է անձ, որին Կողմերից մեկը վարձում է այդ Կողմին արքիտրաժային կոլեգիայի կողմից իրականացվող վարույթի հետ կապված խորհրդատվություն կամ օժանդակություն տրամադրելու համար.

«**օգնական**» նշանակում է անձ, որը արքիտր նշանակելու ընթացակարգի շրջանակներում իրականացնում է հետազոտություն կամ արքիտրին տրամադրում է աջակցություն.

«**թեկնածու**» նշանակում է անձ, որը դիտարկվում է որպես արքիտր ընտրվելու համար՝ 5.8-րդ հոդվածի (Արքիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) համաձայն.

«**ներկայացուցիչ**» նշանակում է Կողմի պետական հաստատության, գործակալության կամ որևէ այլ պետական մարմնի կողմից նշանակված աշխատակից կամ անձ, որը վեճի կարգավորման նպատակներով ներկայացնում է այդ Կողմը՝ սույն Համաձայնագրին համապատասխան.

«**աշխատակազմ**», արքիտրի հետ կապված՝ նշանակում է արքիտրի ղեկավարության և հսկողության ներքո գտնվող ցանկացած անձ՝ բացի օգնականից:

2. Սույն հավելվածը կիրառվում է վեճերի կարգավորման վարույթի նկատմամբ՝ համաձայն 5-րդ գլխի (Վեճերի կարգավորումը), եթե Կողմերն այլ համաձայնության չեն գալիս:

3. Բողոք ներկայացնող Կողմը պատասխանատու է վեճերի կարգավորման վարույթի նյութատեխնիկական ապահովման, մասնավորապես՝ լսումների կազմակերպման համար, եթե այլ բան համաձայնեցված չէ:

Ծանուցումները

4. Կողմերը և արքիտրաժային կոլեգիան ցանկացած պահանջ, ծանուցում, գրավոր հայտարարություն կամ այլ փաստաթուղթ էլեկտրոնային փոստով փոխանցում են համապատասխան կողմերին՝ թղթային օրինակի հետ միաժամանակ, որը նույն օրը ներկայացվում է ֆաքսիմիլային փոխանցման միջոցով, պատվիրված փոստով, սուրհանդակային առաքման, ստացման փոխարեն առձեռն առաքման միջոցով կամ հեռահաղորդակցության ցանկացած այլ միջոցներով, որոնք արձանագրում են դրանց առաքումը: Եթե այլ բան ապացուցված չէ, ապա էլեկտրոնային հաղորդագրությունն է համարվում այն

ուղարկելու օրը:

5. Բոլոր ծանուցումները հասցեագրվում են Կողմերի՝ կապի ապահովման համապատասխան կենտրոններին, ինչպես սահմանված է 15.3-րդ հոդվածով (Կապի ապահովման կենտրոնները):

6. Արբիտրաժային կոլեգիայի կողմից իրականացվող վարույթի հետ կապված ցանկացած պահանջի, ծանուցման, գրավոր հայտարարության կամ այլ փաստաթղթի մեջ առկա՝ վրիպակների տեսքով աննշան սխալները կարող են, եթե մյուս Կողմը չի առարկում, ուղղվել սույն հավելվածի 4-րդ և 5-րդ կանոններին համապատասխան նոր այնպիսի փաստաթուղթ ներկայացնելու միջոցով, որում հստակորեն նշվում են փոփոխությունները:

7. Եթե փաստաթուղթը ներկայացնելու օրը համարվում է Կողմերից որևէ մեկի պաշտոնապես հայտարարված պետական ոչ աշխատանքային օր, ապա փաստաթուղթը ներկայացվում է հաջորդող աշխատանքային օրը:

Արբիտրաժային գործընթացի սկիզբը

8. Կողմերի միջև այլ բան համաձայնեցված չլինելու դեպքում նրանք հանդիպում են արբիտրաժային կոլեգիայի հետ՝ դրա ստեղծման օրվանից յոթ (7) օրվա ընթացքում՝ Կողմերի կամ արբիտրաժային կոլեգիայի համար անհրաժեշտ համարվող հարցերը, այդ թվում՝ արբիտրների վարձատրության և նրանց վճարվող ծախսերի հետ կապված հարցերը որոշելու նպատակով: Արբիտրները և Կողմերի ներկայացուցիչները կարող են այդ հանդիպմանը մասնակցել հեռախոսային կոնֆերանսի կամ տեսակոնֆերանսի միջոցով:

Նախնական գրավոր հայտարարությունները

9. Բոլորը ներկայացնող Կողմն իր գրավոր հայտարարությունը ներկայացնում է ոչ ուշ, քան արբիտրաժային կոլեգիայի ստեղծման օրվանից քսանմեկ (21) օր հետո: Այն Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, իր գրավոր հայտարարությունը ներկայացնում է ոչ ուշ, քան բողոք ներկայացնող Կողմի գրավոր հայտարարությունը ներկայացնելու օրվանից քսանմեկ (21) օր հետո:

Արբիտրաժային կոլեգիաների գործունեությունը

10. Արբիտրաժային կոլեգիան նախագահող արբիտրը նախագահում է իր բոլոր նիստերը: Արբիտրաժային կոլեգիան կարող է վարչական կամ ընթացակարգային որոշումներ կայացնելու լիազորությունը փոխանցել նախագահողին:

11. Եթե այլ բան նախատեսված չէ 5-րդ գլխով (Վեճերի կարգավորումը), ապա արբիտրաժային կոլեգիան կարող է իր գործունեությունն իրականացնել ցանկացած միջոցով, այդ թվում՝ հեռախոսով, ֆաքսիմիլային փոխանցումների

կամ համակարգչային կապի միջոցով:

12. Միայն արբիտրները կարող են մասնակցել արբիտրաժային կոլեգիայի քննարկումներին, սակայն արբիտրաժային կոլեգիան կարող է թույլատրել իր օգնականներին ներկա գտնվել քննարկումներին:

13. Վարույթի ընթացքում բարձրացված բոլոր հարցերի ուսումնասիրությունը և ցանկացած որոշման նախագծի մշակումը արբիտրաժային կոլեգիայի բացառիկ պարտականությունն է, և այդ պարտականությունը չի փոխանցվում:

14. Եթե առաջանում է 5-րդ գլխով (Վեճերի կարգավորումը) կամ 5-1-ին հավելվածով (Արբիտրաժի կանոնակարգը) և 5-2-րդ հավելվածով (Արբիտրների վարքագծի կանոնակարգը) չկարգավորվող որևէ ընթացակարգային հարց, այդ թվում՝ հրատապ լինելու դեպքում, ապա արբիտրաժային կոլեգիան Կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է ընդունել այդ դրույթներին համապատասխան ընթացակարգ:

15. Եթե արբիտրաժային կոլեգիան համարում է, որ անհրաժեշտություն կա փոփոխելու 5-րդ գլխով (Վեճերի կարգավորումը) կամ 5-1-ին հավելվածով (Արբիտրաժի կանոնակարգը) և 5-2-րդ հավելվածով (Արբիտրների վարքագծի կանոնակարգը) կարգավորվող որևէ ժամկետ կամ կարգ, ապա այն առաջարկվող փոփոխությունների պատճառների մասին գրավոր տեղեկացնում է Կողմերին: Կողմերը կարող են ցանկացած ժամկետ կամ ընթացակարգ փոփոխելու վերաբերյալ փոխադարձ համաձայնության գալ:

Արբիտրների փոխարինումը

16. Եթե արբիտրը չի կարող մասնակցել վարույթին, հրաժարվում է կամ նրան փոխարինելու անհրաժեշտություն է առաջանում, ապա նրան փոխարինողի ընտրությունն իրականացվում է 5.8-րդ հոդվածին (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) համապատասխան:

17. Եթե Կողմը համարում է, որ արբիտրը չի համապատասխանում 5.8-րդ հոդվածի (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) 8-րդ կետի կամ 5-2-րդ հավելվածի (Արբիտրների վարքագծի կանոնակարգը) պահանջներին և այդ պատճառով նրան պետք է փոխարինել, ապա այդ Կողմը պետք է տեղեկացնի մյուս Կողմին արբիտրի՝ պահանջներին չհամապատասխանելու հիմքում ընկած հանգամանքներն իրեն հայտնի դառնալու պահից տասնհինգ (15) օրվա ընթացքում:

18. Եթե Կողմը համարում է, որ արբիտրը՝ բացի նախագահողից, չի համապատասխանում 5.8-րդ հոդվածի (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) 8-րդ կետի կամ 5-2-րդ հավելվածի (Արբիտրների վարքագծի կանոնակարգը) պահանջներին, ապա Կողմերը խորհրդակցում են և, նրանց համաձայնության դեպքում, փոխարինում են արբիտրին և նրա փոխարեն ընտրում են այլ արբիտր՝ 5.8-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) սահմանված ընթացակարգին համապատասխան:

19. Եթե Կողմերը արբիտրին փոխարինելու անհրաժեշտության հարցի շուրջ համաձայնության չեն գալիս, ապա ցանկացած Կողմ կարող է պահանջել, որ այդ հարցն ուղղվի արբիտրաժային կոլեգիայի նախագահողին, որի որոշումը վերջնական է:

20. Եթե Կողմը համարում է, որ արբիտրաժային կոլեգիան նախագահողը չի համապատասխանում 5.8-րդ հոդվածի (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) 8-րդ կետի կամ 5-2-րդ հավելվածի (Արբիտրների վարքագծի կանոնակարգը) պահանջներին, ապա Կողմերը խորհրդակցում են և, նրանց համաձայնության դեպքում, փոխարինում են նախագահողին և ընտրում այլ նախագահող՝ 5.8-րդ հոդվածով (Արբիտրաժային կոլեգիայի կազմը և ստեղծումը) սահմանված ընթացակարգին համապատասխան:

21. Եթե Կողմերը նախագահողին փոխարինելու անհրաժեշտության հարցի շուրջ համաձայնության չեն գալիս, ապա այդ հարցն ուղղվում է ԱՀԿ գլխավոր տնօրենին: ԱՀԿ-ի գլխավոր տնօրենի կողմից ընդունված՝ նախագահողին փոխարինելու անհրաժեշտության մասին որոշումը վերջնական է: Այն դեպքում, երբ ԱՀԿ գլխավոր տնօրենը Հայաստանի կամ Մինգապուրի քաղաքացի է, ապա ԱՀԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալին կամ նրան ըստ ավագության պաշտոնով հաջորդող պաշտոնյային, որն այդ երկրների քաղաքացի չէ, խնդրում են, որ նա ընդունի անհրաժեշտ որոշումը:

22. Արբիտրաժային կոլեգիայի կողմից իրականացվող վարույթը կասեցվում է այն ժամկետով, որը սահմանվում է սույն հավելվածի 16-22-րդ կանոններով նախատեսված ընթացակարգերն իրականացնելու համար:

Լսումները

23. Նախագահողը Կողմերի և մյուս արբիտրների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է լսումների օրն ու ժամը, ինչպես նաև այն գրավոր հաստատում ու ներկայացնում է Կողմերին: Եթե որևէ Կողմ անհամաձայնություն չի հայտնում, ապա արբիտրաժային կոլեգիան կարող է որոշել լսում չանցկացնել:

24. Եթե Կողմերն այլ համաձայնության չեն գալիս, ապա լսումներն անցկացվում են բողոք ներկայացնող Կողմի տարածքում:

25. Արբիտրաժային կոլեգիան կարող է անցկացնել լրացուցիչ լսումներ, եթե Կողմերն այդպիսի համաձայնություն են ձեռք բերում:

26. Լսումների ամբողջ ընթացքում բոլոր արբիտրները ներկա են գտնվում:

27. Լսմանը կարող են մասնակցել հետևյալ անձինք՝

ա) Կողմերի ներկայացուցիչները.

բ) Կողմերի խորհրդատուները.

գ) վարչական անձնակազմը, բանավոր թարգմանիչները, գրավոր թարգմանիչներն ու դատական նիստի քարտուղարները, և

դ) արբիտրների օգնականները:

Միայն Կողմերի ներկայացուցիչները և խորհրդատուները կարող են դիմել

արբիտրաժային կոլեգիային:

28. Լսման օրվանից ոչ ուշ, քան երեք (3) օր առաջ յուրաքանչյուր Կողմ արբիտրաժային կոլեգիային և միաժամանակ՝ մյուս Կողմին է ներկայացնում այն անձանց անվանացանկը, որոնք լսման ժամանակ այդ Կողմի անունից ներկայացնելու են բանավոր փաստարկներ կամ ելույթ են ունենալու, ինչպես նաև այլ ներկայացուցիչների կամ խորհրդատուների անվանացանկերը, որոնք մասնակցելու են լսմանը:

29. Արբիտրաժային կոլեգիան լսումն անցկացնում է հետևյալ ձևով՝ ապահովելով, որ բոլոր ներկայացնող Կողմին և այն Կողմին, որի դեմ բողոք է ներկայացվել, հատկացվի հավասար ժամանակ՝

Հայտարարությունները

- ա) բողոք ներկայացնող Կողմի հայտարարությունները.
- բ) այն Կողմի հայտարարությունները, որի դեմ բողոք է ներկայացվել.

Հակափաստարկները

- ա) բողոք ներկայացնող Կողմի հակափաստարկը.
- բ) այն Կողմի հակափաստարկը, որի դեմ բողոք է ներկայացվել:

30. Արբիտրաժային կոլեգիան ապահովում է, որ պատրաստվի յուրաքանչյուր լսման սղագրությունը և այն հնարավորինս շուտ ներկայացվի Կողմերին:

31. Արբիտրաժային կոլեգիայի համաձայնությամբ՝ Կողմը կարող է ներկայացնել լրացուցիչ գրավոր հայտարարություն՝ ի պատասխան լսման ընթացքում ծագած որևէ հարցի: Մյուս Կողմին նույնպես հնարավորություն է տրվում ներկայացնելու գրավոր մեկնաբանություններ ցանկացած այդպիսի լրացուցիչ գրավոր հայտարարության վերաբերյալ:

Գրավոր ներկայացվող հարցերը

32. Վարույթի ընթացքում ցանկացած ժամանակ արբիտրաժային կոլեգիան կարող է գրավոր հարցեր ուղղել Կողմերից մեկին կամ երկու Կողմին էլ: Կողմերից յուրաքանչյուրն ստանում է արբիտրաժային կոլեգիայի կողմից ուղղված հարցի պատճենը:

33. Յուրաքանչյուր կողմ արբիտրաժային կոլեգիայի հարցերին իր կողմից տրված պատասխանի պատճենը տրամադրում է արբիտրաժային կոլեգիային և միաժամանակ՝ մյուս Կողմին: Յուրաքանչյուր Կողմի տրվում է մյուս Կողմի պատասխանների վերաբերյալ գրավոր մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն՝ դրանք ստանալուց հետո յոթ (7) օրվա ընթացքում:

Գաղտնիությունը

34. Կողմերը, ինչպես նաև նրանց խորհրդատուները և ներկայացուցիչները, բոլոր արբիտրները, նախկին արբիտրները և նրանց օգնականներն ու աշխատակազմը, ինչպես նաև արբիտրաժային կոլեգիայի լսումներին բոլոր ներկա գտնվողներն ու փորձագետները պետք է պահպանեն լսումների, քննարկումների և կոլեգիայի միջանկյալ զեկույցի, ինչպես նաև արբիտրաժային կոլեգիային ներկայացված բոլոր գրավոր հայտարարությունների և փոխանակված տեղեկությունների գաղտնիությունը: Այն ներառում է ցանկացած տեղեկություն, որը Կողմը ներկայացրել է արբիտրաժային կոլեգիային, և որն այդ Կողմը նշել է որպես գաղտնի: Սույն հավելվածում ոչինչ չի խոչընդոտում Կողմին իր իսկ դիրքորոշումների մասին հայտարարությունները հանրությանը բացահայտելուն այնքանով, որքանով մյուս Կողմի կողմից ներկայացված տեղեկություններին հղում կատարելիս այն չի բացահայտում որևէ այնպիսի տեղեկություն, որը մյուս Կողմի կողմից նշվել է որպես գաղտնի:

Միակողմանի (ex parte) շփումները

35. Արբիտրաժային կոլեգիան չպետք է մի Կողմի բացակայությամբ հանդիպի, լսի կամ այլ կերպ շփվի մյուս Կողմի հետ:
36. Արբիտրներից որևէ մեկը չի կարող մյուս արբիտրների բացակայությամբ մի Կողմի կամ Կողմերի հետ քննարկել վարույթի առարկայի որևէ հայեցակետ:

Լեզուն և թարգմանությունը

37. 5-րդ գլխի (Վեճերի կարգավորումը) համաձայն իրականացվող ամբողջ վարույթը, ինչպես նաև տեղեկությունների փոխանակման ամբողջ գործընթացը, արբիտրաժային կոլեգիային ներկայացվող բոլոր փաստաթղթերը և արբիտրաժային կոլեգիայի կողմից տրվող բոլոր զեկույցները պետք է լինեն անգլերենով:
38. Յուրաքանչյուր Կողմ կրում է պատասխանատվություն՝ վարույթի ընթացքում իր կողմից ներկայացվող ցանկացած փաստաթղթի անգլերեն թարգմանությունն ապահովելու համար:

Ժամկետների հաշվարկը

39. Եթե սույն հավելվածի 7-րդ կանոնի կիրառման հետ կապված՝ Կողմը փաստաթուղթն ստանում է մյուս Կողմի կողմից այն ստանալու օրվանից տարրերվող մեկ այլ օր, ապա ցանկացած ժամկետ, որը հաշվարկվում է այդ փաստաթղթի ստացման օրվա հիման վրա, պետք է հաշվարկվի այդ փաստաթղթի ստացման վերջին ամսաթվից:

Այլ ընթացակարգերը

40. Սույն հավելվածը կիրառելի է նաև 5.12-րդ հոդվածի (Արբիտրաժային կոլեգիայի գեկույցի պահանջների կատարումը) 3-րդ և 6-րդ կետերով, 5.13-րդ հոդվածի (Հատուցումը, արտոնությունների կամ այլ պարտավորությունների կասեցումը) 4-րդ կետով և 5.14-րդ հոդվածի (Համապատասխանության ստուգում) 1-ին կետով սահմանված ընթացակարգերի նկատմամբ: Սույն հավելվածով սահմանված ժամկետները համապատասխանեցվում են հատուկ ժամկետներին, որոնք նախատեսված են արբիտրաժային կոլեգիայի կողմից այդպիսի առանձին ընթացակարգերի շրջանակներում որոշումների ընդունման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 5-2 ԱՐՔԻՏՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

Սահմանումները

1. Եթե այլ բան սահմանված չէ, ապա սույն հավելվածի համար կիրառելի են 5-րդ գլխում (Վեճերի կարգավորումը) և 5-1 հավելվածում (Արքիտրաժի կանոնակարգը) բերված սահմանումները:

Պարտականությունները գործընթացում

2. Վարույթի ամբողջ ընթացքում յուրաքանչյուր թեկնածու և արքիտր պետք է գերծ մնա ոչ պատշաճ վարքագծի դրսևորումից և ոչ պատշաճ վարքագծի դրսևորման տպավորություն ստեղծելուց, պետք է լինի անկախ և անկողմնակալ, պետք է խուսափի շահերի՝ ուղղակի և անուղղակի բախումներից և պահպանի վարքագծի բարձր չափորոշիչներ՝ դրանով իսկ պահպանելով վեճերի կարգավորման մեխանիզմի ամբողջականությունն ու անկողմնակալությունը: Արքիտրները չպետք է ցուցումներ ստանան որևէ կազմակերպությունից, անհատից կամ կառավարությունից արքիտրաժային կոլեգիա ներկայացված հարցերի առնչությամբ:

Տեղեկություններ բացահայտելու հետ կապված պարտավորությունները

3. Նախքան 5-րդ գլխով (Վեճերի կարգավորումը) սահմանված կարգով որպես արքիտր ընտրության հաստատումը, թեկնածուն պետք է բացահայտի ցանկացած շահ, հարաբերություն կամ հարց, որը վարույթի ընթացքում հնարավոր է, որ բացասաբար անդրադառնա իր անկախության կամ անկողմնակալության վրա կամ կարող է ողջամտորեն ընկալվել որպես ոչ պատշաճ վարքագիծ կամ կողմնակալություն: Թեկնածուն այդ նպատակով պետք է գործադրի բոլոր ողջամիտ ջանքերը՝ ցանկացած այդպիսի շահի, հարաբերության կամ հարցի վերաբերյալ տեղեկանալու համար:

4. Ընտրվելուց հետո արքիտրը պետք է շարունակի գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը՝ սույն հավելվածի 3-րդ կետում նշված ցանկացած շահի, հարաբերության կամ հարցի մասին տեղեկանալու համար և պետք է բացահայտի դրանք: Բացահայտման հետ կապված այս պարտավորությունը շարունակական բնույթ ունեցող պարտականություն է, որով պահանջվում է, որ արքիտրը ցանկացած այդպիսի շահ, հարաբերություն կամ հարց, որ կարող է ծագել վարույթի որևէ փուլում, բացահայտի այդ մասին տեղեկանալուց անմիջապես հետո: Արքիտրը պետք է բացահայտի այդպիսի շահերը, հարաբերությունները կամ հարցերը՝ դրանց մասին գրավոր տեղեկացնելով Կողմերին՝ վերջիններիս կողմից քննարկման համար:

5. Շահի, հարաբերության կամ հարցի բացահայտումն իրականացվում է՝ անկախ այն բանից, թե այդ շահը, հարաբերությունը կամ հարցը կոնկրետ կարգավորվում է սույն հավելվածի 3-րդ կամ 4-րդ կետերով կամ թե այն կհանգեցնի բացարկի կամ որակագրկման: Այն դեպքում, երբ թեկնածուն կամ արբիտրը վստահ չեն, թե արդյոք շահը, հարաբերությունը կամ հարցը պետք է բացահայտել, վերջիններիս կողմից սխալը պետք է լինի բացահայտման օգտին:
6. Թեկնածուն կամ արբիտրը Կողմերին տեղեկացնում են միայն սույն հավելվածի փաստացի կամ հնարավոր խախտումների մասին՝ նրանց կողմից քննարկման համար:

Արբիտրների պարտականությունները

7. Արբիտրը պետք է վարույթի ամբողջ ընթացքում ամբողջությամբ և օպերատիվ կարգով, արդար և բարեխղճորեն կատարի իր պարտականությունները:
8. Արբիտրը պետք է հետևի 5-րդ գլխի (Վեճերի կարգավորումը), 5-1-ին հավելվածի (Արբիտրաժի կանոնակարգը) և սույն հավելվածի դրույթների պահանջներին:
9. Արբիտրն ուսումնասիրում է միայն վարույթի ընթացքում ծագող և վճիռ կայացնելու համար անհրաժեշտ հարցերը և չի պատվիրակում այս պարտականությունը որևէ այլ անձի: Արբիտրը չպետք է խոչընդոտի այլ արբիտրների՝ վարույթին համակողմանիորեն մասնակցելու հնարավորությունը:
10. Արբիտրը ձեռնարկում է րոլոր համապատասխան քայլերը՝ ապահովելու համար, որ իր օգնականները և աշխատակազմը տեղեկացված լինեն սույն հավելվածի 2-6-րդ, 8-րդ, 11-րդ և 17-20-րդ կետերի մասին և հետևեն դրանց պահանջներին:
11. Արբիտրը չպետք է հաստատի վարույթի հետ կապված որևէ *ex parte* հարաբերություն:

Արբիտրների անկախությունը և անկողմնակալությունը

12. Արբիտրը պետք է լինի անկախ և անկողմնակալ, խուսափի ոչ պատշաճ վարքագծի կամ կողմնակալության դրսևորման տպավորություն ստեղծելուց, ինչպես նաև չպետք է ենթարկվի սեփական շահերի, արտաքին ճնշումների, քաղաքական նկատառումների, հասարակական պահանջի, որևէ Կողմի նկատմամբ հավատարմության կամ քննադատության մտավախության ազդեցությանը:
13. Արբիտրը չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանձնի որևէ պարտավորություն կամ ընդունի որևէ արտոնություն, որը որևէ կերպ կխոչընդոտի իր պարտականությունների պատշաճ կատարումը կամ կարող է ստեղծել այդպիսի տպավորություն:

14. Արբիտրը չպետք է օգտվի արբիտրաժային կոլեգիայում իր զբաղեցրած դիրքից՝ որևէ անձնական կամ մասնավոր շահ առաջ մղելու համար, և պետք է խուսափի այնպիսի գործողություններից, որոնք կարող են ստեղծել տպավորություն, որ այլ անձինք այնպիսի դիրքում են, որ կարող են ազդեցություն ունենալ իր վրա:

15. Արբիտրը չպետք է թույլ տա նախկին կամ ընթացիկ ֆինանսական, գործնական, մասնագիտական, ընտանեկան կամ սոցիալական կապերի կամ պատասխանատվությունների որևէ ազդեցություն իր վարքագծի կամ որոշման վրա:

16. Արբիտրը պետք է խուսափի որևէ կապ հաստատելուց կամ որևէ ֆինանսական շահ ձեռք բերելուց, որը կարող է ազդել իր անկողմնակալության վրա կամ կարող է ողջամտորեն առաջացնել ոչ պատշաճ վարքագծի կամ կողմնակալության տպավորություն:

Գաղտնիությունը

17. Ոչ մի արբիտր կամ նախկին արբիտր երբևէ չպետք է բացահայտի կամ օգտագործի վարույթի վերաբերյալ կամ վարույթի ընթացքում իրեն հայտնի դարձած որևէ գաղտնի տեղեկություն՝ բացառությամբ այդ վարույթի նպատակներով տեղեկությունը բացահայտելու դեպքերից, և, մասնավորապես, չպետք է բացահայտի կամ օգտագործի նման տեղեկությունը անձնական օգուտ ստանալու կամ այլ անձանց համար օգուտ ստանալու կամ այլ անձանց շահերի վրա ազդեցություն ունենալու համար:

18. Արբիտրը չպետք է որևէ հրապարակային հայտարարություն անի կոլեգիայի՝ ընթացքի մեջ գտնվող վարույթի բովանդակային հարցերի վերաբերյալ:

19. Արբիտրը չպետք է բացահայտի արբիտրաժային կոլեգիայի զեկույցը կամ դրա մասերը՝ մինչև 5-րդ գլխով (Վեճերի կարգավորումը) սահմանված կարգով դրա տրամադրումը:

20. Արբիտրը կամ նախկին արբիտրը երբևէ չպետք է բացահայտեն արբիտրաժային կոլեգիայի քննարկումները կամ որևէ արբիտրի՝ քննարկումների վերաբերյալ տեսակետը կամ թե վարույթի ընթացքում որ արբիտրներն են միացել մեծամասնության կամ փոքրամասնության կարծիքներին:

Ծախսերը

21. Յուրաքանչյուր արբիտր արձանագրություն է վարում և պատրաստում ամփոփ հաշվետվություն ընթացակարգի վրա ծախսած ժամանակի և իր կատարած ծախսերի, ինչպես նաև իր օգնականների ծախսած ժամանակի և

ծախսերի վերաբերյալ:

Նախկին արբիտրների պարտավորությունները

22. Նախկին արբիտրը պետք է խուսափի այնպիսի գործողություններից, որոնք կարող են այնպիսի տպավորություն ստեղծել, որ իր պարտականությունները կատարելիս ինքը եղել է կողմնապահ կամ արբիտրաժային կոլեգիայի որոշումից որևէ օգուտ է ստացել:

Փորձագետների, օգնականների և անձնակազմի պարտականությունները

23. Սույն հավելվածի 2-6-րդ, 8-րդ, 11-րդ, 17-20-րդ և 22-րդ կետերը կիրառելի են նաև փորձագետների, օգնականների և անձնակազմի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 6
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 6.1
Համատեղ կոմիտեն

1. Կողմերը սույնով ստեղծում են Սինգապուրի և Հայաստանի ներկայացուցիչներից կազմված Համատեղ կոմիտե:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո Համատեղ կոմիտեի հանդիպումներ են անցկացվում յուրաքանչյուր երկու տարին մեկ Սինգապուրում կամ Հայաստանում, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ: Համատեղ կոմիտեն համանախագահում են յուրաքանչյուր Կողմից նախարարների մակարդակով ներկայացված պաշտոնատար անձինք կամ նրանց կողմից նշանակված ներկայացուցիչներ: Համատեղ կոմիտեն կազմում է իր օրակարգը:
3. Համատեղ կոմիտեն՝
 - ա) դիտարկում է սույն Համաձայնագրի ընդհանուր գործողությունը.
 - բ) վերահսկում և նպաստում է սույն Համաձայնագրի կիրառմանը և հետազայում դրա հիմնական նպատակների իրագործմանը.
 - գ) վերահսկում է սույն Համաձայնագրի շրջանակներում ստեղծված բոլոր ենթակոմիտեների, աշխատանքային խմբերի և մյուս մարմինների աշխատանքը.
 - դ) քննարկում է Կողմերի միջև առևտրային հարաբերություններն էլ ավելի ամրապնդելու ուղիները.
 - ե) ձգտում է լուծել սույն Համաձայնագրին առնչվող ցանկացած հարց, և
 - զ) քննարկում է սույն Համաձայնագրին առնչվող ցանկացած այլ հարց՝ Կողմերի միջև փոխադարձ համաձայնության առկայության դեպքում:
4. Համատեղ կոմիտեն կարող է՝
 - ա) որոշել ստեղծել կամ լուծարել ցանկացած ենթակոմիտե կամ աշխատանքային խումբ կամ դրան վերապահել պարտականություններ կամ գործառույթներ.
 - բ) որոշել հաղորդակցվել բոլոր շահագրգիռ անձանց և փորձագետների հետ, եթե դա անհրաժեշտ է իր պատասխանատվության շրջանակներում եղող ցանկացած հարցի առնչությամբ.
 - գ) դիտարկել ենթակոմիտեների և աշխատանքային խմբերի կողմից արված առաջարկությունները.
 - դ) Կողմերին ներկայացնել առաջարկություններ, որոնք տեղին է համարում, այդ թվում՝ սույն Համաձայնագրում ցանկացած փոփոխություն կատարելու վերաբերյալ.
 - ե) ընդունել որոշումներ կամ ներկայացնել առաջարկություններ, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով.

- զ) ընդունել սեփական կանոնակարգը, և
 - է) իր գործառույթներն իրականացնելիս ձեռնարկել ցանկացած այլ գործողություն՝ Կողմերի համաձայնության առկայության դեպքում:
5. Համատեղ կոմիտեն իր որոշումներն ու առաջարկությունները մշակում է Կողմերի միջև կոնսենսուսի հիման վրա: Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ գործողության մեջ դնելու Համատեղ կոմիտեի որոշումները:

Հոդված 6.2 **Ենթակոմիտեները և աշխատանքային խմբերը**

Ենթակոմիտեներ կամ աշխատանքային խմբեր կարող են ստեղծվել՝ համաձայն սույն Համաձայնագրի, կամ սույն Համաձայնագրի համաձայն գործող Համատեղ կոմիտեի կողմից: Դրանք Համատեղ կոմիտեի յուրաքանչյուր հերթական ժողովին իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Համատեղ կոմիտե: Ենթակոմիտեի կամ աշխատանքային խմբի ստեղծման կամ գոյության փաստը չի խոչընդոտում Կողմերից յուրաքանչյուրի կողմից որևէ հարց ուղղակիորեն Համատեղ կոմիտե ներկայացնելը:

Հոդված 6.3 **Կապի ապահովման կենտրոնները**

Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կապի ապահովման կենտրոն, որն ընդհանուր առմամբ պատասխանատու է սույն Համաձայնագրով կարգավորվող ցանկացած հարցի վերաբերյալ մյուս Կողմի և Համատեղ կոմիտեի հետ հաղորդակցության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Համաձայնագրի մյուս դրույթներով այլ հատուկ բան է սահմանված: Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին ընթացակարգերին համապատասխան, նշանակում է իր կապի ապահովման կենտրոնը և Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո իննսուն (90) օրվա ընթացքում այդ նշանակման մասին ծանուցում է մյուս Կողմին: Որևէ Կողմի կապի ապահովման կենտրոնի ցանկացած փոփոխության դեպքում տվյալ Կողմն այդ մասին պատշաճորեն ծանուցում է մյուս Կողմին:

Հոդված 6.4 **Այլ համաձայնագրերի հետ կապը**

1. Կողմերը հաստատում են ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում և դրա շրջանակներում կնքված այլ համաձայնագրերի, ինչպես նաև ցանկացած այլ միջազգային համաձայնագրի շրջանակներում, որի կողմ են հանդիսանում, միմյանց նկատմամբ ստանձնած՝ իրենց գործող իրավունքներն ու պարտավորությունները:

2. Այն դեպքում, երբ առկա է անհամապատասխանություն սույն Համաձայնագրի և մյուս համաձայնագրերի միջև, որոնց կողմ են հանդիսանում երկու Կողմերն էլ, համապատասխան Կողմերն անմիջապես խորհրդակցում են միմյանց հետ փոխշահավետ լուծման հասնելու համար՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները:

3. Չնայած 2-րդ կետին՝ եթե սույն Համաձայնագիրը հստակ պարունակում է դրույթներ, որոնցով սահմանված է այնպիսի անհամապատասխանություն, ինչպիսին նշված է 2-րդ կետում, ապա կիրառվում են այդ դրույթները:

Հոդված 6.5

ԱՀԿ օրենսդրության զարգացումը

Եթե ԱՀԿ համաձայնագրի՝ Կողմերի կողմից սույն Համաձայնագիր ներմուծված դրույթներից որևէ մեկում կատարվում է փոփոխություն, ապա Կողմերը, անհրաժեշտության դեպքում, Համատեղ կոմիտեի միջոցով խորհրդակցում են միմյանց հետ՝ փոխշահավետ լուծման հասնելու համար:

Հոդված 6.6

Հարկումը

1. Բացի սույն հոդվածով նախատեսվածից, սույն Համաձայնագրում ոչինչ չի վերաբերում հարկման միջոցներին:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է ազդի Կողմերից որևէ մեկի՝ այն հարկային համաձայնագրերով նախատեսված իրավունքների և պարտականությունների վրա, որոնց կողմ են հանդիսանում Կողմերը: Սույն Համաձայնագրի և որևէ այդպիսի համաձայնագրի դրույթների անհամապատասխանության դեպքում կիրառվում են այդ համաձայնագրի դրույթները՝ անհամապատասխանության մասով: Կողմերի միջև երկկողմ հարկային համաձայնագրի առկայության դեպքում միայն այդ համաձայնագրով նախատեսված իրավասու մարմինները պետք է որոշեն, թե արդյոք առկա է որևէ անհամապատասխանություն սույն Համաձայնագրի և տվյալ համաձայնագրի միջև:

3. 3.11-րդ հոդվածը (Օտարումը) և Բաժին Բ-ն (Ներդրողների և պետության միջև ծագած վեճերի կարգավորում) կիրառելի են հարկման միջոցառումների նկատմամբ այնքանով, որքանով այդպիսի հարկման միջոցները օտարում են համարվում, ինչպես դրանցով նախատեսված է³²: Ներդրողը, որը հարկային

³² 3.11-րդ հոդվածին (Օտարումը) հղում կատարելիս՝ գնահատելու համար, թե արդյոք հարկման միջոցը օտարում է, թե ոչ, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

միջոցի առնչությամբ փորձում է վկայակոչել 3.11-րդ հոդվածը (Օտարումը), 3.15-րդ հոդվածի (Արբիտրաժային վարույթ հարուցելը) համաձայն ծանուցում ներկայացնելիս պետք է, նախ և առաջ, դիմի 5-րդ կետում նկարագրված իրավասու մարմիններին՝ այն հարցի մասով, թե արդյոք այդ հարկման միջոցը օտարում է համարվում: Եթե իրավասու մարմինները չեն համաձայնում քննարկել տվյալ հարցը կամ այն քննարկելու համար համաձայնություն տալուց հետո այդպիսի դիմումից հետո վեց ամսվա ընթացքում չեն համաձայնում, որ այդ միջոցը օտարում չէ, ապա ներդրողը կարող է հայց ներկայացնել արբիտրաժ՝ 3.15-րդ հոդվածով (Արբիտրաժային վարույթ հարուցելը) սահմանված կարգով: Առավել հստակության համար, եթե իրավասու մարմինները, համաձայն սույն կետի, համաձայնում են, որ տվյալ միջոցը օտարում չէ, ապա ներդրողը չի վկայակոչում 3.11-րդ հոդվածը (Օտարումը) որպես հայցի հիմք:

5. Սույն հոդվածի նպատակներով՝

- ա) «իրավասու մարմիններ» նշանակում է՝
 - i) Սինգապուրի դեպքում՝ Ֆինանսների նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը, և
 - ii) Հայաստանի դեպքում՝ Ֆինանսների նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչ:
- բ) «հարկային համաձայնագիր» նշանակում է կրկնակի հարկումից խուսափելու նպատակով կնքված համաձայնագիր կամ այլ միջազգային հարկային համաձայնագիր կամ պայմանավորվածություն:

-
- ա) հարկեր կիրառելն ընդհանուր առմամբ օտարում չէ: Չուտ նոր հարկման միջոցառումներ ներմուծելը կամ ներդրումների առնչությամբ մեկից ավելի պետություններում հարկեր կիրառելն ինքնին օտարում չէ:
 - բ) հարկման միջոցները, որոնք համապատասխանում են միջազգայնորեն ընդունված հարկային քաղաքականություններին, սկզբունքներին և փորձին, օտարում չեն: Մասնավորապես, հարկման միջոցները, որոնք ուղղված են կանխելու հարկերից խուսափելը կամ դրանք շրջանցելը, ընդհանուր առմամբ օտարում չպետք է համարվեն, և
 - գ) հարկման միջոցառումները, որոնք կիրառվում են ոչ խտրական հիմքերով՝ ի տարբերություն կոնկրետ ազգության ներդրողներին կամ կոնկրետ առանձին հարկ վճարողներին թիրախավորելուն, պակաս հավանական են օտարում համարվելու: Հարկման միջոցը օտարում չպետք է համարվի այն դեպքում, երբ ներդրումը կատարվել է, այն արդեն գործում է, իսկ միջոցի վերաբերյալ տեղեկատվությունը իրապարակվել է կամ այլ կերպ հանրության համար հասանելի է դարձել:

Հողված 6.7
Վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակներով
կիրառվող սահմանափակումները

1. Որևէ Կողմի մոտ վճարային հաշվեկշռի հետ կապված, ինչպես նաև արտաքին ֆինանսական լուրջ դժվարություններ առաջանալու կամ դրանց առաջացման վտանգի դեպքում այդ Կողմը կարող է ընդունել և կիրառել սահմանափակող միջոցներ ծառայությունների առևտրի և ներդրումների, ինչպես նաև ծառայությունների առևտրի և ներդրումների հետ կապված վճարումների և փոխանցումների առնչությամբ: Այդ սահմանափակող միջոցները պետք է համապատասխանեն ԱՄՀ համաձայնագրի հոդվածներին:
2. Սահմանափակող միջոցներ կիրառելու կամ ընդունելու կամ դրանցում փոփոխություններ կատարելու դեպքում Կողմերից յուրաքանչյուրն այդ մասին անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմին:
3. 1-ին կետի մեջ նշված սահմանափակող միջոցների ընդունման կամ կիրառման դեպքում Համատեղ կոմիտեի կողմից անհապաղ անցկացվում են խորհրդակցություններ: Այդպիսի խորհրդակցությունների շրջանակում գնահատվում են տվյալ Կողմի վճարային հաշվեկշռի վիճակը և սույն հոդվածի համաձայն ընդունվող կամ կիրառվող սահմանափակող միջոցները՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝
 - ա) արտաքին ֆինանսական և վճարային հաշվեկշռի հետ կապված դժվարությունների բնույթն ու աստիճանը,
 - բ) արտաքին տնտեսական և առևտրային միջավայրը, կամ
 - գ) այլընտրանքային ուղղիչ միջոցները, որոնք կարող են հասանելի լինել: Խորհրդակցությունների շրջանակներում քննարկվում է ցանկացած սահմանափակող միջոցի համապատասխանությունը 1-ին և 2-րդ կետերին: ԱՄՀ-ի կողմից ներկայացված՝ արտարժույթի, դրամային պահուստների և վճարային հաշվեկշռի հետ կապված բոլոր վիճակագրական գնահատականները և այլ փաստերը պետք է ընդունվեն, իսկ եզրակացությունները պետք է հիմնված լինեն ԱՄՀ-ի կողմից տվյալ Կողմի վճարային հաշվեկշռի և արտաքին ֆինանսական դիրքի գնահատման վրա:

Հողված 6.8
Անվտանգության նկատառումներով արվող բացառությունները

- Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ՝
- ա) որևէ Կողմից պահանջի այնպիսի տեղեկատվության ներկայացում, որի բացահայտումն, ըստ այդ Կողմի, հակասում է իր անվտանգության էական շահերին, կամ
 - բ) խոչընդոտի որևէ Կողմի՝ այնպիսի միջոցների կիրառումը, որոնք, ըստ նրա, անհրաժեշտ են միջազգային խաղաղության և անվտանգության

պահպանման կամ վերականգնման հետ կապված իր պարտավորությունների կատարման կամ անվտանգության էական շահերը պաշտպանելու համար³³:

Հոդված 6.9 Տեղեկությունների բացահայտումը

1. Սույն Համաձայնագրով ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ որևէ Կողմից հնարավոր լինի պահանջել մատչելի դարձնել այնպիսի գաղտնի տեղեկություն, որի բացահայտումը կարող է խոչընդոտել օրենքի կատարման ապահովումը կամ որևէ այլ կերպ հակասել հանրային շահին, կամ որը կարող է վնաս հասցնել պետական կամ մասնավոր առանձին ձեռնարկությունների օրինական առևտրային շահերին:

2. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրին համապատասխան որևէ Կողմ մյուս Կողմին (կամ Համատեղ կոմիտեին, ենթակոմիտեներին, աշխատանքային խմբերին կամ որևէ այլ մարմնի) տրամադրում է տեղեկություն, և նրա կողմից այդ տեղեկությունը համարվում է գաղտնի, Կողմը (կամ Համատեղ կոմիտեն, ենթակոմիտեները, աշխատանքային խմբերը կամ որևէ այլ մարմին), ստանալով տեղեկությունը, պետք է պահպանի այդ տեղեկության գաղտնիությունը, օգտագործի այդ տեղեկությունը միայն տեղեկություն տրամադրող Կողմի կողմից նշված նպատակներով և չբացահայտի այն՝ առանց տեղեկություն տրամադրող Կողմի հատուկ գրավոր թույլտվության, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:

Հոդված 6.10 Փոփոխությունները

Կողմերը կարող են գրավոր համաձայնությամբ փոփոխություններ կատարել սույն Համաձայնագրում: Այդպիսի լրացումներն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 6.12-րդ հոդվածում (Ուժի մեջ մտնելը) սահմանված ձևով:

³³ Առավել հստակության համար, սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է խոչընդոտի որևէ Կողմի կողմից այնպիսի միջոց ձեռնարկելը, որն անհրաժեշտ է հանրային կենսական նշանակության այնպիսի ենթակառուցվածքները պաշտպանելու համար, ինչպիսիք են հաղորդակցության, էլեկտրաէներգիայի, ջրային և տրանսպորտային ենթակառուցվածքները, այդ թվում՝ սակայն ոչ բացառապես, այդպիսի ենթակառուցվածքների օպերատորների նկատմամբ սահմանափակումներ կիրառելով և կանխելով այդպիսի ենթակառուցվածքները շարքից հանելուն կամ փչացնելուն ուղղված միտումնավոր փորձը:

Հողված 6.11 Համատեղ մեկնաբանությունները

Կողմերը կարող են համատեղ գրավոր ընդունել սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանությունները, որոնք պարտադիր են Կողմերի և սույն Համաձայնագրով սահմանված բոլոր մարմինների և արբիտրաժային կոլեգիայի համար:

Հողված 6.12 Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ համապատասխան ներպետական ներքին ընթացակարգերի կատարումն ավարտելու մասին գրավոր ծանուցումները փոխանակելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը: Կողմերը կարող են իրենց միջև ձեռք բերված համաձայնությամբ սահմանել այլ ժամկետ:

Հողված 6.13 Տևողությունը

1. Սույն Համաձայնագիրը գործում է անորոշ ժամկետով:
2. Յուրաքանչյուր Կողմ կարող է գրավոր ծանուցել մյուս Կողմին սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:
3. Սույն Համաձայնագիրը դադարեցվում է 2-րդ կետով նախատեսված ծանուցումն ստանալուց 6 (վեց) ամիս հետո: Նշվածը չի հակասում սույն Համաձայնագրում նշված հատուկ դրույթներին, որոնք վերաբերում են Համաձայնագրի դադարեցմանը, մասնավորապես՝ 3.27-րդ հոդվածին (Վերապահում նախատեսող դրույթ):
4. 2-րդ կետի համաձայն՝ ծանուցումն ուղարկելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Կողմերից յուրաքանչյուրը կարող է պահանջել խորհրդակցություն այն մասին, թե արդյոք սույն Համաձայնագրի որևէ դրույթի դադարեցում պետք է ուժի մեջ մտնի ավելի ուշ, քան նախատեսված է 2-րդ կետով: Այդպիսի խորհրդակցություններն սկսվում են Կողմի՝ այդպիսի դիմում ուղարկելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում:

**Հոդված 6.14
Հավելվածները**

Սույն Համաձայնագրի հավելվածները դրա բաղկացուցիչ մասն են կազմում:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում, 2019 թվականի հոկտեմբերի 1-ին, երկու օրինակով, հայերենով և անգլերենով: Մեկնաբանման հետ կապված վեճերի դեպքում անգլերեն տեքստը գերակայում է:

**Հայաստանի Հանրապետության
կողմից՝**



**Սինգապուրի Հանրապետության
կողմից՝**

